

Մ. Ի. Ֆեշխով


Սովետական բարձրագույն
գրականության
ստեղծագործական կամերի
ռուսումապիսում
դրոբլետները



ԳԻՏԱ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

6 (26)





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
Институт литературы им. М. Абовяна

М. И. Фетисов

**Проблемы изучения
творческих взаимосвязей
советской
многонациональной
литературы**

Издательство АН Армянской ССР
ЕРЕВАН · 1959

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ


Մ. Ի. Ֆեֆունյ

891.70.05

Յ

Սովետական բազմագրականության
գրականության
ստեղծագործական կառույցի
ուսումնասիրում
դրոբվածները

A 543



Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ • 1959

Տպագրվում է Հայկական ՍՍՌ-
Գիտությունների ակադեմիայի
Խմբագրական-հրատարակչական
խորհրդի որոշմամբ

1. ՄԻՋԱԶԳԻԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ
ՈՐՊԵՍ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ
ԶԱՐԳԱՅՆԵԼՈՒ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Համաշխարհային գրականության, ինչպես նաև համաշխարհային ամբողջ արվեստի բազմադարյան պատմությունը ցույց է տալիս, որ առանձին ժողովուրդների գեղարվեստական զարգացումը մշտապես տեղի է ունեցել և տեղի է ունենում նրանց գաղափարական-ստեղծագործական ամենասերտ փոխազդեցության ու փոխհարստացման պրոցեսում:

Ամեն մի ժողովրդի գրականություն, լինի բանավոր կամ գրավոր, կազմավորվել, ձևավորվել ու զարգացել է ազգային որոշակի և կոնկրետ պատմական իրականության հողի վրա: Յուրաքանչյուր առաջադիմական գրականություն, ժողովրդի կյանքից է քաղել ոգեշնչումը, գաղափարա-

կան բուլանդակութիւնը, ինքնատիպ թեմաներն ու կերպարները, դեղարվեստական պատկերման անկրկնելիորեն ուրույն դույները: Արտահայտելով իր ժողովրդի ազգային առանձնահատկութիւնները, նրա պատմական կեցութեան ու գործունեութեան փորձը, իմաստութիւնն ու տենչերը՝ մեղ ծանօթ գրականութեաննորից յուրաքանչյուրը ինքնորոշվել է հենց իր համար հատկանշական բոլոր դժերով:

Ազգային գրականութիւնները, այդ ամբողջ լայնամարտութեամբ հանդերձ, զարգացել են և զարգանում են անընդհատ փոխազդեցութեան պայմաններում:

Առաջադիմական, մարդասիրական վեհ գաղափարները. մարմնավորվելով դեղարվեստական կատարյալ կերպարների մեջ, հնուց լայնորեն տարածվել են ամբողջ աշխարհում, հարստացրիլ տարբեր ժողովուրդների ներկայացուցիչների հասարակական գիտակցութիւնը, բարոյա-էսթետիկական պատկերացումները և օգնել նրանց կուլտուր-ստեղծագործական գործունեութեանը: Ահա թե ինչու Հոմերոսի, Դանթեի, Ռաֆայելի, Միքել Անջելոյի, Շեքսպիրի, Ռեմբրանդտի, Սերվանտեսի, Ռուսթավելու, Նիլամու, Ֆիրգուսու, Բախի, Գյոթեի, Շիլլերի, Բայրոնի, Դիկկենսի, Պուշկինի, Բալզակի, Լև Տոլստոյի, Չայկովսկու, Ռեպինի, Չեխովի, Ռոմեն Ռոլանի, Բեռնար Շոուի, Խ. Աբովյանի, Հ. Թումանյանի, Գորկու, Շոլոխովի, Մայա-

կովսկու, ՌաբիՊուրանաթ Տագորի և բոլոր ժողովուրդների համաշխարհային հռչակ վայելող ուրիշ շատ ու շատ գրողների, նկարիչների, երաժիշտների հանճարներով ստեղծված արվեստի կոթողները դարձել են բովանդակ մարդկության հոգևոր սեփականությունը:

Մարդկության հոգևոր հարստությունը կազմող գեղարվեստական արժեքները ժողովուրդները ընկալել են և ընկալում են ոչ թե մեխանիկորեն, այլ իրենց գեղարվեստական ստեղծագործության սեփական, ազգային տրադիցիաների հետ անբախտելիորեն կապված: Խոսքի, նկարչության ու երաժշտության մեծ վարպետների ստեղծագործությունները մտել են նրանց կյանքի մեջ որպես ակտիվորեն գործող ազդակներ, իսկ այդ ազդակների գործողության ուժը, առավել ևս ազգային գրականությունների նվաճումների ընկալման խորությունն ու լրիվությունը միշտ որոշվել և որոշվում են այս կամ այն ժողովրդի ընդհանուր սոցիալ-կուլտուրական զարգացման մակարդակով:

Օրինաչափ է, որ յուրաքանչյուր ժողովուրդ համամարդկային գեղարվեստական կուլտուրայի փանձարանից վերցնելով իրեն անհրաժեշտը՝ ջանում է պարտք չմնալ և իր ուժի համեմատ իր ավանդն է մուծում: Ահա ինչու, երկրորդ՝ ազգային գրողի նորարարական ավանդը համաշխարհային գրականության պատմության մեջ՝ մշտապես հենվել ու հենվում է իր մեծ նախորդների ու ժա-

մանակ:սկիցների գրական փորձը ստեղծագործա-
բար յուրացնելու վրա:

Նույն հաջորդականությունը, որ նշել է Ֆ. Էն-
դելսը Կ. Շմիդտին գրած 1890 թ. հոկտեմբեր 27
թվակիր նամակում՝ փիլիսոփայության մասին,
է՛լ ավելի մեծ շարժում տեղի է ունենում ժողովուրդ-
ների գրական զարգացման պատմության մեջ:

«Բայց որպես աշխատանքի բաժանման առան-
ձին բնագավառ, յուրաքանչյուր դարաշրջանի փի-
լիսոփայությունը իբրև նախագրյալ ոմնի մտածո-
ղական նյութ, որ նախորդներն են հանձնել նրան
և որից բխում է ինքը: Դրանից ստացվում է այս-
պիսի երևույթ, որ ստեղծագույն հետամնաց երկըր-
ները փիլիսոփայության մեջ այնուամենայնիվ կա-
րող են առաջին ջութակը նվագել. XVIII դարում
Ֆրանսիան Անդլիայի նկատմամբ, որի փիլիսո-
փայության վրա էին հենվում ֆրանսիացիները,
այնուհետև Գերմանիան առաջին երկուսի նկատ-
մամբ»¹:

Ուստի, ի դեպ ասած, ողա կլասիկ գրականու-
թյունն էլ, քննադատաբար ընկալելով մարդկու-
թյան գեղարվեստական նվաճումներում եղած ամ-
բողջ լավագույնը և իր երկերում այնպես լրիվ
մարմնավորելով Ռուսաստանի ազատագրական
շարժման հզոր վերելքը, ողաական ազգային բնա-

¹ К. Маркс, Ф. Энгельс, Избранные письма, Госполитиздат, М., 1948, стр. 430.

վորութեան ուրույնութիւնը, ֆետրալական-ճորտատիրական հետամնաց Ռուսաստանի պայմաններում կարողացաւ հասնել դադափարական-գեղարվեստական ծաղկման բացառիկ բարձունքի, իր համաշխարհային պատմական նշանակութեան բարձունքին:

Ճիշտն ասած այս հիմքի վրա էլ խարսխւում է համաշխարհային գրականութեան առաջընթաց դարգացման ամբողջ պատմութիւնը. վաղուց սկիզբ է առել և ընթանում է համաշխարհային պատմա-գրական պրոցեսը, որն իր մեջ է առնում առանձին երկրների ազգային պատմա-գրական պրոցեսների ամբողջ բազմազանութիւնը:

Նախասոցիալիստական հասարակական ֆորմացիաների կուլտուրական, գիտական, գեղարվեստական նվաճումների ու տրադիցիաների ժառանգականութեան ըմբռնումը բնորոշում է Հոկտեմբերեան սոցիալիստական Մեծ ռեուլյուցիայից հետո նոր՝ սովետական կուլտուրա ու գրականութեան ստեղծելու, ձևավորելու ու զարգացնելու պրոբլեմի լենինյան դրույթն ու լուծումը: Վ. Ի. Լենինը խստորեն ու հիմնավորված կերպով դատապարտեց պրոլետկուլտական պրոժեկտորներին, որոնք բացասում էին անցյալի կլասիկ ժառանգութիւնը խնամքով պահպանելու և հմտորեն օգտագործելու անհրաժեշտութիւնը, նշեց ազատագրված սովետական ժողովրդի, որպէս մարդկութեան կուլտուրական ու գեղարվեստական բոլոր արժեք-

ների լիիրավ ժառանգի, կուլտուր-ստեղծագործական գործունեութեան միակ ճիշտ ուղին:

«Պրոլետարական կուլտուրայի մասին» հայտնի բանաձևի նախագծի շորրորդ կետում Լենինը 1920 թ. հաստատում էր. «Մարքսիզմը որպես ուսուցիչուն պրոլետարիատի իդեոլոգիա իր համաշխարհային պատմական նշանակութիւնը նվաճեց նրանով, որ մարքսիզմը բնավ դեն չնետեց բուրժուական դարաշրջանի ամենաարժեքավոր նվաճումները, այլ, ընդհակառակը, յուրացրեց և մշակեց այն ամենը, ինչ արժեքավոր էր մարդկային մտքի և կուլտուրայի ավելի քան երկու հազարամյա զարգացման մեջ: Միայն այդ հիման վրա և այդ իսկ ուղղութեամբ տարվելիք հետագա աշխատանքը, որը ոգեշնչում է պրոլետարիատի դիկտատուրայի՝ որպես ամեն տեսակ շահագործման դեմ պրոլետարիատի վերջին պայքարի, գործնական փորձով, — կարող է ճանաչվել իրոք պրոլետարական կուլտուրայի զարգացում»¹:

Ղեկավարվելով Լենինյան այս իմաստուն ցուցումներով՝ սովետական բազմազգ գրականութիւնը իր զարգացման ընթացքում հենվել է թե՛ ՄՍՌՄ ժողովուրդների և թե՛ ամբողջ աշխարհի դեղարվեստական ստեղծագործութեան լավագույն փորձի վրա, հասել է բազմակողմանի ծաղկման և իր հերթին սկզբնավորել մի նոր, ավելի բարձր

¹ Վ. Լ. Լենին, Երկեր, հ. 31, էջ 380:

էտապէ համաշխարհային գրականութեան պատմութեան մեջ:

Սոցիալիստական ռեալիզմի գրականութիւնը, լինելով աշխարհի ամենաառաջավոր ու ռեւոլյուցիոն գրականութիւնը, սխտեմատիկ կերպով յուրացնում է ամբողջ առաջավոր մարդկութեան գեղարվեստական նվաճումները: Դրանից դուրս չի էլ կարելի պատկերացնել սովետական բազմազգ գրականութեան նորարարական խնդիրների հաջող լուծումը:

Ազգային գրականութիւնների փոխազդեցութեան հնուց գոյութիւն ռմեցող պրոցեսում միշտ առանձնապէս մեծ, ակտիւ ու ազնիւ է եղել այն գրականութիւնների, այն դրոշների ու երկերի դերը, որոնք գեղարվեստական կատարյալ կերպարներով արտացոլել են իրականութեան առաջադիմական երևոյթները, նպաստել են իրենց ժողովուրդների դեպի հասարակական հարաբերութիւնների բարձր ձևերը կատարած առաջընթացին և մարդկութիւնը հարստացրել դաստիարակչական-վերափոխող հզոր գաղափարներով:

Այնպիսի գրականութիւնների և այնպիսի դրոշների ու երկերի ազդեցութիւնը, որոնք համակված են ժողովրդական մասսաների ռեւոլյուցիոն գործողութիւնների պաթոսով, իր դարն ապրածը համարձակորեն մերկացնելու և լուսավոր ապագայի գոնն մի մասնիկը ներկայի մեջ փոխադրելու նորարարական ձգտումներով, — հաճախ

ամբողջ էտապներ է որոշել շատ ժողովուրդներին հասարակական-գրական լարգացման պատմութեան մեջ: Խոսքի ազգային առաջավոր վարպետները, ձևավորվելով առաջադիմական գաղափարապետարվեստական ազդեցութեաններով, ձեռք էին բերում իրենց ստեղծագործական սլոտենցիա: Հնարավորութեանները առավելագուցն լրիվութեամբ դրսևորելու ունակութեուն և, արտահայտելով իրենց ժողովուրդներին հասունացած տենչերը, դառնում էին նրանց ազգային պարծանքը, նրանց հեղինակավոր դաստիարակներն ու ուսուցիչները:

Հին աշխարհի, Վերածնութեան դարաշրջանի, Արևելքի երկրներին կուլտուրայի բարձր վերելքի ժամանակաշրջաններին արվեստն ու գրականութեունը, ինչպես նաև XVIII դարի Ֆրանսիական ռևոլյուցիայի, անգլիական շարտիստների, սուսական ռևոլյուցիոն շարժման հետ կապված ականավոր գրողների ստեղծագործութեունը այս տեսակետից բազմաթիվ ուսանելի օրինակներ են ընձեռում: Առաջավոր գեղարվեստական կուլտուրայի համաշխարհային պատմական դերի, կազմակերպող և ուղղութեուն տվող լայն ազդեցութեան համոզիչ ապացուց կարող է լինել սովետական բազմազգ գրականութեունը:

Գեղարվեստական մարմնավորում գտած առաջադիմական գաղափարների հզոր ու խիստ արդյունավետ ազդեցութեան համեմատութեամբ, սովորաբար իրենց դարն ապրած շահագործող դասա-

կարգերի գաղափարախոսութեան համար բնորոշ
ուեակցիոն գրական երևույթների ազդեցութիւնը
երբեք շատ թե քիչ լայն տարածում չի գտել: Դա
սահմանափակվել է վերջիններիս ազգամիջյան
փոխազդեցութեան սահմաններում, չի ընդգրկել
տարբեր երկրների աշխատավորական լայն մաս-
սաների հոգևոր գործունեութիւնը:

Գրական առաջադիմական և ուեակցիոն ազդե-
ցութիւնների բնույթը, մասշտաբներն ու տևողու-
թիւնը ոչ միայն կախված են տվյալ պատմաշրջ-
անի դասակարգային տարասեռ ուժերի հարաբե-
րակցութիւնից, այլև կարող են ճիշտ հասկացվել
դասակարգային սոցիալիզմի, յուրաքանչյուր ազգա-
յին կուլտուրայի մեջ եղած երկու կուլտուրաների,
իշխող շահագործողական դասակարգերի գաղա-
փարախոսութեան դեմ նրա դեմոկրատական ու սո-
ցիալիստական տարրերի մղած հակամարտութեան
կապակցութեան մեջ: Եթե սոցիալիստական հասա-
րակութեան մեջ բանն սկզբունքորեն այլ է, ապա
սահմանված դրույթը լիովին պահպանում է իր
նշանակութիւնը ՍՍՌՄ, ժողովրդա-դեմոկրատա-
կան երկրների՝ կոմպիտալիստական աշխարհի հետ
ոմնեցած ժամանակակից գրական կապերի մեջ:

Ահա ինչու, երրորդ, երևան են գալիս ու գոր-
ծում ոչ միայն ազգային գրականութիւնների գա-
ղափարական-ստեղծագործական տրագիցիաները,
այլև դրանց հիման վրա էլ մշակվում են միջազ-
գային մասշտաբի էսթետիկական նորմաներ ու

տրադիցիաներ: Այդ տրադիցիաներն ու նորմաները սլարտագիր կարգով ոչ ոքի չեն հանձնարարվում, չեն սահմանափակում ոչ ոքի ստեղծագործական որոնումներն ու խիղախումները, բայց պայմանավորում են գրականութունների փոխազդեցությունները, տարբեր երկրների գրողների բարեկամական մերձեցումը, օգտագործվող սեռերի ու ժանրերի, գրականության առանձին խոսքապատկերման հնարանքների մի որոշ ընդհանրության մշակումն ու սահմանումը, որքան էլ տարբեր ժողովուրդների մոտ դրանք սպեցիֆիկացված լինեն ազգային յուրահատուկ բովանդակությամբ:

Այս կապակցությամբ վերհիշում ենք Կարլ Մարքսի խոսքը «Կապիտալի» առաջին հրատարակության նախաբանից. «Ամեն մի ազգ կարող է և պետք է ուսանի մյուսներից»¹: Իսկ Մարքսի այն դրույթը, թե «արդյունաբերական տեսակետից ավելի զարգացած երկիրը նվազ զարգացած երկրին ցույց է տալիս միայն նրա սեփական ասլազայի պատկերը»², մատնանշում է, որ նմանօրինակ հարաբերակցություն կարելի է նկատել նաև համաշխարհային գրականության պատմության մեջ: Ժողովուրդներն իրարից ոչ միայն գեղարվեստական վարպետություն են սովորում, այլև այս կամ այն ավելի զարգացած ժողովուրդների

¹ К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. XVII, 1931, стр. 8.

² Նույն տեղում, էջ 4:

դրականութեան և արվեստի մեջ հաճախ ուսանելի նմուշներ են գտնում իրենց համար, ջանում են հասնել նրանց հանրաճանաչ կատարելութեանը և նրանց մեջ տեսնում են իրենց իդեալը՝ անշուշտ ստցիալ-սլատմական որոշ իրադրութեան մեջ:

Ակններև է, որ գոյութեան շունի ինչ-որ համաշխարհային վերացական էսթետիկա՝ ժամանակից ու տարածութեանից դուրս, համաշխարհային գրականութեան՝ առանձին ժողովուրդների գեղարվեստական ստեղծագործութեանից դուրս: Իրականութեանը սլատկերելու ռեալիստական մեթոդը, ընդհանուր շատ դժերով հանդերձ, ամեն մի ազգասին գրականութեան մեջ ձևեր է բերում իր անկրկնելի ուրույնութեանը, որ սլայմանալորված է նրա ստեղծագործական տրադիցիաներով, ժողովրդի ազգային բնալորութեան առանձնահատկութեաններով, նրա լեզվի գեղարվեստական սլատկերման միջոցների տարբերիչ հատկութեաններով: Այնուամենայնիվ, աշխարհի ժողովուրդների հրկարատև փոխազդեցութեան հետևանքով գեղարվեստական ստեղծագործութեան ասլարեզում ևս մշակվել ու տարածվել են էսթետիկական ընդհանուր շափանիշներ, որոնց շնորհիվ Ռաֆայելի նկարները, Բալդակի կամ Տոլստոյի վեպերը, Բեթհովենի կամ Չալկովսկու երաժշտութեանը, Տյուլ Տուանի, Լու Սինի կամ Կալիգասալի երկերը գեղեցիկ են բոլոր ազգութեանների մարդկանց համար, նույնիսկ գեղեցիկի մասին ունեցած նրանց սլատ-

կերացման, գեղեցկութեան նրանց ընկալման որոշ տարբերութեամբ հանդերձ:

Վ. Ի. Լենինը, վերլուծելով ռուս մեծ դրող Լև Տոլստոյի ստեղծագործությունը, նրան ծնունդ տրված ժողովրդի ռեուլյուցիոն շարժման կապակցութեամբ, գրել է. Ճորտատերերի տրորած երկրներից մեկում ռեուլյուցիայի նախապատրաստման դարաշրջանը, Տոլստոյի հանճարեղ լուսաբանութեան շնորհիվ, հանդես եկավ որպէս առաջընթաց քայլ ամբողջ մարդկութեան գեղարվեստական դարգացման մեջ»¹: «Պատերազմ և խաղաղություն», «Աննա Կարենինա», «Հարություն» վեպերը կերտողը անկրկնելիորեն ինքնատիպ է ամեն ինչում՝ սկսած իր օգտագործած հայրենի երկրի կենսական նյութից, վերջացրած լեզվով. նա, որպէս արվեստագետ, ժառանգելով ազգային և արտասահմանյան մեծ նախորդների ստեղծագործական ամբողջ փորձը, հասավ աշխարհի բոլոր ժողովուրդների համար հարազատ դարձած իսկական մեծ արվեստի բարձունքին:

Ահա ինչու, շորրորդ, տարբեր ժողովուրդների գրականութուններում կարելի է նմանութեան որոշ գծեր նկատել այնպիսի հիմնական տղղութունների զարգացման մեջ, ինչպէս կլասիցիզմը, սենտիմենտալիզմը, ռոմանտիզմը, քննադատական ռեալիզմը և սոցիալիստական ռեալիզմը:

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 10, էջ 410:

Չկա և չի կարող, իհարկե, լինել ինչ-որ համաշխարհային, վերացական կրթափրկիչ կամ ունիվերսալ, բայց անպայման եղել են և կան աշխարհի գեղարվեստական յուրացման ընդհանուր սկզբունքներ, գրողների աշխարհայացքի ու ստեղծագործական մեթոդի կապեր: Ինչպես որ այս սկզբունքները մշակվել են առանձին ազգային գրականությունների սերտ փոխազդեցությամբ, այնպես էլ գործարկվել են անհունորեն բազմապիսի ձևերով, որոնք կանխորոշվել են տարբեր ժողովուրդների պատմական կոնկրետ պայմաններով և նրանց սեփական գեղարվեստական-ստեղծագործական տրագիդիաներով: Այստեղ, ինչպես և ընդհանրապես ամբողջ համաշխարհային գրականությունից պատմություն մեջ, էական նշանակություն ունի հենց գրողի ստեղծագործական անհատականությունների անկրկնելի սուբյեկտները, որը թույլ է տալիս, օրինակ, գործածել հետևյալ հատկացությունները՝ Շեքսպիրի գրամատուրգիան, Կոռնելի կլասիցիզմը, Պուշկինի ռեալիզմը, Բայրոնի ումանտիզմը, Բալզակի ռեալիզմը, Օտտոփոսկու գրամատուրգիան, Լև Տոլստոյի ռեալիզմը, Ռաբլեի և Սալտիկով-Շչեդրինի երգիծանքը, Է. Թոմանյանի պոեմը, Մ. Գորկու, Մաչկովսկու սոցիալիստական ռեալիզմը և այլն:

Առավել ևս մեծ է գրական ուղղությունների, ժանրերի, ոճերի և մեթոդների նմանությունը, ընդհանրությունը այն ժամանակ, երբ տարբեր ազգա-



յին գրողներ մոտ են որպէս խորասլէս ազգակից
ու միանման իղեալների համար մարանչողներ:
Դա որոշակի երևում է մեր դարաշրջանի սոցիա-
լիստական ուսուցիչի աշխարհի ազգային ինքնա-
տիպ վարպետների դադափարական-գեղարվես-
տական ընդհանրութեան ցայտուն օրինակով, ինչ-
պիսիք են Մ. Գորկին, Վ. Մայակովսկին, Ա. Տոլ-
ստոյը, Մ. Շոլոխովը, Ե. Չարենցը, Պոլ Էլշտարը,
Հովի Արագոնը, Անդրե Ստիլը, Նազըմ Հիքմեթը,
Յուլիուս Զուլիկը, Կ. Բրանդիսը, Ա. Զեգերսը, Ա.
Զապատոցկին և շատ ուրիշներ:

Հետևաբար փոխադարձ կապերի, փոխազդե-
ցութեան ու փոխհարստացման փաստերի սահ-
մանումը չի վերացնում և ամենևին չի նվազեց-
նում գրական ստեղծագործութեան աշխարհի գոր-
ծոնների հանրահայտ նշանակութեանը, ինչպէս
գրականութեան ազգային ինքնատիպութեանը,
սլարտիականութեանն ու ժողովրդայնութեանը:
Ընդհակառակը, այս կամ այն գրականութեան,
առանձին գրողի ստեղծագործութեան սոցիալական
էութեանն ու գեղարվեստական նշանակութեանը
որոշող վերոհիշյալ բոլոր հատկանիշները ման-
րակրկիտ կերպով պարզաբանելով միայն հնարա-
վոր է գիտական օբյեկտիվութեամբ հետազոտել
ստեղծագործական կապերը, պարզել և վերլուծել
դրանց հետևանքները, որոշել ներքին օրինաչա-
փութեանները: Միայն այս բոլոր հանգամանքների
հարակցութեան մեջ գրական կապերն ու փոխհա-

լաբերությունները կհառնեն հետազոտողի առաջ որպէս պայքարով, հակասություններով ու դրանց լուծումով ըի կենդանի պրոցես:

Ահա ինչու, հինգերորդ, ոչ միայն արդարաւսում է համաշխարհային գրականութեան պատմութեան ստեղծումը, այլև անհրաժեշտ է դառնում աշխարհի ժողովուրդների գեղարվեստական փորձի պատմա-համեմատական ուսումնասիրությունը:

Յ. Էնգելսը 1893 թ. հուլիսի 14-ին Յ. Մերինգին գրած նամակում կոնկրետ օրինակներով համոզիչ կերպով փաստարկում էր համեմատական մեթոդի անհրաժեշտությունը պատմական ուսումնասիրություններ ամենլիս:

«Երբ ուսումնասիրում էի գերմանական պատմությունը, — գրում էր Էնգելսը, — որը փնքնին համատարած յղորմելիութուն է, միշտ կարծում էի, որ միայն Ֆրանսիայի պատմութեան համապատասխան դարաշրջանների հետ համեմատելը ճիշտ մասշտաբ է տալիս, որովհետև այնտեղ կատարվում է ճիշտ հակառակն այն բանի, ինչ մեզ մոտ»¹: Եթե համեմատությունը այդքան շատ բան կտրող է տալ սոցիալապես հակադիր երևույթներ զուգահրեւիս, ապա է՛լ ավելի անհրաժեշտ է դա, երբ գրվում ու լուծվում է իրար մոտիկ սզգային կուլտուրաների փոխադարձ կապերի հարցը:

¹ К. Маркс, Ф. Энгельс, Избранные письма, Госполитиздат, М., 1948, стр. 464—465.

«Ռուս-ուկրաինական գրական միասնություն»,
ԵՄ. Ս. Պուշկինը և ադրբեջանական գրականու-
թյունը» նման ախպի ժողովածուներում, Նի-
գամու, Ռուսթավելու, Տ. Շեչենկոյի, Մ. Նալբան-
դյանի, Ի. Ճավճավաձեի, Ի. Ֆրանկոյի, Մ. Ֆ.
Ախունդովի, Աբաջ Կունանբաևի, Գ. Տուկայի և
ՍՍՌՄ ժողովուրդների մյուս կլասիկների ստեղծա-
գործության մասին գրված բազմաթիվ հետազո-
տություններում, ուկրաինա-բելուուսական, ուկրա-
ինա-մոլդավական, թաթար-բաշկիրական, վրաց-
հայ-ադրբեջանական, լատվիա-լիտվական, տա-
ջիկական-ուզբեկական գրական կապերի մասին
հրատարակված հոդվածներում ու զիսերտացիոն
աշխատություններում, ուկրաինական, բելուուսա-
կան, լիտվական, տաջիկական, յակուտական,
մոնղոլական և այլ գրականությունների մասին
լույս տեսած ակնարկներում սխտեմավորված և
բնդհանրացված են բազմաթիվ պատմա-գրական
փաստեր, որոնք բնութագրում են ուրա և մեր երկրի
մյուս բոլոր ազգային գրականությունների փոխ-
ազդեցության վաղեմի ու արդյունավետ պրոցեսը:
Այս բնագավառում գիտական աշխատանքը հե-
տըհետե ավելի է ծավալվում:

Այս բոլոր գրականագիտական հետազոտու-
թյուններում օժանդակ տեղ է գրավում նաև գրա-
կանությունների ուսումնասիրության պատմա-
համեմատական մեթոդը: Կարելի է ենթադրել, որ

մտտակա տարիներին այդ մեթոդը կօգտագործվի սովելի մեծ շափով, բայց, իհարկե, առանց այն գերազնահասաման, առանց այն միտումնավոր և էմպիրիկական ծայրահեղությունների, որոնք առկա են անցյալի ու ներկայի բուրժուական գրականագիտության մեջ:

Ահա ինչու, վերջապես, գրական փոխադարձ կապերի ու հարստացման պատմականորեն զարգացած, համաշխարհային պրոցեսի ճիշտ ըմբռնելը փոխազդեցության նոր ու լայն հեռանկարներ է բաց անում սովետական բազմազգ գրականություն և արտատահմանյան երկրների պրոգրեսիվ գրականությունների համար: Գրականագետները՝ ճիշտ, խորապես իմաստավորված և ուշագրություն կազմակերպված գործունեությունն այս ուղղությունում՝ առանձնապես կարևոր է այժմ, երբ ամբողջ աշխարհի ժողովուրդները պաշտպանում են խաղաղ գոյակցության սկզբունքը և խաղաղության, դեմոկրատիայի, սպասություն կողմնակիցների համաշխարհային շարժումը դարձել է այնպիսի հզոր ուժ, որն ընդունակ է սանձահարել իմպերիալիստական ռեակցիայի նոր պատերազմներ բորբոքելու փորձերը: Այդ գործունեությունն անմիջականորեն կնպաստի այն խնդիրների իրագործմանը, որ գրել է ՍՄԿՊ XX համագումարը. «Զարգացնել ու ամրացնել սովետական ժողովրդի եզ-

բայրական կապերը բոլոր երկրների աշխատավորների հետ»¹։

Վերջին տասնամյակների ընթացքում Մ. Գորկու, Վ. Մալախովսկու, Մ. Շոլոխովի, Ա. Տոլստոյի, Ա. Ֆադեևի, Գ. Ֆուրմանովի և սովետական մյուս գրողների կողմից սոցիալիստական ռեալիզմի մեթոդն օգտագործելու փորձը հարստացրել ու շարունակում է հարստացնել արտասահմանյան առաջադիմական գրողների ստեղծագործությունը, ինչպես որ սրանց գեղարվեստական փորձը չի կարող չնպաստել և իրոք նպաստում է խոսքի սովետական վարպետների ստեղծագործական վերելքին։

«Սովետական գրականությունը արտասահմանյան գրողների համար լինելով ոգեշնչող օրինակ և փորձի աղբյուր նոր՝ առաջավոր, պրոգրեսիվ արվեստի համար մղվող պայքարում, — ասված է Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի սովետական գրողների Համամիութենական Ներկրող համագումարին ուղղած ողջունչի մեջ, — դրա հետ նաև ինքն էլ է հարստանում՝ իր զարգացման ու կատարելագործման ընթացքում օգտագործելով արտասահմանյան առաջադիմական գրողների լավագույն նվաճումները։ Մեր գրողները կարող են և պետք է

¹ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի XX համագումարի բանաձևը ՍՄԿԳ Կենտրոնական Կոմիտեի հաշվետու գեկուցման մասին։

սովելի մեծ շափով օգտագործեն արտասահմանյան բարեկամների արժեքավոր փորձը գեղարվեստական բարձր վարպետության համար մղվող պայքարում»¹:

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի կողք սովետական գրողներին՝ զարգացնել ու ամրացնել փոխադարձ կապերը արտասահմանյան երկրների առաջադիմական գրողների հետ, սովետական բազմազգ գրականության բոլոր գործիչներն ընկալել են որպես ծրագրային ցուցում: Եվ եթե նախորդ տարիներին արդեն նույնանման կապերը երկու կողմերին էլ բավականաչափ կոնկրետ, շուշափելի օգուտ տվեցին, փոխադարձաբար հարբստացրին: նրանց, ապա մոտակա տարիներին հնարավոր կլինի է՛լ ավելի նշանակալի արդյունքներ տեսնել այդ ուղղությամբ, որովհետև դա խարբսխվում է թե՛ անցած դարերում, թե՛ ժամանակակից իրականության մեջ համաշխարհային գրական զարգացման հիմնական օրիաչափություններից մեկի խոր ըմբռնման վրա:

Փոխադարձ սերտ կապեր ունենալու անհրաժեշտությունն փոտակցությունը ժամանակակից իրադրության մեջ ընդգրկում ու համախմբում է սոբսոլջ աշխարհի գրողների ավելի նոր շրջաններ: Տաշքենտում Ասիայի և Աֆրիկայի երկրների գրող-

¹ «Լիտերատուրնայա գաղետա», 1956, դեկտեմբերի 16:

ների կոնֆերանս զումարելու կապակցութեամբ՝ տեղի ունեցած նախապատրաստական խորհրդակցութիւնում (Մոսկվա, 1958, հունիս) որոշվեց «բաղարդի մեջ մտցնել մի հատուկ գեկուցում» «Արեւելք և Արեւմուտք. կուլտուրաների փոխադարձ կապը» թեմայով: Այդ խորհրդակցութեանը մասնակցող Տարա Շանքար Բարենջին և Մուլք Ռաշ Անանդը (Հնդկաստան), Գե Բաու-ցյուանը և Յուան Շույ-պոն (Չինաստան), Յուսեֆ էլ Սիրահին և Մուրսի Սաադ էլ Դինը (ՄԱՌ), Շարաֆ Ռաշիդովը, Ալեքսեյ Սուրկովը և Ալեքսանդր Չախովսկին (ՄՍՌՄ), Յասիե Հոտտան (Ճապոնիա) «Դիմում Ասիայի և Աֆրիկայի գրողներին» փաստաթղթում համոզիչ կերպով հիմնավորում են ստեղծագործական կապերի հնադարյան տրագիցիաները պարզացնելու հիման վրա համախմբվելու կենսական կարևորութիւնը:

«Բազում տարիների բնիացքում ոչ միայն մեր մայր ցամաքները, այլև առանձին երկրներ կարբւմած էին իրարից, և գրողները չէին կարող հարստերել իրար հետ և ստեղծել բարեկամական հարստերութիւններ, որոնք այնքան անհրաժեշտ են ինտելիգենցիայի համար: Եվ բնականաբար Ասիայի և Աֆրիկայի սահմաններից դուրս առանձին գրողների սակավաթիւ գրքերը միայն հայտնի են դարձել:

Սակայն հին ժամանակներում, երբ ամեն մի ուղևորութիւն կապված էր բաղմաթիւ գովարու-

խյունների ու վտանգների հետ, խիզախ մարդիկ այդ երկրներից ճանապարհորդություններ էին կատարում գիտելիքներ որոնելու, ընկալելու մյուս ժողովուրդների վեհ գաղափարները և զուգադրելու դրանք իրենց գաղափարների հետ: Կար ժամանակ, երբ Չինաստանից մինչև Միջին Արևելք ձգվող Մետաքսի մեծ ճանապարհը տեսնում էր փիլիսոփաներ, բանաստեղծներ, նկարիչներ ու վաճառականներ: Հնդկաստանի ափերից մեկնող նավերն ուղղվում էին դեպի Հարավ-Արևելյան Ասիա, Հեռավոր Արևելք, Եգիպտոս, Հունաստան ու Հռոմ՝ տանելով իրենց հետ հավերժական ճշմարտություններ, առասպելիչներ ու հմուտ վարպետների գիտելիքները: Երբեք չէին ամայանում Իրանից Աֆղանըստան, Միջին Ասիա ու Հիմալայները ձգվող ուղիները: Այժմ, երբ հաղորդակցության միջոցներն ավելի կատարյալ են դարձել, շատ ավելի հեշտ է իրադորձել Ասիայի ու Աֆրիկայի դրողների համախմբվելու ջերմ ձգտումը»¹:

Վերևում բերված բոլոր դատողություններից տրամաբանական անհրաժեշտությամբ բխում է այն եզրակացությունը, որ իրենց ժողովուրդների գործերն ու խոհերը, հույսերն ու զգացմունքները դեղարվեստական կերպարների մեջ մարմնավորած սղգային ինքնուրույն գրականությունները միշտ պարզապես են սերտ փոխազդեցությամբ: Մ. Գոր-

¹ «Լիտերատուրնայա գաղեաա», 1958, հունիսի 7:

կին, որ ամբողջ կյանքում անխոնջ կերպով պայ-
քարում էր ժողովուրդների բարեկամության գա-
ղափարները կենսադործելու, նրանց քաղաքական
ու հոգևոր համախմբման համար, իզուր չէր հա-
վաստում, որ գեղարվեստական գրականությունը
գաղափարախոսական որևէ մի ուրիշ միջոցից
ավելի լավ է մի ժողովրդի ծանոթացնում մյուսին¹։
Եվ կերպարների որոշ իմաստով համամարդկային
լեզվի այդ նույն ինտերնացիոնալ միջոցները
առանձնապես բարենպաստ պայմաններ ու հնա-
րավորություններ են ստեղծում ազգային գրակա-
նությունների, ինչպես նաև երասփշտություն, նկար-
չության, քանդակագործության, արվեստի, կինոյի
փոխազդեցության համար։

Գեղարվեստական ստեղծագործության տար-
բեր տեսակների մեծ գործիչները միշտ էլ խորա-
պես ըմբռնել են վեհ գաղափարների ու զգաց-
մունքի, կատարյալ վարպետության արվեստի այդ
համախմբող ուժը։ «Արվեստը միացնում է բոլո-
րին, — գրել է Բեթհովենը Քերուբինիին 1823 թ. նա-
մակում, — բայց նույնքան ավելի սերտորեն միաց-
նում է նա իսկական արվեստագետներին»²։ Ռոմեն
Ռոլանը, բերելով Բեթհովենի այս սրտաբուլի կար-

¹ Տե՛ս Մ. Գորկու նամակը չուվաշ գրող Ա. Ի. Յաու-
լիկինին, Երկերի ժողովածու, 5. 30, էջ 115—116 (սուսե-
րեն)։

² Ռոմեն Ռոլան, «Բեթհովենի կյանքը», Երկերի
ժողովածու (սուսերեն), 5. 2, 1951, էջ 73։

ծիրքը, ինքն էլ ամբողջովին համամիտ է ու պաշտպանում է դա: Այդ մեծ հումանիտա-ինտերնացիոնալիստը իր մասին խոսում էր որպես մի գրողի ու մարդու, որի այս կամ այն ժողովրդի նկատմամբ տաժաժժ սերը անձնավորվում էր նրա մեծագույն գրողների ու արվեստի գործիչների մեջ, ավելին՝ աշխուժանում ու լուսավորվում էր այդ սիրով: 1901 թ. ապրիլի 30-ին ֆրանսիական գրող ու բարեկամ Լուի ժիյեին ուղարկած նամակում Ռ. Ռոլանը հայտարարում է. «Ես սիրում եմ գերմանացիներին, որովհետև շնայած ամեն ինչին, նրանց մեջ մի քիչ Բեթհովենի արյունն էր կա. հավասարապես սիրում եմ անգլիացիներին ի սեր Շեքսպիրի»¹:

Գրականության համախմբող և հարազատացնող ուժի մասին մեծ գրողների և արվեստագետների արտահայտած մտքերը առանձնապես ճիշտ են հնչում մեր ժամանակաշրջանում, երբ գրականությունն ու արվեստը համախմբում են աշխարհի բոլոր ժողովուրդների գեղարվեստական ինտելիգենցիայի տաղանդավոր ներկայացուցիչներին՝ տարբեր հասարակարգ ունեցող երկրների միջև խելամիտ հարաբերությունների հաղթանակի ընդհանուր առաջադիմական ձգտումներով: Այն, ինչ Բեթհովենն ըստ էության հռչակում էր որպես տա-

¹ Ռ ո մ ե ն Ռ ո լ ա ն, «Օրագրերից և նամակներից», «Ինտատրանայա լիտերատուրա» ամսագիր, 1955, № 1, էջ 132—133:

սասանքով ձեռք բերված հավատամք, որպես
բողձակի խղեակ, այժմ հեռոջեան ավելի տեսանե-
լիորեն և հարածուն մասշտաբներով է իրագործ-
վում ու ամենից առաջ Սովետական Միության
բազմազգ գրական պրոցեսի մեծահարուստ բովան-
դակության մեջ:

2. ՍՍՈՄ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1845 թվականին Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Իսպանիայի, Լեհաստանի, Շվեյցարիայի, Հունգարիայի առաջավոր, դեմոկրատական շրջանների ներկայացուցիչները հավաքվեցին Լոնդոնում՝ Ֆրանսիական սեպտեմբերի հուլիսի հռչակման տարեդարձին նվիրված հանդիսավոր ժողովի։ Այդ ժողովի նախապատրաստմանը պորժուն մասնակցություն ունեցան Մարքսն ու Էնգելսը։ Լոնդոնի ժողովը, որ փաստացի սկիզբ դրեց «Դեմոկրատ ելբայրներ» միջազգային ընկերությանը, հանդիսացավ ամբողջ աշխարհի ուսույցիտն ուժերի միջազգային համերաշխության վառ ցույց։ Այդ նշանակալից իրադարձության առթիվ Ֆ. Էնգելսը հանդես գալով «Ազգերի տոնահանդեսը Լոնդոնում» հոդվածով՝ հավաստում էր.

«Ազգերի եղբայրացումը, որ այժմ ամենուրեք հռչակվում է արմատական, պրոլետարական պարտիայի կողմից ի հակադրություն թե՛ հին, ոչնչով չսքողված ազգային էգոիզմի, թե՛ ազատ առևտրի կեղծավոր, մասնավոր-էգոիստական կոսմոպոլիտիզմի, շատ ավելի արժեքավոր է, քան «ճշմարիտ սոցիալիզմի» դերմանական բոլոր տեսությունները:

Ազգերի եղբայրացումը ժամանակակից դեմոկրատիայի դրոշի տակ, որը դուրս գալով ֆրանսիական ուղղուցիայից՝ աճեց-դարձավ ֆրանսիական կոմունիզմը և անգլիական չարտիզմը, ցույց է տալիս, որ մասսաներն ուներանց ներկայացուցիչները ավելի լավ են գիտակցում ժամանակի պահանջները, քան դերմանական տեսաբանները»¹:

Եվ ապա էնգելսը գրում է, որ «դեմոկրատիան մեր օրերում կոմունիզմն է», որ «դեմոկրատիան դարձել է պրոլետարական սկզբունք, մասսաների սկզբունք»²: Եվ թեկուզ մասսաները միշտ չէ, որ պարզ պատկերացնում էին դեմոկրատիայի այդ միակ ճիշտ նշանակությունը, բայց սոցիալական իրավահավասարության իրենց ձգտումն էին արտահայտում: Էնգելսը ցույց էր տալիս ժողովուրդների եղբայրական միաբանություն մասին ասվող

¹ К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. II, 1955, стр. 587.

² Նույն տեղում, էջ 589:

ամեն տեսակ սենտիմենտալ ցնորքների կատարյալ անհիմն լինելը և մատնանշում նրա հաղթանակի միակ իրական ուղին.

«...Բոլոր ազգերի պրոլետարները առանց աղմուկի և ամպագոռգոռ բառերի սկսում են իսկապես պայքարել կոմունիստական դեմոկրատիայի դրոշի ներքո: Չէ՞ որ նրանք լսել պրոլետար են և իսկապես կարող են յանել դա, որովհետև ամեն մի երկրի բուրժուազիա ունի իր շահերը, իսկ քանի որ այդ շահերը նրա համար ամեն ինչից բարձր են, ապա նա ընդունակ չէ ազդու թյունից վեր բարձրանալու...»¹:

Այսպես է գիտական կոմունիզմի մեծ հիմնադիրների աշխատություններում սահմանվել ու հաստատվել ամբողջ աշխարհի ժողովուրդների պատմական զարգացման կարևորագույն օրինաչափություններից, ամենազլխաավոր տենդենցներից մեկը, որ հատկանշական է վերջին հարյուրամյակի հասարակական զարգացման համար:

Այդ օրինաչափությունը սահմանել է ու սահմանում է գրական փոխազդեցության պրոցեսը սովետական բազմազգ գրականության պատմության մեջ: Ժողովուրդների բարեկամությունը, որ զարգացել է կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականության հետևողական իրագործ-

¹ К.: Маркс, Ф. Энгельс, Соч., т. II, 1955. стр. 590 (ընդգծումը հեղինակինն է):

ման շնորհիվ, ընդհանրապես սովետական հասարակության, մասնավորապես նրա կուլտուրայի, դրականության, արվեստի շարժիչ ուժերից մեկն է:

Սովետական Միության ժողովուրդների եղբայրական ընտանիքում, Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ուսուցչիայի հաղթանակի համար մղված համատեղ պայքարում, սոցիալիզմի և կոմունիզմի համատեղ կառուցման պրոցեսում, կուլտուրական ուսուցչիան միասին կատարելու հետեանքով մշակիվեցին ու կենսականորեն անհրաժեշտ դարձան աշխատակցության, փոխադարձ օգնության այնպիսի ձևեր պետական, հասարակական-քաղաքական, ժողովրդատնտեսական և կուլտուր-ստեղծագործության բոլոր ասպարեզներում, որոնք հանդեպին Սովետական Միության համաշխարհային-պատմական հաղթանակներին, Միության կազմի մեջ մանող բոլոր ժողովուրդների բուլմակողմանի ծաղկմանը:

Այդ հիման վրա՝ ամբողջ երկրի կյանքի սոցիալիստական վերափոխման նպատակների ընդհանրության, մարքսիզմ-լենինիզմի ուսուցչիոն գաղափարախոսության, կոմունիստական բարոյախոսության, սովետական հայրենասերների, տարբեր ազգությունների մարդկանց աշխարհայացքը որոշող միասնության հիման վրա զարգանում է ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների հիրավի եղբայրական փոխազդեցությունը նրանց կուլտուրայի, դրականության ու արվեստի զարգացման

գործում: Սովետական երկրում, որտեղ սասրբեր սազգությունների աշխատավորների կենսական բնդհանուր շահերը ներդաշնակորեն զուգորդվում են սազգային լավագույն տրագիցիաների հետ, եղբայրական ժողովուրդների գրականությունները փոխազդում են որպես սովետական բազմազգ գրականության ամբողջական միասնության լիիրավ մասեր:

Այս տեսակետից սովետական բազմազգ գրականությունը մարդկության գեղարվեստական զարգացման գործում՝ վերին աստիճանի ուրույն երեւոյթ է: Նրա կենդանի, ամբողջական միասնության մեջ օրգանապես համախմբվել ու միաձուլվել են (ստանց կորցնելու պատմականորեն մշակված իրենց սազգային ինքնատիպությունը) ուռա, ուկրաինական, վրացական, հայ, ադրբեջանական, տաջիկական գրականությունները իրենց բազմազարյան տրագիցիաներով, լատվիական, լիտվական, էստոնական, բելոռուսական, զաղախական, մոլդասլովական, թուրքմենական, շուվաշական, կարբարդինյան, թաթարական, օսական գրականությունները, որոնք գերազանցորեն ներկայացված են անցած դարի և այս դարի սկզբի առանձին կրասիկների անուններով, և ավելի քան քառասուն ալ գրավոր գրականություն, որոնք արդեն սովետական շրջանում են ստեղծված, — կիրգիզական, մորդվական, յակուտական, ուդմուրտական, մո-

րիական, խաղասական, քրդական, արխաղական
և այլն:

Սովետական գրականությունը վարդանում է
սոցիալիստական իրավակարգի գոյութեամբ և բար-
դավաճմամբ որոշվող հասարակական բազմա-
նյուղ կապերի ու փոխազդեցութեւնների շրջա-
գծում:

Ն. Ս. Խրուշչովը Ֆրանսիական «Ֆիգարո» թեր-
թի թղթակից Ս. Գրուասարի հետ ունեցած իր
գրույցում համոզիչ կերպով ցույց տվեց նրա հե-
տևյալ հարցի մեջ արտահայտված առաջարկի
սխալ լինելը. «Նյութական նվաճումները վերջ ի
վերջո չեն հանգի սոցիալական տարբերութեւն-
ների, ազգային պատնեշների ջնջվելուն և այնպիսի
մի ժամանակի, երբ քաղաքական հակասութեւն-
ները կկորցնեն ամեն մի իմաստ»: «Ո՛չ, — պատաս-
խանեց Ն. Ս. Խրուշչովը, — այդ բանը չի կարող
տևելի սնենալ կապիտալիզմի տիրապետութեան
օրոք, որովհետև «սոցիալական տարբերութեւն-
ները և ազգային պատնեշները հասարակութեան
դասակարգային կառուցվածքի հետևանք են»: Ավե-
լին, «արտադրութեան միջոցների մասնավոր սե-
փականությունը և կապիտալիստական կարգերը
աներևակայելի են առանց ժողովուրդների միջև
թշնամութեւն հրահրելու: Կապիտալիզմը ծնել է
մի ազգի մյուսից գերազանց լինելու, այսպես կոչ-
վող գունավոր ժողովուրդների անլիարժեք լինելու

մարդատյացական «տեսություններ»։ Բոլորովին այլ բան է սոցիալիզմի հաղթանակից հետո։

Ազդային պատենեշները ջնջվում են միայն սոցիալիստական հասարակության պայմաններում։ Սոցիալիզմի օրոք միայն ճիշտ է լուծվում ազգային հարցը։ Հին՝ ցարական Ռուսաստանում, օրինակ, հաճախ տեղի էին ունենում հրեական ջարդեր, հայ-թաթարական կոտորածներ և կապիտալիզմի բորբոքած ազգային թշնամության այլ արյունահեղ դրսևորումներ։ Այդ ամենը ջնջվեց Սովետական իշխանության օրոք։ Երեխաները, սովետական երիտասարդությունը անցյալի այդպիսի երևույթների մասին իմանում են միայն ավագ սերնդի պատմածներից, գրականությունից։

Սոցիալիզմի օրոք բացառվում է ազգային պառակտությունն ու թշնամությունը։ Դա լավ երեւվում է Սովետական Միության, Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկայի և սոցիալիստական մյուս երկրների օրինակից։ Սոցիալիստական հասարակության մեջ մարդը մարդու թշնամին չէ, այլ բարեկամն ու եղբայրը։ Տարբեր ազգությունների պատկանող մարդիկ աշխատում են նույն համերաշխ կոլեկտիվում. այդտեղ չկա մի ազգի թշնամությունը մի ուրիշի նկատմամբ։ Սոցիալիստական հասարակության մեջ գոյություն ունի մարդկանց սոցիալական ու ազգային շահերի կատարյալ ներդաշնակություն։

Սյապիսով, բանը հասարակության նյութական առաջադիմությունը չէ, այլ այն սոցիալական պայմանները, որոնց մեջ զարգանում է հասարակությունը»¹։

Միասնական սոցիալիստական հասարակության սարակելու կառուցողների սոցիալական ու ազգային շահերի կատարյալ ներդաշնակությունը սովետական բազմազգ դրականության ոչ միայն կենարար միջնորդն է, այլև ձևավորվելու կարևորագույն գործոնը։ Բարեկամության ու եղբայրության զգացմունքը հանդես է գալիս ոչ թե որպես ցանկությունների ու կոչերի հանդիսավոր հայտարարություն, այլ որպես իրականում զրևերոված ու ակախվորեն դործող ուժ։ Այդ զգացմունքը հավասար ամբողջամբ կոչում է սոցիալիստական ազգերի բանվորների, կոլտնտեսականների, ինտելիգենցիայի, այդ թվում և դրականության ու արվեստի գործիչների փոխհարաբերությունները։

ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների նյութական առաջադիմությունն ապահովող և նրանց սոցիալիստական միասնական հասարակության մեջ համախումբող սովետական իրավակարգի հաղթանակը Մարքսի, էնգելսի, Լենինի ու Ստալինի ուսմունքի հաղթանակն է։

¹ Ընկեր Ն. Ս. Խրուշչովի զրույցը Ֆրանսիական «Ֆրիգարո» թերթի թղթակցի հետ, «Պրավդա», 1958, մարտի 26։

«Սովետական իրավահարգում ներդաշնակորեն միահյուսվում են բոլոր եղբայրական ժողովուրդների շահերն ու սոցիալին տրոպիցիաները, — հայտարարում է Միկոյա Բաժանը: — Միայն մարքսիզմ-լենինիզմի ուսմունքը, որ մարմնավորվել ու մարմնավորվում է սովետական հասարակության մեջ, կարողացավ ժողովուրդներին տանել դեպի իր սոցիալին կազմի բազմազանությունը հանդերձ, այնպիսի միաձույլ սկսություն ստեղծումը, ինչպիսին է Սովետական Միությունը, որ ժողովուրդների նոր, հիրավի եղբայրական փոխհարաբերությունների օրինակ է տվել մարդկությանը»¹:

Մարքսիզմ-լենինիզմը որպես բանվոր դասակարգի փնտերնացիոնալ դադափարախոսություն, մերջին հաշվով, որոշում է այն մարդկանց կոնկրետ գործողությունները, արարքները, վարքն ու հոգեբանությունը, սրոնք հաստատում ու զարգացնում են իրենց փոխհարաբերությունները: Եվ ժողովրդի մտայնությունների արտահայտողները հանդիսացող գրողների աշխարհայացքի մեջ դաավելի ուժեղ, լրիվ ու վառ է դրսևորվում: Եղբայրության խոր դիտակցումը հանդես է դալիս տարակցու գրողներին համախմբող ուժով:

¹ Միկոյա Բաժան, ժողովուրդների բարեկամությունը գրականությունների բարեկամություն է, «Եղբայրական միասնությունը», հոդվածների ժողովածու, 1954, էջ 11 (ուսուերեն):

Վրաց բանաստեղծ Սիմոն Չիքովանին հիանալի արտահայտեց այն բացարձակապես ճիշտ ըմբռնումը, որ սովետական գրականության բազմազգությունը քարացած, տվյալ ձևակերպումով մի անգամ ընդմիջաւ սահմանափակված հասկացությունն չէ, այլ շարժումով ու զարգացումով լի երեւոյթ.

Գիտեմ՝

Ձի կարելի սահմանափակել

Մեր տեսադաշտը պայմանական մի դժով.

Ուզում եմ, որ հավետ բազմաձևան իմ բարեկամները,

Որ հղբայրության զգացմունքը անվերջ ուռճանա:

(Ազատ թարգմանութուն)

Իրականության մեջ այսպես էլ տեղի է ունենում: Ժողովուրդների ու գրականությունների բարեկամության զգացմունքը անընդհատ հարստանում է, դառնում ավելի բազմապիսի, խոր ու ներդործուն, իր զարգացման նորանոր հնարավորություններով անվախճան:

Եղբայրական գրականությունների միասնության կենսական անհրաժեշտությունն ընդունելը հանդես է գալիս որպես մի գործոն, որը որոշում է ոչ միայն սովետական ազգային գրողներից յուրաքանչյուրի էսթետիկական դիրքերը, այլև նրանց փոխադարձ կապերի ու հարստացման տրակապես նոր բնույթը: Հենց սրա, որպես պարտիայի ազգային քաղաքականության ամենամեծ նվաճում-

ներից մեկի մասին խոսեց Մ. Շուրխովը Կոմունիստական պարտիայի XVІІІ համագումարում արտասանած իր ճառում՝ ճիշտ արտահայտելով սովետական բաղմազդ գրական հասարակայնության կարծիքները.

«Ազգային եղբայրական ռեսպուբլիկաների բանաստեղծների ու արձակագիրների ստեղծագործությունը, որ յուրաքանչեք էր հայտնի ուսւ ժողովրդին, այժմ համաժողովրդական է դարձել: Ազգային գրողների թարմ ձայները միախառնվեցին ուսւ գրականության ձայնին, հարստացրին այն և դարձրին իսկապես միջազգային:

Մեզանից ո՛ւմ ասես չեն հիացրել Ջամբուլի Լաիկական, իրենց պարզությունը առնական երգերը: Ո՛ւմ չի դերել վրաց պոետների բանաստեղծությունների թովիչ քաղցրությունը: Ո՛վ է անտարբեր մնացել Սուլեյման Ստալսկու նախշուն, երգեցիկ տուները կարդալիս: Անգամ թարգմանության մեջ կորցնելով իր սկզբնական գեղեցկության մի մասը՝ այդ գրողների խոսքերը գտնում էին դեպի մեր սրտերը տանող ուղիղ ճանապարհը»¹:

ՍՍՌՄ ժողովուրդների գրականությունների այսպիսի օրդանական միաձուլման հետևանքով չեն կորչում նրանց ազգային ուրույնությունը,

¹ Մ. Շուրխով, ճառ՝ արտասանված համ Կ(ր)Պ XVІІІ համագումարում: Սղաղրական հաշվետվություն, 1939, էջ 473 (սուսերեն):

պատմականորեն դոյացած տարբերությունները, որովհետև հակառակ դեպքում ի շիք կդառնար և նրանց ստեղծագործական փոխազդեցությունը: Սովետական բազմազգ գրականության միասնությունը աչքի է ընկնում ազգային գեղարվեստական տրագիցիաների, ձևերի, խոսքապատկերման սխառեմների, ազգայնապես ուրույն ստեղծագործական անհատականությունների ապշեցուցիչ բազմազանությամբ, հեղինակների անհատական սճով:

Մեծ Հոկտեմբերն ընդմիշտ ոչնչացրեց մարդու կողմից մարդուն շահագործելու և ազգային ճշման հիմքերը: Մեր երկրի բոլոր ժողովուրդները ձեռք բերին կատարյալ ազատություն, պետականորեն ինքնորոշվեցին, ամրացան ու հասան սոցիալիստական սլզդի կամ ժողովրդի դրության: Ժողովուրդների կաշկանդված ու ճնշված ուժերը լայն ասպարեզ ստացան բազմակողմանիորեն դրսևորելու ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական իրենց կուլտուրան, ստեղծելու իրենց կրթության սխառեմը, գիրն ու գրականությունը, ազգային հրատարակչությունները: Յարիզմի ժամանակ ճնշված ազգերի հալածված լեզուները թնակոխեցին իրենց հիրավի դարնանային ծաղկման շրջանը:

Լենինյան ազգային քաղաքականության հետևողական իրագործումը ապահովեց բոլոր ժողովուրդների ակտիվ ու փրավահավասար մասնակ-

ցութչունը նոր կյանքի կառուցմանը, համաշխարհային պատմութեան շարժմանը և իրենց դարավոր հետամնացութեան վերացմանը: Հին կարգերը վերականգնելու նպատակով արված ամեն տեսակ փորձերի դեմ, սոցիալիստական ստեղծագործութեան նորանոր հաղթանակների համար մղված համաժողովրդական հերոսական պայքարում կոփվում ու ամրանում էր սովետական բազմազգ հասարակութեան բարոյա-քաղաքական միասնութչունը:

Սովետական գրականութչո՞ւնը միասնական է սոցիալիստական սեպտիմի մեթոդով, որը նորարարութեան ուղի է բաց անում բոլոր ազգային գրական տրագիկաները հոգատարութեամբ, քննադատորեն օդտադրծելու հիման վրա, միասնական է իրականութեան սոցիալիստական վերականգնման փորձը ընդհանրացնող գաղափարական բովանդակութեամբ: Դրա հետ նաև մեր գրականութչունը բազմազան է ազգային ձևերով, խոսքապատկերման միջոցներով, ոճերի հարստութեամբ, հերոսների ազգային բնավորութչունների գունագեղ արտահայտչութեամբ: Սովետական գրականութեան միասնութչունն ու բազմապիսութչունը դառնում է ՍՍՌՄ ժողովուրդների միասնութեան ու բազմազանութեան հարազատ արտացոլումը:

Մեր սուղեն է ահա տարրեր ժամանակ և տարրեր ազգութեան գրողների հեղինակած էպիկական, դեղարվեստական երկերի մի մեծ ցիկլ՝ Միխայիլ Ծոլոխովի «Նաղաղ Դոնը» և Ալեքսեյ Տոլստոյի

«Տառապանքի ուղիներով», տաշիկական սովետական դրականության հիմնադիր Սադրեգդին Այնի տրիլոգիան («Օղինա», «Դոխունդա», «Սարուկներ»), լատվիական գրող Անդրեյ Ուպիտի «Կանաչ երկիր» և «Լույսի ճեղք ամսերի մեջ» մոնումենտալ կտավները, ազգային-գրական տրագիցիաների գծով նրա արվեստակից Վիլիս Լացիսի «Փոթորիկ» էպոպեն, թաթար գրող Քալի Նաշմիի «Գարնան քամիներ», դաւախ արձակագիրներ Սաբիթ Մուկանովի «Բոտազու» և Մուխթար Աուեղովի «Աբայ», թուրքմեն վիպասան Բերդի Քերբարակի «Վճռական քայլ», հայ Ն. Զարյանի «Հացավան», ուզբեկ գրող Ա. Մուվսաբի («Քուլբեր»), լիտվացի Ա. Գուրայտիս-Գուլյայիլչյուսի «Դարբին Իգնատասի ճշմարտությունը» և «Եղբայրները», ադիգեյցի Տ. Կերաշևի «Երջանկության ճանապարհը», յակուտ Նիկոլա Մորգվինովի «Գարնան օրեր» վեպերը:

Այս և թեմատիկ տեսակետից դրանց մոտիկ ազգային ուրիշ շատ հեղինակների ստեղծագործությունները ընթերցողների առջև բաց են անում սոցիալական փոթորկալի իրադարձությունների, գրամատիկական կոնֆլիկտների, երջանկության կրքոտ որոնումների, անկրկնելիորեն վառ ազգային բնավորությունների աշխարհ:

Դրա հետ նաև տարբեր ժողովուրդների պատմական ճակատագիրն արտացոլող էպիկական ստեղծագործությունները ներծծված են իրականությունը գեղարվեստորեն յուրացնելու ընդհանրու-

Խլամբ և գաղափարական մտահղացումների միասնութեամբ: Այդպիսի էպոպեաները, տրիլոգիաները, վեպերը, որոնք իրենց լույս տեսնելու փաստով իսկ ասպացուցում են ավգային ինքնագիտակցութեան հսկայական աճը, ավգայից են այն կյանքը պատկերելու բնույթով, որտեղ առաջադիմական, սեռչուցիտն սկզբունքները հաղթում են հնի հիմքերը, իրենց գլխավոր հերոսների միջոցով ցույց են տալիս ժողովուրդների ընդհանուր առաջընթացը դեպի սոցիալիստական իդեալներ: Ղազարս բանաստեղծ լուսավորիչ Աբայ Կունանբաևի կերպարը, Շուրխովի հերոսների կամ Ուպիտի լատվիական սեռչուցիտներն են: կերպարները, որոնք արտաքուստ այնքան տարբեր են, գաղափարապես նման են՝ հավաստելով ժողովրդական մասսաների վճռական դերը իսկական երջանկութուն նվաճելու գործում: Սոցիալիստական սեռչուցիտ վերոհիշյալ երկերից յուրաքանչյուրի հերոսների ուրույն պատկերասրահում նշմարվում են հաղթանակած սոցիալիստական սեռչուցիտի արևի շողերը:

Որքան լրիվ ու վառ ծաղիկն սովետական միասնական գրականութեան ավգային բաղադրիչ մասերը, այնքան ավելի ակներև երևան կգա նրա անկրկնելիորեն ուրույն խոսքի վարպետների ստեղծագործական անհատականութունների բազմազանութունը: Արդարև, սոցիալիստական սեռչուցիտը՝ սովետական բազմազգ գրականութեան հիմնական մեթոդը, անսահմանափակ հնարավորութուն-

ներ է ընձեռում՝ երևան բերելու գրողների ինքնուրույն տաղանդը, որոնք իրենց ստեղծագործության մեջ իրենց ժողովուրդների ազգային գրական տրագիցիաներն օրգանապես զուգորդում են սոցիալիստական բովանդակությունը ազգային նկարչագեղ ձևերով ու լիարժեք մարմնավորելու նորարարական ձգտումների հետ:

Ուկրաինական ժողովրդի ազգային գունեղ բնավորությունները, սուր դրամատիզմը վարպետորեն մեղմ լիբրիզմի ու կենսահաստատ հումորի հետ զուգորդելը, ուկրաինական ժողովրդական խոսակցության դիպուկ պատկերացնությունը առանձին արտահայտչություն են տալիս Ա. Կոռնեյչուկի պիեսներին: Օ. Գոնչարի էպիկական ոճը և Յու. Յանովսկու պատմողական մաների ռոմանտիկությունը, Պ. Տիշինայի բանաստեղծությունների լիրիկական արտազերությունը, Մաքսիմ Ռիլսկու ռոմանտիկ պաթոսը, Մ. Բաժանի ստեղծագործությունների փիլիսոփայական ու հրապարակախոսական բնույթը, — ահա թե որքան բազմազան են սոցիալիստական ուսուցիչի ուկրաինական վարպետների ստեղծագործական անհատականությունները: Իրենց էպիկական վիթխարի թափով փառահեղ են Ա. Ուպիտի կտավները լատվիական ժողովրդի պատմական ճակատագրի մասին: Իսկ լատվիական սովետական գրականության նահապետի կողքին կանգնում են և Վ. Լացիսը՝ հեղինակ միշարք վեպերի, որոնք իրենց լարված սյուժեով և

կենսական կոնֆլիկտներ լուծելու սրությամբ միշտ
ակառուսւ էն, և Յան Սուդրարեկալնը, որ իմպրեսիո-
նիստական լիրիկական մանրանկարներից բար-
ձրանալով՝ հասավ քաղաքացիական լիրիկայի հայ-
րենասիրական վճիռ աշխարհազղացողությունը
կերտելուն, և խոսքի նույնքան ինքնուրույն գե-
ղամկարիչներ Ա. Սաքսեն, Ա. Գրիգուլիսը, Ժ. Գրի-
վան:

Ադրբեջանական ժողովրդի արիքուն բանա-
ստեղծ Սամեզ Վուրդունի ներկայանալով այնքան
հրաշալի միահյուսվում էին արևելյան դասական
պոեզիայի արսդիցիաները, աշխարհի սոցիալիս-
տական վերակառուցման ուժանտիկ պաթոսը և
Մայակովսկու ստեղծագործաբար ընկալված հոե-
տորական շեշտերը: Մ. Առեզովի էպոպեն իր գա-
ղափարական-գեղարվեստական հարստությամբ
ամենքի կողմից ճանաչվեց որպէս զազախական
իրականության հանրագիտականորեն լայն պատ-
կերում՝ իր նրբորեն նկարված մարդկային բնավո-
րություններով ու սոցիալական տիպերով: Փիլիսո-
փայական հաղեցածությամբ և շարժողի նրբին
մշակմամբ ապշեցնում է Ավետիք Իսահակյանի
պոեզիան, որ ժամանակին այնքա՛ն սքանչացրել է
Ա. Բլոկին: Բանաստեղծների բազմաձայն խմբե-
րում ի մի են ձուլվում տաջիկ Մ. Թուրսունզադեի,
ուզբեկ Գ. Գուլյամի, վրացիներ Ա. Չիքովանու և Գ.
Վեոնիձեի, բելուսա Ա. Կուլեշովի, դադստանցի
Ս. Համզաթովի, մոլդավացի Ե. Բուկովի, շուվաշ

Պ. Խուզանգայի և լեզվով, ոճով, կերպարների
մնույթով տարբեր ուրիշ շատ բանաստեղծների
յուրահատուկ ձայները:

Նույնիսկ այս ընտրված օրինակներով կարելի
է անհրաժեշտ պատկերացում կազմել սովետական
բազմազգ գրականության բազմազանության մա-
սին: Գրականությունը ճիշտ է արտացոլում ՍՍՌՄ
բոլոր իրավահավասար ժողովուրդների ստեղծա-
գործական յուրերի հիրավի ազատ վերելքը, որոնք
անցյալի խավարի միջով անց են կացրել իրենց
մայրենի լեզուները և ազգային հանճարի էսթետի-
կական անգին գանձերը, որպեսզի զարգացնեն ու
բազմապատկեն դրանք կոմունիստական հասարա-
կություն կերտողների հոգևոր պահանջմունքներին
համապատասխան:

Այս ամբողջ բազմազանությամբ հանդերձ ազ-
գային եղբայրական գրականությունների երկարա-
տև փոխազդեցության պրոցեսում, ինչպես և նրանց
ներկայացրած ժողովուրդների հասարակական
կյանքում մշակվում են ընդհանուր դժեր, սակայն
մշակվում են անքակտելիորեն զուգորդված նրանց
ազգային անհրկնելի ուրույնության հետ:

Համդես գալով ՍՄԿՊ XIX համագումարի ամ-
բիոնից՝ Ա. Ֆադեևը այսպես փաստարկեց սոցիա-
լիստական էսթետիկայի տվյալ սկզբունքային
դրույթը, այսպես ընդհանրացրեց սովետական դա-
րաշրջանի բազմազգ գրական շարժման պրակ-
տիկան.

«Պարտիան ուղեշնչեց գրականությունը դարի
ամենաառաջավոր գաղափարներով՝ կոմունիզմի
վե՞ գաղափարներով, ուշադրության գլխավոր
սուսրկան դարձրեց նոր հասարակութուն կառու-
յող սովետական մարդուն: Պարտիան մի ընտա-
նիքում համախմբեց մեր սովետական գրականու-
թյան բազմազգ ջոկատը, ուր ամեն մի ազգութուն
մտցնում է իր ազգային ձևի երանգը, մեր արվես-
տի վսեմ նպատակները կապեց ազգային գրակա-
նության, և ամենից առաջ ուսս ժողովրդի գրակա-
նության, մարդկության ամբողջ բազմադարյան
գեղարվեստական զարգացման մեջ եղած ամե-
նաառաջավոր, ամենավե՛հ տրագիցիաների հետ և
ցույց տվեց անսահման կատարելագործության ու
նորարարության ուղին՝ սոցիալիստական ռեալիզ-
մի ուղիներով: Սովետական գրականությունը
սլարտիայի այս ուղեշնչող ցուցումներին է պար-
տական այն ամենի համար, ինչ ստեղծել է ինքը»¹:

Ինքնին հասկանալի է, որ անցյալում իրենց
սոցիալ-կուլտուրական զարգացման մեջ առանձ-
նապես հետամնաց ժողովուրդների գրականու-
թյունները, որոնք սովետական շրջանում միայն
անհրաժեշտ պայմանների ձևոք բերին սեփական
գրողներ առաջ քաշելու համար, ավելի զարգացած
գրականությունների հետ փոխադարձ կապեր ունե-
նալու շնորհիվ զգալիորեն ավելի շատ բան են ստա-

¹ «Գրավդա», 1952, հոկտեմբերի 8:

նում: Իսկ ուսս գրականությունը, որ նախառնույնու-
ցիոն շրջանում էլ ունեցել էր գեղարվեստական
վարպետության յայնպիսի հսկաներ, ինչպէս՝
Ա. Պուշկին, Մ. Լերմոնտով, Ի. Կոլտով, Ա. Գրիբո-
վեդով, Ի. Տուրգենև, Մ. Սալտիկով-Շչեդրին,
Ի. Գոնչարով, Լ. Տոլստոյ, Ա. Չեխով և վերջին կես
դարում սոցիալիստական արվեստի հիմնադիր
Մ. Գորկին, Վ. Մայակովսկին, Դեմյան Բեդնին,
Ս. Եսենինը, Մ. Ծոլոխովը, Ա. Սերաֆիմովիչը,
Գ. Ֆուրմանովը, Ա. Տոլստոյը, Ա. Ֆադեևը, Կ. Ֆե-
դինը, Ն. Տիխոնովը, Ա. Տվարդովսկին, Մ. Իսակո-
վսկին և շատ ուրիշներ, — ուսս գրականությունը իր՝
ամբողջ աշխարհում ճանաչված ունակիստական
տրագիցիաներով իրավամբ տուաջատար պիտք է
գրավում ազգային գրականությունների սովետա-
կան սերտ բարեկամության մեջ:

Այնուամենայնիվ ազգային գրողներից յուրա-
քանչյուրն պզում է իրեն սովետական բազմազգ
գրականության իրավահավասար մասնակիցը,
հավասարապէս իրավասու թե՛ ընկալելու իր ստեղ-
ծագործության համար անհրաժեշտ ամեն ինչ, թե՛
իր ստեղծածից լավագույնը մուծելու գեղարվես-
տական կուլտուրայի համամիութենական ընդհա-
նուր պահճարանը: Այս դիտակցությունը ցայտուն
կերպով մարմնավորված է ուզբեկ պոետ Գաֆուր
Գուլյամի հետևյալ թեմայի արտահայտության մեջ.

Մենք իրարից սովորում ենք,

Մենք իրար ուսուցիչն ենք:

Սովետական գրականութեան բազմազգ բնույթը ձևավորվում է մեր բոլոր եղբայրական ժողովուրդների պատմական զարգացման հետ մշտական սերտ փոխազդեցություն պահպանելով: Գրողները տարբեր լեզուներով և հաճախ իրարից անկախ իրենց ինքնուրույն երկերի կերպարների սիտեմում մարմնավորել են հարազատ ժողովուրդների կյանքի վերանորոգման ճշմարտությունը, իսկ այդ ճշմարտությունն իր էությունում միասնական էր լինում ռուսների և տեղաբնակների, վրացիների ու հայերի, զապախների ու տաջիկների և մյուսների մոտ: Որքան ավելի են նրանք բարձրանում սոցիալ-կուլտուրական ծաղկման աստիճաններով, այնքան ավելի է խորանում սովետական գրականության ազգային բազմազգույն տարրերի ներքին, դադարախառն-զեղարվեստական ազգակցությունը և ավելի արդյունավետ է ծավալվում տարբեր ազգությունների գրողների փոխազդեցությունը:

Այսպես է սովետական շրջանի բազմազգ գրական պրոցեսի դիալեկտիկական, որը բուրրովին բացառում է գրողների ազգային ուրույնության համահարթումը: Դա պայմանավորված է նրանց ժողովուրդների կյանքով, որոնք կոմունիզմի համատեղ կառուցման նոր հաջողություններին զուգընթաց՝ ավելի լրիվ են գիտակցում իրենց պատմական ճակատագրի ընդհանրությունը և միասնական ջանքերով ստեղծվող նոր կեցության բերկրանքը: Դրան խթանում է սոցիալիստական ռեալիզմին հա-

ուսկ հարաձուն ձգտումը՝ բարձր արվեստով ար-
տահայտել կյանքի ճշմարտությունն իր ուսույու-
ցիոն զարգացման մեջ, որը հավասարապես թանկ
է ու հարապատ տարբեր ազգությունների պատկա-
նող սովետական մարդկանց և նույնքան պետք է
նրանց հոգևոր աճող պահանջներն ու իմացական-
լսթեսիկական կարիքները բավարարելու համար:

Ուկրաինացիներ Պավլո Տիշինան և Վլադիմիր
Սոսյուրան ուսույուցիոն պոեզիայով ձայնակցում
էին բելոուսներ Յանկա Կուպալային և Յակուբ
Կուլասին. հայ ժողովրդի տաղանդավոր զավակ
Նղիշե Չարենցը և պրոլետարական բանաստեղծ
Հակոբ Հակոբյանը փառաբանում էին Մեծ Հոկ-
տեմբերի հաղթանակը այն ժամանակ, երբ Ուլ-
բեկստանում խամսա Հաքիմզադեն ուսույուցիայի
տարած հաղթանակների հրճվանքը հավաստող իր
առաջին պիեսներն էր գրում: Իրենց բոցաշունչ
խոսքը ժողովրդական զանգվածներին էին ուղղում
չուվաշ Միշի Սեսպելը, բուրյաթ-մոնղոլ Խոցա
Նամսարանը, յակուտ Պ. Սլեսցով-Օյունսկին. վրաց
խոշորագույն բանաստեղծ Գալակտիոն Տաբիձեն
ջերմորեն ողջունեց Հոկտեմբերի հաղթանակը և
չատ շանցած լույս ընծայեց «Ջոն Ռիդ» պոեմը՝
«Տաս օր, որ ցնցեցին աշխարհը» անմոռանալի
գրքի հեղինակի մասին. ադրբեջանական գրակա-
նություն կլասիկ, ուսույուցիոն-դեմոկրատական
«Մուլա Նասրեդդին» հանդեսի հիմնադիր Ջալիլ

Մամեղկուղիվաղեն իր երկերում մերկացնում էր Սովետական փշխանության թշնամիներին:

Սովետական գրականության հիմնադիրների տաղանդը կոփվեց քաղաքացիական պատերազմի քոցերում: Նրա ուսումնասիրում ուսա գրողների կողքին կուլում էին եղբայրական գրականությունների շատ ներկայացուցիչներ: Եվ նորից, սովետի մեծ շափով, տարալեզու վարպետները այդ մարտական միասնությունը ցուցադրեցին Հայրենական Մեծ պատերազմի տարիներին: Բոցաշունչ իրափար բանաստեղծ, «Մոսբիթյան տետրակ» անմահ խոստովանագրքի հեղինակ, ֆաշիստական Գերմանիայի ղնդանում արիաբար զոհված ու հետմահու Լենինյան մրցանակի արժանացած Մուսա Ջալիլի կյանքն ու ստեղծագործությունը սովետական ամբողջ գրականության հերոսական էություն, նրա գաղափարական միաձուլության վառ սիմվոլ է: Այսպիսով, այժմեականության հերոսիկան ոգեշնչում էր տարալեզու գրողներին ստեղծագործելու, և նրանք հերոսական տրագիցիաներ էին ստեղծում թե՛ կյանքում, թե՛ գրականության մեջ:

Ամեն մի նոր էտապի հետ սովետական հասարակության զարգացման զուգընթաց աճում, ամրանում, առնականանում էր և գրականությունը, որ ըստ արժանվույն ձեռք է բերել ճշմարտացի, հերոսական ու մոբիլիվացնող խոսքի համաժողովրդական ամբիոնի հեղինակություն:

Սովետական բազմազգ գրականագիտութեան գործիչները ներկայումս հաջողութեամբ զբաղված են յուրաքանչյուր ազգային գրականութեան պատմութիւնը գրելով. արդեն հրատարակված են ուսական, ուկրաինական, բելուուսական, լատվիական, լիտվական, յակոտական, մորդվական, շուվաշական, ուղմուրտական, դադստանյան սովետական գրականութիւնների մանրամասն ուրվագծեր: Ասովետական բազմազգ գրականութեան վերելքին ուղեկցել է դադստարական հակաուսուցիչների դեմ մղված կատաղի պայքարը՝ բացահայտ հակաուսուցիչի զինակիրներից, բուրժուական նացիոնալիզմի մտքի մարտիկներից սկսած մինչև ֆորմալիստական կեղծ նորարարութեան ստեղծագործորեն ամուլ էպիգոնները, դեկադենտական փուշ ծաղիկների ուշացած շեփորողները: Կոմունիստական պարտիայի կողմից համախմբված ու ոգեշնչված տարակեզու գրողների կուլեկտիվը հաղթանակով դուրս եկավ այդ պայքարից, հաջողութեամբ հաղթահարեց ու հաղթահարում է ստեղծագործական դժվարութիւնները և սոցիալիստական ռեալիզմի մեթոդով պինված՝ ձգտում է անշեղորեն բարձրացնել իր ստեղծագործութիւնների գաղափարական-գեղարվեստական կատարելութիւնը:

Առանց որևէ չափազանցութեան կարելի է ասել, որ սովետական բազմազգ գրականութիւնը, իր միասնութեամբ ու բազմազանութեամբ վերցրած, ցույց է տալիս աշխարհին դարաշրջանի գեղար-

վեստաւական ճշմարտացի տարեգրութիւնը: Զանա-
զան լեզուներով գրված երկերի գլխավոր հերոսը
ժողովուրդն է, հասարակ աշխատավորը, սոցիա-
լիզմ ու կոմունիզմ կերտողը: Եւ որտեղ էլ, ազգա-
յին ինչպիսի ուրույն պայմաններում էլ ծավալվեն
պոեմների, վեպերի, սրիեսների գործողութիւնն ու
սուր կոնֆլիկտները, նրանց հեղինակները պատ-
կերում են նոր մարդկանց ձևավորվելը, իրենց ժո-
ղովրդի ինքնագիտակցութեան հարստանալը, հաս-
տատում են նորի հաղթանակը մեռնող հնի դեմ,
նորարարարար են մարմնավորում կենսական նոր
բովանդակութիւնը նրան համարժեք ազգային գե-
ղարվեստական ձևերով:

Ժողովուրդների բարեկամութիւնը որպէս օրի-
նաչափութիւն, որպէս զրական փոխադարձ հա-
րստացման ու կապերի զարգացման շարժիչ ուժ
Սովետական Միութիւնում հաստատվեց մեծապե-
տական շովինիզմի, բուրժուական նացիոնալիզմի,
կոսմոսոլիտիզմի, ազգային նիհիլիզմի դեմ մղված
կատաղի պայքարում:

Այդ պայքարի նպատակն այն էր, որ բոլոր
ազգութիւնների աշխատավորները, համամիութե-
նական զրական հասարակայնութիւնը պարտիայի
ղեկավարութեամբ վճռականորեն հանդես էին գա-
լիս տապալված ու ջախջախված շահագործող դա-
սակարգերի ռեակցիոն ուժերի դեմ, որոնք ամեն
կերպ փորձում էին խախտել Սովետների երկրի ժո-
ղովուրդների բարեկամութեան հիմքերը, բաժանել,

իրար հակադրել նրանց և այդպիսով խանդարել նրանց միաբանութեանը, նրանց փոխադարձ կապերին ու փոխօգնութեանը՝ նոր կյանք կերտելու, սոցիալիստական նոր կուլտուրա ու գրականութիւն ստեղծելու: Պրոլետարական ինտերնացիոնալիզմի ամենահաղթ գաղափարներին, ժողովուրդների բարեկամութեան հաղթանակած գաղափարախոսութեանը իզուր հակադրվում էին այսպիսի հակաժողովրդական դիրքորոշումներ՝ վերականգնել տիրապետող ազգի մարդկանց արհամարհանքը ճշշված ազգերի մարդկանց նկատմամբ (մի բան, որ կիրառվում է բուրժուական աշխարհում), առանձին ժողովուրդների շափազանց վնասակար նացիոնալիստական ինքնամեկուսացումը սոցիալիստական ուղիով ընթանալու համաժողովրդական շարժումից, իր դարն ասլրած ազգային հնութեան փառաբանումը և սովետական իսկական հայրենասերների ազգային բնավորութիւնների ձեւավորումը որոշող ամբողջ նորի նսեմացումը:

Սոցիալիստական ռեուլյուցիայի կողմից տասպալված շահագործող դասակարգերի գազազած գաղափարախոսները, երազելով վերականգնել մարդու կողմից մարդուն ստրկացնելու իրավակարգը, անմիջականորեն գրականութեան և արվեստի ասպարեզում մոլեգնորեն հակառակում էին եղբայրական ժողովուրդների գաղափարական-ստեղծագործական կապերի ու փոխհարստացման հաստատմանն ու վարդացմանը, սովետական լազ-

մազգ ու համաժողովրդական գրականութեան ծաղկմանը և նրա էսթետիկական առաջավոր ակզբունքներին՝ սոցիալիստական ուսուցիչմին, կոմունիստական պարտիականութեանը, բարձր գաղափարայնութեանն ու իսկական ժողովրդայնութեանը, սովետական միասնական հայրենիքին անձնվիրաբար ծառայելուն, այն նորարարական որոնումներին, որոնց նպատակն է լիարժեք կերպով մարմնավորել ուսուցչի իրականութեան նոր բովանդակութեանը՝ դրան համապատասխան յազգային բազմապիսի ձևերով:

Բուրժուա-նացիոնալիստական կողմնորոշում անկողի հեղինակների գրվածքների համար բնորոշ էին սեպտիստ ումանտիզմի մեթոդը, վաղուց անցյալի գիրկն ընկած հասարակական հարաբերութեանների տեղեկացիոզ իդեալականացումը: Գեղարվեստական տեսակետից ինքնըստինքյան չնչին և այս կամ այն ժողովրդի կենսական շահերի համար խորթ բուրժուա-նացիոնալիստական խրդաբանները խանգարում էին ժողովուրդների միջև գրական կապեր դարգացնելուն:

Բայց այդ ժամանակավոր խոչընդոտը չէր կարող դիմադրել այն պատմական օրինաչափութեան հզոր ուժին, որն արտահայտում էր ժողովուրդների անհաղթահարելի առաջընթացը՝ պատմական պրոգրեսի ուղիով: Սովետական բազմազգ գրականութեանը լարված պայքարում հաղթահարեց այն ամենը, ինչ հակադրում էր ՍՍՌՄ ժողովուրդների

դրական սերտ ու բեղմնավոր բարեկամության
զարգացմանը: Եղբայրական բոլոր գրականու-
թյունների միջև անընդհատ խորացող ճշտասկան
կապերը և փոխհարստացումը, ստուգվելով ու կոփ-
վելով այդ պայքարում, դարձան նրանց զարգաց-
ման օրենքը, իսկ այդ օրենքի ներգործման ուժը
կանխորոշվում է ժողովրդի կյանքի ու շրջապատող
իրականության հետ ունեցած նրանց փոխազդեցու-
թյան պատմական կոնկրետ հանդամանքներով:

Յուրաքանչյուր ազգային գրականության
պատմություն, իր ներքին յուրահատկությամբ հան-
դերձ, որպես կյանքի գեղարվեստական յուրաց-
ման եղանակ, վերջին հաշվով միշտ էլ անխզելիո-
րեն կապված է տվյալ ժողովրդի սոցիալ-անտեսա-
կան և կուլտուրական, ինչպես նաև նրա ուսույու-
ցիոն-ազատագրական շարժման պատմության
հետ: Դրա համար էլ տարբեր ազգությունների
գրողների միջև եղած ստեղծագործական կապերը,
որոնք ծաղում են ոչ թե ինքնաբերաբար, այլ ժողո-
վուրդների կենսական շահերի ընդհանրության ու-
ժով, ավելի ամուր, կայուն ու բեղմնավոր են լի-
նում:

Ռուս կլասիկ գրականությունը, օրինակ, ոչ
միայն ճշմարտացիորեն է՝ արտացոլել Ռուսաս-
տանի ժողովրդական մասսաների ազատագրական
շարժման ուսույուցիոն հզոր թափը, այլև նրանց
հետ խիստ բարդ ու խոր փոխազդեցությամբ մշա-
կել է իր լավագույն գաղափարական-գեղարվես-

տական հատկութիւնները՝ հայրենասիրական բար-
 ձրը պաթոս, մասնավոր սեփականութեան աշխար-
 հի, ինքնակալական-կալվածատիրական ռեժիմի,
 ցարիզմի գաղութարարական-ուսացման քաղա-
 քականութեան մերկացման համարձակութիւն, ան-
 վեհեր ճշմարտացիութիւնը՝ իրականութեան աղա-
 պակոց հակասութիւնները ռեալիստորեն նկարա-
 գրելիս, համաժողովրդական և համամարդկային
 նշանակութիւն ունեցող սուր հարցերը ղենելիս և
 լուծելիս, ժողովրդայնութիւն, որ արդեն անցած
 դարի կեսին աչքի էր ընկնում ռեալիստիստ գեմո-
 կրատիզմով, բացառիկ լայն հումանիզմ, որը վսեմ
 սեր է տաժում սոցիալական ճնշումից տառապող
 բոլոր մարդկանց նկատմամբ և պատկաժ է Գորկու
 անմահ հովատմամբ. «Մա՛րդ. դա հպարտ է հըն-
 շում», — նորարարական անխոնջ սրտնումներ:

Իսկ քանի որ ռուս ժողովրդի ռեալիստիստ-
 սոցիալատագրական շարժումը համապատասխանում
 էր նաև պատմականորեն նրա հետ կապված ժո-
 ղովուրդների սոցիալատիրական ձգտումներին, զու-
 գորդվում էր նրանց ազգային-սոցիալատագրական
 պայքարին, քանի որ առաջավոր ռուս գրականու-
 թիւնն էլ օրգանապէս մտնում էր նրանց հոգևոր
 պահանջմունքների մեջ, ուստի և կարող էր մեծ
 ազդեցութիւն գործել նրանց տաղանդավոր գրող-
 ների վրա: Գրական փոխադարձ կապերը դառնում
 էին անհրաժեշտ ածանցյալ հետևանքը և միաժա-
 մանակ մեր երկրի ժողովուրդների ճակատագրերի,

շահերի, հուշերի այդ իրական ընդհանրութեան
դործոնը:

Ռուսական պատմական պրոցեսի կարևորագույն առանձնահատկություններից մեկն այն էր, որ այն ընթանում էր բազմազգ մի երկրում: Չնայած ցարիզմի գաղութարարական քաղաքականութեանը, ազգային ճնշմանը, Ռուսաստանում բնակվող ժողովուրդները համախմբվում էին ուստի ժողովրդի շուրջը, միասին պայքարում իրենց ազատագրության համար, հաստատում փոխադարձ հարգանքի ու օգնության հարաբերություններ այն սահմաններում, որ հնարավոր էին անցյալում:

Ռուսաստանում դեռևս մինչև ազատագրական շարժման երրորդ՝ պրոյեստարական էտապը, երբ նրա բոլոր ժողովուրդներն սկսեցին միանալ կենինի ստեղծած Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականության հիման վրա, ուստի առաջավոր գրականության և մյուս ժողովուրդների դեմոկրատական բովանդակություն ունեցող գեղարվեստական ստեղծագործության մեջ արտացոլվում էր նրանց աստիճանական մերձեցումը սոցիալ-տնտեսական և կուլտուրական գործունեության ասպարեզում: Ի հակադրություն ինքնակալության քաղաքականության՝ ուստի ժողովուրդը, նրա առաջավոր կուլտուրան ու գրականությունը պաշտպանում էին մյուս ժողովուրդների հետ բարեկամության, փոխադարձ ըմբռնման, հարգանքի, դեպի սքանչելի ապագան

միասին ընթանալու համար միաբանելու հումանիստական սկզբունքները, այն ապագան, երբ, ինչպես Պուշկինն է գրում, «ժողովուրդները երկպառակությունները մոռանալով՝ մեծ ընտանիքի մեջ կմիանան»:

Դեռևս նախառևտրյուցիտն Ռուսաստանի ժողովուրդների շահերի ընդհանրությունը, փոխադարձ բարեկամության նրանց նվիրական ձգտումները գեղարվեստական արտացոլում գտան բազմաթիվ երկերում: Պուշկինը «Հուշարձան» բանաստեղծության մեջ անխախտ կերպով հավատացած է Ռուսիայի բոլոր ժողովուրդների փոխըմբռնմանն ու հոգևոր փոխհարստացմանը: Հարազատ բազմազգ հայրենիքի մարդկանց կերպարներ, բնավորություններ, բարքեր են պատկերել Պուշկինն ու Լեռմոնտովը, Ռիլենն ու Բեստուժև-Մաուլինսկին, Գոպոլն ու Գոնչարովը, Նեկրասովն ու Լև Տոլստոյը: Ռուսաստանի ժողովուրդները թարգմանությունների միջոցով աշխատում էին գեղարվեստական արժեքների փոխանակում կատարել:

Միջազգային եղբայրակցության գաղափարները հզոր են հնչել XII դարի վրաց կլասիկ Շոթա Ռուսթավելու «Վազրենավոր» պոեմում: Ադրբեջանցի հանճարեղ գրող Նիլամի Գյանջևին XII դարում ստեղծել է ռուս մարդկանց հմայիչ կերպարներ: Ռուս և հայ ժողովուրդների մերձեցման ազատաբար ուժի պաթոսով է համակված հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանի «Վերք

Հայաստանի» վեպը: Ուկրաինայի մեծ կորզար Տարաս Շևչենկոյի ստեղծագործութեան մեջ Պրոմէթեոսի հերոսական կերպարը այլաբանորեն նշանակում էր այն ժողովուրդների դառն բախտը, որոնք ցարական պալատի մարտիկների ու շահագործող դատակարգների ճնշման տակ պահել էին ազատութեան և սրայծառ տպագրայի անմար ձգտումը: Ցարի կողմից ուղարկվելով դաղախական տափաստան՝ բարձ տալու շարքային ղինվորի տանջալի գոյութեանը և զրկված լինելով գրեթե ու նկարելու իրավունքից՝ Շևչենկոն իր բանաստեղծությունների մեջ մարմնավորել է տեղացի շքավոր գեղջուկների կերպարներ և ստեղծել նրանց աշխատանքային կյանքի դունեղ սրվագծեր:

Միջազգային համախմբութեան իդեալները պատկերավոր մարմնավորում ստացան Մ. Գորկու և Վ. Մայակովսկու ստեղծագործութեան մեջ, ուկրաինական կլասիկների (Իվան Ֆրանկո, Լեսյա Ռևկաինկա, Միխայիլ Կոցյուբինսկի), լատվիական (Յան Ռայչնիս), հայկական (Հ. Թումանյան, Հակոբ Հակոբյան), լիտվական (Յուլիոս Յանոնիս), թաթարական (Հաբգուլլա Թուքայ) և այլ դրականութեաններում:

Այսպիսով, այն իրադրութեան մեջ, երբ ցարական Ռուսաստանը, ինչպես Լենինն է ասում, ժողովուրդների իսկական բանա էր, ազգային դեմոկրատական գրականութեանները դիմադրում էին մեծապետական շովինիզմի և բուրժուական նացիո-

նալիզմի կողմից հրահրվող միջազգային թշնամու-
թյան և օտարացման հակաժողովրդական զաղա-
փարախոսությանը:

Ավելին, սեուլյուցիոն դեմոկրատները անցած
դարի Ռուսաստանում, ընդհանրացնելով մեր բազ-
մազգ երկրի սոցիալ-կուլտուրական զարգացման
փորձը, արդեն դնում էին միջազգային բարեկա-
մության ինքնատիպ ուսմունքի հիմքերը: Բոցա-
շունչ հայրենասերներ Վ. Բեկինսկին, Ա. Գերցենը,
Ն. Չերնիշևսկին, Ն. Դոբրոլյուբովը այդ ուսմունքի
սկզբունքային գրույթներն էին մշակում՝ պայքա-
րելով մեծապետական շովինիզմի դեմ, Ռուսաս-
տանի և յամբողջ աշխարհի ժողովուրդներին իրա-
յից օտարացնելու և եակցիոն տենդենցների դեմ:

«Կենդանի, դործունյա հայրենասիրությունը
տարբերվում է հենց նրանով, — գրել է Դոբրոլյու-
բովը «Սովրեմեննիկ»-ում, — որ բացառում է ամեն
տեսակ միջազգային թշնամություն... Իսկական
հայրենասերը չի կարող հանդուրժել իր ժողո-
վրդի մասին արվող պարծենկոտ ու հիացական
բացականչությունները, որովհետև նա արհամար-
հանքով է նայում նրանց, ովքեր ջանում են ան-
ջատման սահմաններ դժել ցեղերի միջև: Իսկական
հայրենասիրությունը, որպես մարդասիրության
մասնակի դրսևորում, չի կարող ապրել առանձին
ժողովուրդների հանդեպ տաժվող շարակամության

հետ»¹։ Այսպես հասկացված հայրենասիրությունը հենարան էր դառնում վերացնելու միջազգային առհամանափակությունը՝ հանուն համառուեսական շահերի, հանուն Ռուսաստանի ուսուցչի ու վերափոխման, հենարան կուլտուրական ու գեղարվեստական արժեքների փոխադարձ հարստացման համար։

Միջազգային բարեկամության դեմոկրատական գաղափարախոսությունը (որ ղարգացրին ուսուցչի ու ազատագրական շարժման գործիչները) և առաջավոր գրականությունը Ռուսաստանի նման բազմազգ մի երկրում, հարաճուն ազդեցություն էին գործում նրա պրոգրեսիվ հասարակայնության լայն շրջանների վրա։ Կատարելապես համամիտ լինելով միջազգային բարեկամության գաղափարի պրոպագանդիստներ հանդիսացող ուսուցչների ու մտածողների հետ, հանդես էին գալիս Ուկրաինայի (Տ. Շևչենկո, Ի. Ֆրանկո և այլք), Թելոուսիայի (Կ. Կալինովսկի, Ֆ. Բոգուշևիչ), Հայաստանի (Մ. Նալբանդյան, Հ. Թումանյան), Վրաստանի (Ի. Ճավճավաձե, Ա. Մերեթելի, Ն. Նիկոլաձե), Ադրբեջանի (Մ. Ֆ. Ախունդով), Լատվիայի (Յան Ռայնիս), Ղազախստանի, Թաթարիայի և այլ ժողովուրդների գրականության առաջավոր գործիչները, բոլոր նրանք, ում համար թանկ էին հայ-

¹ Н. Добролюбов, Русская цивилизация, сочиненная Г. Жеребцовым, «Современник», 1958, № 10, стр. 131.

բենի գրականութեան դեմոկրատական իդեալները և բրոնք դիմադրում էին ժողովրդի համար խորթ բուրժուա-սովնական, ֆեոդալա-կղերական կուտուրային: Այդ գաղափարներն անշուշտ գեղարվեստական կամ հրապարակախոսական տարբեր արտահայտութիւնն էին գտնում՝ մայած գրողների աշխարհայացքին, գրական պրոցեսում և դասակարգային պայքարում ունեցած նրանց դերին:

Այս հիման վրա Ռուսաստանում պատմականորեն հնարավոր ձևերով զարգանում էին նաև գրական կապերը ռուսների, ուկրաինացիների, բելոռուսների, հայերի, վրացիների և այլ ժողովուրդների միջև: Հայտնի են, օրինակ, Վրաստանի և Ուկրաինայի բանաստեղծների գրական-ստեղծագործական վաղեմի կապերը: Ուկրաինական մեծ բանաստեղծ և ուկրացիոններ Տարաս Շևչենկոն բարերար ազդեցութիւնն է գործել նեկրասովյան գպրոցի ուսւ բանաստեղծների, ուկրացիոն-դեմոկրատական ուղղութիւնն ունեցող բելոռուս գրողների՝ Կ. Կալիննովսկու, Յ. Բոգուշևիչի, Վրաստանի, չիտվայի և այլ ժողովուրդների առաջավոր պոեզիայի վրա: Հայ հրապարակախոս և գրող Միքայել Նալբանդյանի աշխատութիւնները նշանակալի ավանդ հանդիսացան անցած դարի Ռուսաստանի, ուկրացիոն դեմոկրատիայի ժառանգութեան մեջ: Լատվիական մեծ բանաստեղծ Յան Ռայնիսը իր ստեղծագործութեան մեջ լայնորեն օգտագործեց ռուսական, բելոռուսական և չիտվական ֆոլկլորի

հարստությունները: Ղազարի առաջին կլասիկ Աբալ Կունանբաւը ազդեցություն է գործել կիրգիզական, թաթարական և բաշկիրական գրականությունների վրա:

Այսպիսով, ուրա գրականությունը, որ միշտ սերտորեն ազդել է ժողովրդի ազատագրական պայքարի վրա ու ազդվել նրանից, ոչ միայն հանդես էր դալիս ազգամիջյան բարեկամության դրոշով, այլև անմիջակամորեն ու հաջող կերպով նպաստում էր դրա հաստատմանը: Բազմազգ Ռուսաստանի պատմական զարգացման ուրույն պայմաններում դա յղնում էր համախմբելու բոլոր ժողովուրդներին, ձևավորելու մեր հայրենիքի ժողովուրդների դալիք մեծ ու անաստան բարեկամության դազափարական նախադրչալները:

Համաժողովրդական կենսական շահերի ընդհանրությամբ սնվող այդ փոխադարձ կապերի հղոր շարժիչ ուժը նույն հասարակական գործոններն էին, որոնք որոշեցին երեք հիմնական էտապների ձևավորումն ու հաջորդականությունը Ռուսաստանի ազատագրական շարժման պատմության մեջ: Այստեղ համողիչ կերպով հաստատվում է այն դրույթը, որ առել է Մարքսը Զ. Մեյերին գրած 1871 թ. հունվարի 21 թվակիր նամակում. «Մտքերը միշտ անաւեսանելի թելերով կապված են ժողովրդի մարմնին»¹:

¹ К. Маркс. Ф. Энгельс, Избранные письма, Госполитиздат, 1948, стр. 256.

Արդարև, այն սոցիալական ուժերը, որոնք ակտիվ գործողութեան կոչեցին ուսա առաջին ուսուցչի ունեւորներին՝ դեկաբրիստներին, թեւավորեցին մեծ Պուշկինի և նրա գրական զինակիցներին՝ Գրիբոյէդովի, Լերմոնտովի, Ռիլեևի և շատ ուրիշների հանձարը: Այդ նույն սոցիալական ուժերը արտակարգ լայն թափ հաղորդեցին Ռուսաստանի ժողովուրդների գաղափարական-ստեղծագործական կապերին, և այդ թափը պուշկինյան շրջանի բնորոշ առանձնահատկութիւններից մեկն է:

Ազնվականական ուսուցչի ունեւորութեան տարիներից առաջ երբեք և այդպիսի շափերով չէր ծավալվել ուսա, սեկրախնացի, վրացի, հայ, աղբրբեջանցի և այլ գրողների անձնական բարեկամութիւնը, ինչպես անցած դարի առաջին տասնամյակներին: Դեռևս երբեք ուսա գրականութեան մեջ այդքան լայն տեղ չէր գրավել Ուկրաինացի, Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի, Կովկասի, Ղազախստանի և այլ ժողովուրդների կյանքի թեմատիկան, ինչպես այդ ժամանակ: Դեռևս երբեք ազգային տարբեր լեզուներով չէր հնչել ուսա ժողովրդի ստեղծագործ ու ազատարար մեծութեան գրովատումը, ինչպես ադրբեջանական լուսավորիչ-դեմոկրատ Միրզա Ֆաթալի Ախոմեդովի «Պուշկինի մահւման տութիւլ» (1837) և հայ գրող Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» ստեղծագործութիւններում:

Այն սոցիալական ուժերը, որոնք պայմանա-
վորեցին ռևոլյուցիոն-դեմոկրատական շարժման
հզոր վերելքը՝ Ռուսաստանի սյանծալի զավակներ
Բեկինսկու, Գերցենի, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի
զլխավորությամբ, ավելի լայն ու մասսայական
խափ հաղորդեցին ժողովուրդների գրական կապե-
րին և հոգևոր փոխըմբռնման ու հարստացման մի
նոր, ավելի բարձր էտապի հասցրին: Կյանքի
ծնունդը հանդիսացող գյուղացիական ռևոլյուցի-
այի դաղափարները, ամբողջ բազմազգ երկրի աշ-
խատավորների՝ սարկացման ճորտատիրական
ոխտեմի դեմ մղված դասակարգային բացահայտ
պայքարի հերոսական պաթոսը, սոցիալիստական
լիդեակների ոգեշնչված պրոպագանդան համախում-
բում էին սարբեր ժողովուրդներին միասնական
դեմոկրատական լազերում: Եվ ռևոլյուցիոն դեմո-
կրատիայի դրոշի ներքո հանդես եկող մարտիկների
բազմազգ բանակը համախմբելու վեհ նպատակին
էին ծառայում այն ժամանակ գաղափարական-
գրական կապերը, որոնք լի էին նոր բովանդակու-
թյամբ և սոցիալական ներգործման զգալի ուժ էին
ձեռք բերել:

«Սովրեմեննիկը» դարձավ ռևոլյուցիոն-դեմո-
կրատական պրոպագանդի համաժողովրդական
արիբունա և միջազգային գաղափարական միաս-
նության հեղինակավոր, ազդեցիկ կազմակերպիչ:
Բեկինսկուն, Չերնիշևսկուն, Դոբրոլյուբովին գա-
ղափարական ուսուցիչ ընդունելը հարազատաց-

նում էր պատմական ու ազգային տարբեր պայ-
մաններում հանդես եկող այնպիսի ինքնատիպ
գրողների, ինչպես Տ. Շեչենկոն, Ի. Ֆրանկոն,
Ի. Ճավճավաձեն, Ա. Ծերեթելին, Ն. Նիկոլաձեն,
Լ. Նալբանդյանը, Չ. Վալիխանովը, Ի. Կուրատովը,
Կ. Խետագուբովը, Ֆ. Բողուշևիչը և շատ ուրիշներ:

Տարբեր ժողովուրդների դեմոկրատական ու-
ժերի այդ համախմբման գործում առաջնակարգ
նշանակություն ունեցավ ազգային հարցի մշա-
կումը ռևոլյուցիոն դեմոկրատների աշխատություն-
ներում, ինչպես նաև այնպիսի պրոբլեմների մշա-
կումը, ինչպես ինքնուրույն գրականությունների
ստեղծումը ազգային լեզուներով, դրանց ուրույ-
նությունը, գեղարվեստական թարգմանությունների
ակրունքները, ազգային բնավորությունների ռեա-
լիստական պատկերումը տիպական հանգամանք-
ներում և այլն: Ռևոլյուցիոն-դեմոկրատական
շարժման շնորհիվ արթնացած ժողովուրդների մեջ
առաջ են գալիս ու ակտիվանում դեմոկրատական
ու սոցիալիստական տարրերը, դրա հետ նաև ամ-
բանում են տարերայնորեն ձևավորվող գրական
բազմազգ պրոցեսի սոցիալական հիմքերը: Տար-
բեր լեզուներով ստեղծվում են երկեր, որոնք մար-
մնավորում են ռևոլյուցիոն-դեմոկրատական, լու-
սավորական գաղափարներ՝ ըստ այս կամ այն ժո-
ղովրդի կյանքի պայմանների: Ընդհանուր պրոցե-
սում համախմբված տարբեր ժողովուրդների գրող-
ներ իրենց երկերում ուժը ներածի շափ գնում և

լուծում էին համաժողովրդական խնդիրներ։ Առանձնապես լարված ու սուր պայքար էր տարվում ժողովուրդներին պառակտելու ձգտող ուսակցիոն, նացիոնալիստական տարրերի դեմ։

Այսպիսով, անցած դարի երկրորդ կեսում մշակվեցին ու ձևակերպվեցին գրական կապերի այն կենսունակ տրագիցիաները, որ ժառանգեց և այժմ հաջողությամբ հարստացնում է սովետական բազմազգ գրականութունը։

Բայց որպեսզի գրական բարեկամության տարերային սկզբնավորումը (ինչպես որ դա կազմվեց ու հաստատվեց նախառևոյուցիոն Ռուսաստանի պայմաններում) վերածվեր խոսքի բազմազգ վարպետների գիտակցված և անզուտ գրեկորված աննախընթաց շարժիչ ուժի, անհրաժեշտ էին արմատական վերափոխումներ մեր երկրի հասարակական կառուցվածքի մեջ։

Աշխարհը վերափոխող սոցիալական նոր ուժերը, կազմակերպվելով կենինի ստեղծած պարտիայի կողմից, պատմական գործունեության ասպարեզ բերին ռուսական բանվոր դասակարգին։ Համաշխարհային պրոլետարական ռևոլյուցիոն շարժման կենտրոնը փոխադրվեց Ռուսաստան, որը ուղի հարթեց սոցիալիզմի և կոմունիզմի հաղթանակի համար։

Ապատագրական շարժման երրորդ պրոլետարական էտապում ազգային հարցը Կոմունիստական պարտիայի ծրագրում ստացավ մարքս-լենին-

նչան լուծում՝ որպես սոցիալիստական ռևոլյուցիան նախապատրաստելու և իրագործելու բաղկացուցիչ մաս: Ինքը «պարտիան ծագում է 1898 թվականին որպես «ռուսաստանյան» պարտիա, այսինքն Ռուսաստանի բոլոր ազգությունների պրոլետարիատի պարտիա»¹: Նրանց առաջավոր զավակներն սկսեցին հաղորդակից լինել ռուսական և համաշխարհային կոլտուրայի բարձր նվաճմանը՝ լենինիզմին: Պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարները ամրացնում էին բոլոր ազգությունների աշխատավորների միասնությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, համախմբում նրանց ռուսական բանվոր դասակարգի շուրջը:

Ռուսաստանի ժողովուրդների ազատագրության համար մարտնչողի դերում հանդես եկավ մեծ արվեստագետ Մ. Գորկին: Ծղբայրական ժողովուրդների ռևոլյուցիոն միասնության լենինյան պահանջների սգով Գորկին որոշում է գրականության խնդիրները միջազգային բարեկամության զարգացման գործում, բազմաթիվ գեղարվեստական ու հրատարակատեսակական երկեր է նվիրում գրան, հսկայական կազմակերպական աշխատանք է կատարում ամբողջ Ռուսաստանի գրական ուժերը համախմբելու ուղղությամբ²:

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 19, էջ 297:

² Այս պրոբլեմատիկայի ռուսումնասիրման սկիզբը գրված է Ն. Պիկսանովի «Գորկին և ազգային գրականությունները» զբոսով (ուսերեն), Մ., 1946:

բաշըրջանը գերազանցում են անցած դարերի բոլոր
ունույնացիաներն ու հասարակական ձևերը, ճիշտ
աչգույն էլ համաշխարհային գրականութեան պատ-
մութեան մեջ սոցիալիստական ազգերի գրական
բարեկամութեանը բոլորովին նոր հեռանկարներ
բացեց և իր ստեղծագործական հիանալի արդյունք-
ները ավելցւոյն:

Այսպիսով պարզվում է մեր երկրի ժողովուրդ-
ների գրական կապերի վարդապետան օրինաչափու-
թեանը աչգ կապերի և բազմազգ Ռուսաստանի
պատմութեան հասարակական խոշորագույն երե-
վույթների սերտ փոխազդեցութեան պայմաննե-
րում, սկսած անցած դարի առաջին տասնամյակ-
ներից մինչև սովետական դարաշրջանը: Միաժա-
մանակ երևան է գալիս նաև աչգ օրինաչափու-
թեան էվոլյուցիան, որի հետևանքով կազմվել և
սերնդե սերունդ փոխանցվել են ուսև և եղբայրա-
կան բոլոր ժողովուրդների գրողների ստեղծագոր-
ծական կապերի հավերժ կենդանի տրագիցիաները:
Աչգ օրինաչափութեան, աչգ տրագիցիաների կեն-
սական ներգործոն ուժը ուսև և նրա հետ կապված
ազգային գրականութեանների աչն բնորոշ առանձ-
նահատկութեանն է, որը որոշակիացավ դրանց և
մեր հայրենիքի ժողովուրդների ունույնցիոն ազա-
ւանագրական շարժման օրդանական փոխազդեցու-
թեան հետևանքով:

Մեր բնութագրած սոցիալ-պատմական և պատմագրական պայմաններում որոշվեց ոուս գրականության առաջավոր դերը մեր բազմազգ երկրի հասարակական-գրական շարժման մեջ: Ռուս ժողովրդի գրականությունը դարձավ Ռուսաստանի ժողովուրդների միջև հաստատված ստեղծագործական կապերի ոգին և իրավամբ առաջատար դիրք գրավեց նրանց գրականությունների մեջ:

Ռուս գրականության այդ դերը, մանավանդ անցած դարում, կանխորոշվեց մեր երկրի զարգացման պայմաններով, նրա ռեոլյուցիոն ազատագրական շարժման թափով: Արդեն անցած դարի վերջին տեղի էր ունենում համաշխարհային ռեոլյուցիոն շարժման դեպի Արևելք՝ Ռուսաստան փոխադրվելու պրոցեսը: Այդ պատճառով էլ ոուս առաջավոր գրականությունը նույնպես առանձնակի ուժ ձեռք բերեց թե՛ մասնավոր սեփականատիրական հարաբերությունների մերկացման, թե՛ ժողովրդի հզորությունը որպես պատմական զարգացման վճռական ուժ պատկերելու, աշխատանքի մարդկանց, ռեոլյուցիոն մարտիկների բնավորությունները կերտելու գործում: Ռեալիստական արվեստի ծաղկումը Ռուսաստանում հասավ այնպիսի բարձունքի, որը ոուս սոզգի համար պատվավոր տեղ ապահովեց մարդկության գեղարվեստական զարգացման գործում:

Ռուս գրականությունը հանդես եկավ որպես արիբուն ու կազմակերպիչ այն պայքարում, որ մղում էին ազատագրութեան համար Ռուսաստանի աշխատավորները ի՛նչ ազգութեան էլ սլատկանեին: Ռուս գրականությունը պիմագրում էր ցարիզմի ուսացման քաղաքականութեանը, զարգանում էր Ռուսաստանի և ամբողջ աշխարհի ժողովուրդների բարեկամութեան գրոշի ներքո: Ռուսական քննադատական ռեսլիզմը գաղափարական բովանդակութեան խորութեամբ, գեղարվեստական վարպետութեան բարձր մակարդակով, մերկացնող և կենսահաստատ մարդասիրական պաթոսի և դրա մեջ արտացոլված ուսուցիչ-ազատագրական շարժման թափի հզորութեամբ առանձնապես մոտ ու համահնչուն էր Ուկրաինայի, Բելուսուսիայի, Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, Թաթարիայի, Չուվաշիայի, Ղազախստանի, Տաջիկստանի և այլ ժողովուրդների գրողների ստեղծագործական շահերին:

Ընդհանրացնելով XIX դարի վրաց առաջավոր գրողների փորձը՝ Իլյա Ծավձավաձենն գրում էր. «Կասկածից դուրս է, որ ռուս գրականությունը ղեկավար դեր է կատարել մեր հաջողութեանների մեջ և մեծ ազդեցություն է դրածել այն ամենի վրա, ինչ կազմում է մեր հոգևոր ուժերը և բանականությունը, մտքերն ու զգացմունքները... Այժմ մեր գրականութեան մեջ կամ հասարակական ասպարեզում չկա ո՛չ մի գործիչ և ակտիվ աշխատող,

որը զերծ լինելու ուսուցողականությունը: Եվ զարմանալի չէ դա. ուսուցչական գրականությունը, ուսուցչական գիտությունը լուսավորության գոները բացեցին մեր առջև, իսկ ուսուցչականությունը սնուցեց մեր բանականությունը, կերակրեց մեր միտքը առաջընթացի ճանապարհին: Մեզանից յուրաքանչյուրը պետք է շրթները մոտեցնել աշուղի ազդեցությանը իր հոգեկան ծառավը հագնելու համար: Այլ ճանապարհ չկար: Ուստի և մենք կատարյալ հիմնավորությամբ կարող ենք ասել, որ մեզանից յուրաքանչյուրը սնված է ուսուցչականությամբ, մեզանից յուրաքանչյուրն իր հավատն ու ուսումը դրա վրա է կառուցել և իր հասարակական կյանքի ու գործունեության ուղին աշուղ համապատասխանությամբ է ընտրել»¹:

Ուսուցչականության ղեկավար դերի ըմբռնումը ճավճավաճեն և մյուս ժողովուրդների գրողները մշտապես կապում էին նրա գեղարվեստական փորձի ընկալումը իրենց ազգային գրական սրահիցիաների հետ զուգորդելու անհրաժեշտությունն ըմբռնելու հետ:

Ուսուցչականությունն իր բարձր դաշափարականությամբ, ազատագրական-հայրենասիրական

¹ Իւլյա Ճավճավաճեն, Երկերի Ժողովածու, հ. 2, Թբիլիսի, 1941, էջ 607 (ժրացերեն): Մեջ է բերվում Լեան Աստիխանու «Եղբայրական գրականությունների բարեկամություն» գրքից, Թբիլիսի, 1958, էջ 13 (ուսուցչական):

պախտով, քննադատական ռեալիզմի մեթոդը տա-
րածելով աստիճանաբար միասնական մի պրո-
ցեսի մեջ էր համախմբում երկրի գրական առա-
ջավոր ուժերը, խթանում ընդհանուր գաղափար-
ներ ու թեմաներ հաստատելու միտումը այն տա-
րալեզու գրողների ստեղծագործության մեջ, որոնք
ձգտում էին իրենց ժողովուրդների կյանքը պատ-
կերել ամբողջ Ռուսաստանի մասշտաբով նրանց
համախմբելու տեսակետից: Ազգային գրականու-
թյունների նկատմամբ, նրանց փոխհարստացման
նկատմամբ հակադիր, թշնամական վերաբերմունք
ունեին Ռուսաստանի կառավարող ռեակցիոն շեր-
ջանները: Բայց ցարիզմի դաժան քաղաքականու-
թյունը, ռեակցիոններների բոլոր ջանքերը չէին կա-
րող խանդարել համաժողովրդական միասնություն-
ը, որ ամբացել էր բազմազգ Ռուսաստանի առա-
ջավոր գրողների գաղափարական ընդհանրու-
թյամբ, ազատասիրական նպատակադրությամբ
և հերոսական տոկոնությամբ:

Ռուս գրականությունը չէր ջնջում նրանց ինք-
նատիպությունը, ում վրա ազդում էր: Նա զարթեց-
նում էր Ռուսաստանի ճնշված ժողովուրդների
ստեղծագործական ուժերը, օգնում այդ ուժերին
ձեռք բերելու այս կամ այն ժողովրդի զարգացման
առանձնահատկությունների հետ կապված պրոդ-
րեսիվ նպատակամետությունը:

Ազգային սպեցիֆիկայի պրոբլեմները մշակ-
ված են Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի

աշխատություններում: Սիրել իր ժողովրդին, պատկանել կերպով հասկանալ նրա ուժեղ ու թուշ կողմերը, հարգել ու զնահատել մյուս բոլոր ժողովուրդներին, ճիշտ մոտենալ, զնահատել այն բոլոր լավը, որ նրանցից յուրաքանչյուրը կուտակել է պատմական երկարատև պարգացման ընթացքում, հասկանալ ազգային տարբեր բնավորությունների ուրույնությունը, — ահա թե ինչ էր պահանջում Չերնիշևսկին:

Ռեալիզմը, որ ուսու գրականության ազդեցութեամբ հաստատում էին ազգային գրողները, ուրույն պծեր էր ձեռք բերում ըստ տվյալ ժողովրդի կյանքի պայմանների, նրա գրականության և ժողովրդական ստեղծագործության պարգացման բնույթի: Այսպիսով համառուտական պրական պրոցեսում ստեղծվում էին ազգային ինքնուրույն հոսանքների բազմազանություն և հակադարձ՝ ազգային գրականությունները ուսականի վրա ազդելու նախադրյալներ:

Առաջավոր ուսու գրականության ուղղություն տվող դերը մեր երկրի ազգային գրողների գաղափարական-ստեղծագործական կապերի պրոցեսում հիանալի կերպով հաստատվում է նաև Մ. Գորկու հասարակական-գրական բազմապիսի գործունեության հարուստ փորձով: Հանդես գալով որպես սոցիալիստական ռեալիզմի հիմնադիր, նա պիտավորեց հայրենի երկրի գրական բազմազգ ուժերին: Մեծ գրողի, Լենինի մերձավոր բարեկամ, հասա-

բակական գործիչ և գրական շարժման անխոնջ կազմակերպիչ Մ. Գորկու ամբողջ արածի բացառիկ նշանակությունը ամենից ավելի լրիվ երևում է այն բանից, որ ՍՍՌՄ ժողովուրդների բոլոր գրողները նրան իրավամբ ընդունում են որպես սովետական բազմազգ գրականության նախահայր:

Գորկու, ինչպես նաև հետագայում Վ. Մայակովսկու և ուսս սովետական խոշորագույն գրողների տրագիցիաները սրբազան դարձան բոլոր ազգային եղբայրական գրականությունների համար և կիրառվում են նրանց ժամանակակից ակտուալ թեմաներով գրված երկերում:

Մեծ է Գորկու դերը նաև այն բանում, որ նա, խորապես հասկանալով գրական կապերի օրինաչափությունը, համառորեն աշխատում էր բազմակողմանիորեն զարգացնել և պրակտիկորեն օգտագործել դա մեր երկրի բազմազգ գրականության մեջ, միջազգային ստեղծագործական կապերում: Գրողների Համամիութենական Առաջին համագումարում արած զեկուցման մեջ Գորկին սովետական բազմազգ գրականության որակական ուրույնությունը նշում էր որպես տարբեր ժողովուրդների գրողների մշտական փոխազդեցության հիման վրահաջողության մեջ զարգացող գրականություն¹: Այդ համագումարում Գորկին իր եզրափակիչ ձևում

¹ Մ. Գորկի, «Գրականության մասին», 1953, էջ 713—714, (սուսերեն):

նորից ասաց, որ մեր երկրի տարալեզու գրողները «աշխատում են յուրաքանչյուրը ոչ միայն իր ժողովրդի համար, այլ յուրաքանչյուրը Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միութեան և ինքնավար մարզերի բոլոր ժողովուրդների համար»¹։ Նա համառորեն կոչ էր անում է՛լ ավելի ծավալել ՍՍՌՄ բոլոր գրողների կապերը և առանձնապես շեշտում սովետական բազմազգ գրականութեան պատմութեան փորձի համաշխարհային նշանակութիւնը։ «Այս փոխըմբռնումը, ուժերի այս միասնութիւնն անհրաժեշտ են ոչ միայն Ռեսպուբլիկաների Միութեան բոլոր մարդկանց համար, — ասում էր Գորկին, — դրանք անհրաժեշտ են որպէս դաս և օրինակ երկրագնդի ամբողջ աշխատավոր ժողովրդի համար, որի դեմ նրա հին թշնամին՝ կապիտալիզմը, կազմակերպւում է նոր դիմակով՝ ֆաշիզմով»²։

Ա. Ս. Շչերբակովին գրած 1935 թ. մարտի 21-ի թվակիր նամակով Գորկին առաջարկում էր ստեղծել հայ, ադրբեջանական, վրաց, թաթարական, ուկրաինական և այլ գրականութիւնների պատմութեան ուրվագծեր։ Փաստարկելով այդ առաջարկութիւնը, որ այժմ իրագործւում է եղբայրական ժողովուրդների գրականութիւնների ակնարկաշարով, Գորկին նշում էր, որ դա կօգնի մեր բոլոր

¹ Մ. Գորկի, «Գրականութեան մասին», 1953, էջ 728 (սուսերեն)։

² Նույն տեղում, էջ 729։

գրողների, այդ թվում և ուսաների, ստեղծագործական փոխհարստացմանը:

Սոցիալիստական ազգերի ու ժողովուրդների գրողների համար անխախտ օրենք է՝ մշտապես, լրջմտորեն դիմել ուսու դասական ու սովետական գրականության հարստությունը ստեղծագործաբար ընկալելուն և օգտագործելուն:

«Աբաջ» հիանալի վեպի հեղինակ Մուխթար Աուեզովը, օրինակ, հայտարարում է. «Այն օրվանից, ինչ ուսաց լեզուն դարձավ իմ երկրորդ մայրենի լեզուն, Պուշկինը, Գոգոլը, Տուրգենևը, Սալտիկով-Շչեդրինը, Տոլստոյը, Չեխովը, Կորոլենկոն, Գորկին դեռ վաղ շրջանից դարձան իմ հոգևոր կյանքի մշտական լուսատուները, շողշողուն ուղեկիցները»¹:

Ազգային գրողների կապերը ուսու գրականության հետ, որոնք զարգացել են անցած դարի ընթացքում և մանավանդ սովետական ժամանակաշրջանում, նպաստեցին նաև նրանց փոխադարձ հարստացմանը: Այս տեսակետից ուսու գրականության հետ ունեցած կապերը ուսանելի կերպով ցույց տվին, թե ինչ է տալիս գրական համագործակցությունը պատմականորեն իրար կապված ժողովուրդներին:

Ազգային գրական բանաստեղծ և գրամատուրգ Աամեդ Վուրդունը, որպես սովետական բազմազգ

¹ «Սովետական կուլտուրա», 1954, հուլիսի 15:

գրականութեան սկանաւոր ներկայացուցիչներինց մեկը, ընդհանրացնելով գրական կապերի զարգացման փորձը, իրավացիորեն հավաստում է.

«Սովետական Միութեան ժողովուրդների պրականութեանների զարգացման վճռական պայմաններից մեկը նրանց սխտեմատիկ կապն ու փոխհարստացումն է: ՍՍՌՄ եղբայրական ժողովուրդներից որեւէ մեկի: գրականութեան սքանչելի նախաձեռնումները ջերմ հավանութեան են գտնում բոլորիս կողմից: Ազգային գրականութեանների լավագույն երկերը՝ հարստացնում են սովետական բոլոր ընթերցողների մտքերն ու զգացմունքները, ներդրում են ոչ միայն տվյալ ազգային, այլև ամբողջ սովետական գրականութեան մեջ:

Ռուս մեծ գրականութեանը իր ունակութեան և ունակութեան արտոյիցիաներով հսկայական մի գալրոց է սոցիալիզմի երկրի բոլոր ժողովուրդների, ամբողջ մարդկութեան գեղարվեստական մտքի համար:

Ալեքսանդր Պուշկինի և Վլադիմիր Մայակովսկու բանաստեղծական անմահ երկերը նույնպէս ամուր մտել են ազրբեջանցի ընթերցողի հոգու ու գիտակցութեան մեջ, ինչպէս նրա ազգային կլասիկների՝ Նիզամու, Ախունդովի, Ֆիզուլու և մյուսների երկերը: Ազրբեջանական ժողովուրդն ու նրա ինտելիգենցիան նույն սիրով ու հարգանքով կարդում են ուկրաինական ժողովրդի մեծ գրականների ու դուատրերի՝ Տարաս Շեչենկոյի, Լեսյա

Սևրախնկայի, Իվան Ֆրանկոյի, եղբայրական բու-
լոր ժողովուրդների դեղարվեստական ստեղծագոր-
ծությունները»¹։

Սոցիալիստական հասարակության պայման-
ներում հեազհետե ավելի ինտենսիվորեն է զործում
գրական կապերի ևս մի օրինաչափություն, - որ
երևան է գալիս համաժողովրդական կուլտուրական
փոխհարստացման խիստ ճշուղավորված կանալ-
ներում։ Թարգմանական հսկայական աշխատանքը,
լավագույն ստեղծագործությունների հրապարա-
կումը համամիութենական և ռեսպուբլիկական
պարբերական մամուլում, գրանց էկրանացումը,
ուսղիտհաղորդումները, ՍՍՌՄ ժողովուրդների
դրամատուրգների պիեսների բեմադրումներն ամե-
նուրեք վերին աստիճանի խթանում են գրական
բարեկամական կապերի զարգացումը։ Այս ամենը
ոչ թե պարզապես հետաքրքիր փաստեր են, ազգա-
յին բոլոր գրականությունների արժեքները
ՍՍՌՄ-ում լայնորեն տարածելու նոր ձևեր, այլ
որոշակի օրինաչափություն, որ ծնունդ է առել սո-
վետական դարաշրջանում՝ սոցիալիստական ազ-
դերի կուլտուրաների աննախընթաց վերելքով և
ներանց հոգևոր սլահանջմունքների հսկայական ու
անընդհատ աճով։

¹ Ս ամեղ Վոսրդուն, «Մեր եղբայրություն-
ներ», «Լիտերատուրնայա գաղետա», 1953, նոյեմբերի 7։

Որպեսզի խուսափենք մի գրականություն մի ուրիշին վերացականորեն զուգադրելուց, փոխառությունների ու ազդեցությունների զուտ ֆորմալիստական հայտնաբերման էմպիրիզմից, կոնտեքստից դուրս արվող տեքստաբանական համընկնումներ ու համահնչումություններ որոնելուց, բովանդակությունը վտանգավոր ու վնասակար կերպով ձևից խզելուց, գրական կապերն ուսումնասիրելիս զեղարվեստական ստեղծագործության ազգային սպեցիֆիկան ու ինքնատիպությունը անտեսելուց, կարևոր ու անհրաժեշտ է դիտել դրանք բուն իրականության հետ ունեցած փոխազդեցության մեջ: Այլ կերպ ասած՝ գրականագիտական վերլուծումը պետք է աչքի ընկնի կոնկրետ, պատմական բնույթով:

Մեթոդոլոգիապես պարտադիր է ելնել աճյն բանից, թե ինչ վճռական նշանակություն է ունեցել ժողովրդի կյանքը գրականության զարգացման համար, ելնել նրա հասարակական-արտագրական հարաբերությունների և ընդհանուր սոցիալ-կուլտուրական վիճակի բնույթից: Այլապես չի էլ կարելի ճիշտ պարզաբանել ազգային գրականության էությունը, պատկերացնել նրա առաջընթաց շարժումը, հասկանալ գրողի աշխարհայացքի, զեղարվեստական մեթոդի հիմնական գծերը և նրա հորաբերակցությունը անցյալի ու ներկայի գրողների հետ: Իրականության մեջ գրական կապերը վերին աստիճանի բազմազան են, հաճախ ոչ ուղղակի,

ուստի և դրանք պետք է վերլուծել իրենց հատուկ
լրիվութեամբ ու բարդութեամբ, առանց դեռևս եր-
բեմն պատահող սխեմատիկ մակերեսայնութեան:

Զի կարելի չզգուշացնել նաև միջազգային
գրական կապերը՝ հետազոտելիս վուլգար սոցիո-
լոգիական մոտեցում ունենալուց, որը անտեսում է
գեղարվեստական գրականութեան սպեցիֆիկան:
Այդպիսի մոտեցման հետևանքը լինում է այն, որ
ստեղծագործական ազդեցությունները հանգեց-
վում են միայն գաղափարական կարգի ազդեցու-
թեան, անհիմն կերպով շափազանցվում կամ նվա-
զեցվում է առանձին գրողների գերը և ուշագորու-
թյունից դուրս են մնում գրականութեան սպեցի-
ֆիկ երևույթները՝ հասարակական-գրական պրո-
ցեսի բովանդակությունը, գրական տարբեր ուղղու-
թյունների հարաբերակցությունը նրա մեջ, գրողի
մեթոդն ու ոճը՝ նրա ստեղծագործական անհատա-
կանութեան ամբողջ ուրույնութեամբ, տվյալ ազ-
գային գրականութեան պոետիկայի առանձնահատ-
կությունները, ուսումնասիրվող գրականություն-
ների գրական լեզուների մոտիկութեան կամ տար-
բերութեան աստիճանը:

3. ԲԱԶՄԱԶԳ ԳՐԱԿԱՆ ՊՐՈՅԵՍԻ ԲՆՈՐՈՇ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԱՌԵՎՈՒՅՈՒ-
ՑԻՈՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ
ՇՐՋԱՆՈՒՄ

Մեր բազմազգ երկրի պայմաններում փոխադարձ կապերն այնքան են զարգացել, այնքան նշանակալի տեղ են գրավել տարբեր ազգությունների գրողների ստեղծագործության մեջ, որ որոշել են ամբողջ գրական պրոցեսի որակական ուրույնությունը: Ահա այդ պատճառով էլ գրական պրոցեսը, ընդգրկելով պատմականորեն իրար կապված ժողովուրդների ղեղարվեստական ստեղծագործությունը, մեզանում ձևոք է բերել որոշակի արտահայտված միջազգային բնույթ:

Նախառևոյուցիոն Ռուսաստանում ղեռնա անկազմակերպ, տարերայնորեն կազմվող, իսկ ՍՍՌՄ-ում մեծապես կազմակերպված, նպատա-

կամեա, ժողովուրդների հաղթանակած բարեկամութեան դադափարներով տողորված այդ բաղմուտը գրական պրոցեսի առկայութեանն ու գարշացումը եղել է և հանդիսանում է եղբայրական ժողովուրդների գրողների փոխադարձ կապերի խորութեանն ու բազմակողմանիութեան փայլուն ցուցանիշը: Եթե վերցնենք բաղմուտը գրական պրոցեսի հիմնական գծերը ընդհանուր առմամբ տնցյալում և ներկայում, ապա հենց դրանք էլ կազմում են այդ կապերի հիմնական ձևերը, որոնք հնարավոր էին այնքան սերտորեն իրար կապված գրականութեանների հարաբերութեաններում սոցիալ-տնտեսական ու կուլտուրական զարգացման համառուսական, առավել ևս ժամանակակից համամիութենական պրոցեսում:

Անցած դարի ընթացքում մեր երկրի պատմութեան մեջ կատարվեցին բացառիկ նշանակութեան ունեցող իրադարձութեաններ: Ռուսաստանին միացվելու հետևանքով առաջ եկավ շատ ժողովուրդների տնտեսական, քաղաքական ու կուլտուրական միասնութեանը ուստի ժողովրդի հետ, իսկ դա առաջադիմական վիթխարի նշանակութեան ունեցավ տարբեր ազգութեանների տասնյակ միլիոնավոր մարդկանց հետագա պատմական զարգացման համար, հակադրվեց նրանց միջև պառակտութեան հրահրելու ռեակցիոն-գաղութարարական քաղաքականութեանը: Բուն Ռուսաստանում ֆեոդալական-ճորտատիրական իրավակարգի ճգնա-

Ժամը վերջացավ ճորտատիրութեան վերացումով: Ըհշտ է՝ բոլոր ժողովուրդները հավասար շափով յներդրավւեցին համառուսական կապիտալիստական զարգացման ոլորտում: Այդ իրադրութեան մեջ ձեւավորվեցին ուկրաինական, հայ, վրաց և այլ բուրժուական ազգերը: Տարբեր ազգութիւնների աշխատավորների դասակարգային ինքնագիտակցութեան զարգացման վրա հսկայական ազդեցութիւն գործեց երկրում ծայր առած ազատագրական շարժման աճը: Ռուս ժողովրդի գլխավորութեամբ աստիճանաբար ստեղծվում էր բազմազգ երկրի ուժերի այն հզոր համախմբումը, որը անհրաժեշտ նախադրյալ հանդիսացավ Հոկտեմբերյան ռեուլյուցիայի հաղթանակի և աշխարհի առաջին սոցիալիստական պետութեան՝ ՍՍՌՄ-ի հետագա ամրապնդման համար:

Այս պայմաններում էլ դրվում էին բազմազգ գրական պրոցեսի հիմքերը: Ռուսաստանի առաջավոր գործիչները ձգտում էին հայրենի ինքնուրույն գրականութիւնը դարձնել սոցիալական պայքարի զենք և այդ նպատակին հասնելու համար միացնում էին իրենց ճիգերը: Նախառեուլյուցիոն ժամանակաշրջանի այդ պրոցեսում շատ էին տարբերացումութիւնը, հակասական տենդենցների բախումները, սակայն դա կենսունակ պրոցես էր՝ հակադրված ժողովուրդներին իրարից անջատելու, նրանց մեջ ազգային պառակտութիւն սերմանելու քաղաքականութեանն ու գաղափարախոսութեանը:

Համառուսական գրական պրոցեսի բովանդակությանը դառնում է խիստ բազմազան. ձևավորվում են ազգային նոր գրականություններ, լայն ազդեցություն է ստանում ռուսական մատերիալիստական էսթետիկան, ստեղծագործական ուսում են առնում ռուս կլասիկներից, սկսվում է գրականությունների փոխհարատացում, անձնական կապեր են հաստատում տարբեր ազգությունների գրողները, մշակվում է Ռուսաստանի ժողովուրդների կյանքի թեմատիկան, փոխադարձաբաղ օգտագործվում են ժողովրդական բազմազգ ստեղծագործության նյութերը, գեղարվեստական թարգմանություններ են արվում, սովորում են ռուսաց լեզուն և օգտագործում դա իրենց ինքնուրույն երկերի վրա աշխատելիս, ինչպես նաև ռուս և համաշխարհային գրականությանը ծանոթանալու համար, պատկերավոր կերպով մարմնավորում են ժողովուրդների բարեկամության գաղափարը, ռուս գրականությունը բազմազգ երկրում տարածելու տարբեր ձևեր են գտնվում, ռուս գրողները աջակցում են տարբեր լեզուներով պարբերական մամուլի վարդապետներ, Ռուսաստանի ժողովուրդների գրողները միասին պայքարում են սոցիալական ճնշման, ցարական գաղութացման, մեծապետական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի դեմ:

Այդ պրոցեսի բազմակողմանի բովանդակությունը զարգանում էր Ռուսաստանի սոցիալ-տրնտեսական վարդապետան, համաժողովրդական բևո-

լյուցիոն շարժման աճի հետևանքով: Ահա ինչու այդ պրոցեսը առանձնապես հարուստ բովանդակություն է ստանում այն տասնամյակներում, երբ Բեխինսկու, Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի գլխավորութեամբ ուսույցիոն դեմոկրատները ուժեղ ազդեցություն էին գործում իրենց բազմազգ երկրի հասարակական-քաղաքական և կուլտուրական կյանքի բոլոր բնագավառների վրա: Այս պրոցեսը չավելի է լայնանում ու խորանում, որակական նոր գծեր ձեռք բերում, երբ ուսույցիոն շարժումը, բանվոր դասակարգի գլխավորութեամբ, վերելք է ապրում, երբ ժողովուրդների գրական համագործակցության տրադիցիաներն ընկալում ու զարգացնում է Մ. Գորկին:

Գրական պրոցեսը, գեղարվեստական բազմալեզու ստեղծագործությունը այժմ արտացոլում է կոմունիզմի բազմամիլիոն կառուցողների՝ տարբեր ազգությունների մարդկանց տարեցտարի ամրացող մեծ բարեկամությունը, պրոլետարական ինտերնացիոնալիզմի համաշխարհային պատմական լիակատար հաղթանակը մեր երկրում:

Սովետական Միությունում գաղափարական-ստեղծագործական կապերը զարգանում են բոլոր սոցիալիստական ազգերի ու ժողովուրդների ինքնատիպ և ինքնուրույն գրականությունների բուռն, աննախընթաց ծաղկման իրադրության մեջ, իրականության սոցիալիստական վերափոխման, Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքակա-

Եության հետևողական իրագործման և սոցիալիստական հասարակութեան զարգացման հիմնական շարժիչ ուժերի՝ սովետական հայրենասիրութեան, ԱՍՌՄ ժողովուրդների բարեկամութեան և սոցիալիստական հասարակութեան բարոյա-քաղաքական միասնութեան հիման վրա:

Չկող ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի բազկացուցիչ մասը կազմող սովետական գրականութեան բոլոր ինքնուրույն վարպետների համախմբմանը խիստ նպաստել է այն հանգամանքը, որ ամենքն էլ հանդես են գալիս նույն ստեղծագործական մեթոդով՝ սոցիալիստական ոեալիզմի մեթոդով՝ սպառազինված: Սովետական բազմազգ պրականութեան գործիչների հասարակական-քաղաքական և գաղափարա-տեսող-ծագործական դիրքերի միասնութեամբ անմիջականորեն որոշեց այն ուղիները, որոնցով նրանք յուրացնում են մարքս-լենինյան էսթետիկան, որը բնկալել ու զարգացրել է Բելինսկու, Գերցենի: Չերնիշևսկու և Դոբրոլյուբովի մատերիալիստական էսթետիկայի թանկարժեք ժառանգութեանը: Այս ամենի հետևանքը եղավ այն, որ հաստատուեցին սոցիալիստական ոեալիզմի համամիութենական ստեղծագործական նվաճումների հաշվառման վրա հիմնված էսթետիկական պահանջների բարձր նորմաներ:

Միջազգային ստեղծագործական բարեկամութեանը բազմակողմանիորեն ամրապնդելու հե-

տեանքով զգալիորեն բարձրացավ բոլոր ազգային
 բրահանությունների հասարակական վերափոխիչ,
 ճանաչողական ու դաստիարակչական դերը: Եղ-
 բայրական գրականությունների լայն դործունեու-
 թյան վառ արտահայտություններից է այն, որ
 ՄՄՌՄ ժողովուրդների գրողների ստեղծածի ամբողջ
 լավագույնը անմիջապես դառնում է համամիութե-
 նական սեփականություն, համաշխարհային ճա-
 նաչում ու տարածում ունենում: Նրանք չեն սահ-
 մանափակվում իրենց ռեսպուբլիկայի թեմատի-
 կայով և հաջողությամբ մշակում են համամիութե-
 նական և միջազգային սլլանի ալտուալ խոշոր թե-
 մաներ (օրինակ՝ Ա. Կոռնեյչուկի պիեսները, Անդ-
 րեյ Ուպիտի էպոպեները, Վիլիս Լացիսի և Օլես
 Գոնչարի վեպերը, Պավլո Տիչինայի, Մ. Բրսիմ
 Ռիլսկու, Յակուբ Կոլբասի, Ն. Զարյանի, Գ. Սա-
 րյանի, Ռասուլ Ռզայի, Սամեդ Վուրդունի, Գ. Լեո-
 նիձեի, Արկադի Կուլեշովի, Ս. Բլումբա Ներիսի, Յան
 Սուդրաբկալնի, Եմելյան Բուկովի, Միրզա Թուր-
 սունզադեի շափածո գործերը, Սուլեյման Ստալ-
 սկու և Զամբուլի երգերը և այլն):

Առանձնակի նշանակություն ստացավ սոցիա-
 լիստական արվեստի հիմնադիրներ Մ. Գորկու և
 Վ. Մայակովսկու ստեղծագործության խորացված
 յուրացումը համաժողովրդական մասշտաբի ալ-
 տուալ թեմաներ մշակելիս և աշխատանքի մարդ-
 կանց տիպիկ, ուսանելի կերպարներ կերտելիս: Այս
 իմաստով ճիշտ է գնահատվում, խորամտորեն է

ընկալվում նաև սոցիալիստական ռեալիզմի ուսու-
սկանավոր գրողներին՝ Մ. Շուրխովի, Ա. Սերաֆի-
մովիչի, Ա. Տոլստոյի, Դ. Ֆուրմանովի, Ա. Ֆադեևի,
Կ. Ֆեդինի, Մ. Իսակովսկու, Ա. Տվարդովսկու և
ուրիշների սահղծագործական փորձը:

Սովետական ուսու գրականությունը, եղբայրա-
կան գրականությունների հետ շփվելու շնորհիվ
հարստանալով, նույնպես գրանց մեջ սոցիալիս-
տական ռեալիզմի մեթոդի սկզբնավորմանը:

Միայն ազգային գրականությունների ստեղ-
ծագործական բազմակողմանի հարստացման ու
փոխօգնության շնորհիվ հնարավոր եղավ վերին
աստիճանի կարճ ժամանակաշրջանում բազմա-
ժանր ու զարգացած գրականությունների սկզբնա-
վորումը Հոկտեմբերյան ռեոլյուցիայից առաջ սո-
ցիալ-կուլտուրական ծայրահեղ հետամնացության
մեջ գտնվող, պիր-գրականություն չունեցող և իրենց
խոհերը, հույսերն ու ամբողջ կենսափորձը ֆուկլո-
րի մեջ արտահայտող ժողովուրդների մոտ: Կիրգի-
զիայի, Դաղստանի, Մորդվայի, Յակուտիայի և այլ
ոնսպուբլիկաների առաջին բանաստեղծները, ար-
ձակագիրները, գրամատուրդները ազատ ընկալե-
ցին ուսու գրականության՝ բոլոր տարալեզու գրող-
ների համար գեղարվեստական վարպետության այդ
խսկական ահադեմիայի, ավելի զարգացած մյուս
եղբայրական գրականությունների փորձը և կարո-
ղացան աիրապետել սոցիալիստական ռեալիզմի
մեթոդին: Ինչպես որ ՍՍՌՄ շատ ժողովուրդներ,

շրջանցելով կապիտալիստական և մի քանի դեպ-
քում էլ նույնիսկ ֆեոդալական ֆորմացիաների
ստադիաները, հսկայական թուշք կատարեցին դե-
պի սոցիալիստական իրավակարգը, նորաստեղծ
գրականություններն էլ սոցիալիստական ռեալիզմի
գարգացման համար բարերեր հող գտան ազգային
գրականության մեջ:

Ահա թե ինչու կարող էին լույս տեսնել և ար-
տասահմանյան ընթերցողներին զարմացնել այն-
պիսի լիարժեք երկեր, ինչպես, օրինակ, թուվացի
Սալչակ Տսկի «Արաթի խոսքը», ուղեհեցի Ջանսի
Կիմոնկոյի «Այնտեղ, ուր Սուկալայն է հոսում» վի-
պակները, շուկոացի Յու. Ռըթխուուի պատմվածք-
ները, նանայցի Աքիմ Սամարի չափածո ժողովա-
ծուն... Սրանք առաջին գրքերն են այն ժողովուրդ-
ների լեզուներով, որոնք անցյալում գատապարտ-
ված էին լիովին անհետանալու և սովետական շրջ-
ջանում միայն վերածնվեցին, գիր-գրականություն
ձևք բերին, հաղորդակից եղան կուլտուրային,
ազատ սկսեցին խոսել իրենց մասին՝ իրենց իսկ
դրողների ձայնով:

Ազգային բոլոր գրական լեզուների հետ միա-
ժամանակ ծագեցին, ձևավորվեցին ու սկսեցին
արագ հարստանալ հնում գիր չունեցող ժողո-
վուրդների՝ կիրգիզների, յակուտների, մորդվացի-
ների, ուղմուրացիների, մարիների, կարակալակ-
ների, լեզգիների, ավարների և ուրիշների գրական
նոր լեզուները: Կոմունիստական պարտիայի ազ-

դասյին քաղաքականութեան հետևողական կենսագործման արդասիքը հանդիսացող այս պրոցեսում մեծ դեր կատարեց ուսաց լեզուն, որպէս ուսանելի օրինակ, իրենց գրական լեզուներն ստեղծողների համար և որպէս զրանք հարստացնելու անսպառ աղբյուր:

Համամիութենական գրական պրոցեսում արժանի տեղ գրավեց բազմազգ ժողովրդական ստեղծագործութիւնը: Դա արտահայտուի համամիութենական գրական անդաստանում այնպիսի տաղանդավոր ժողովրդական երգիչների հանդես գալով, ինչպիսիք են Սուլեյման Ստալախին, Զամբուլը, Դուրդի Կլիշը, Մարֆա Կրչուկովան, մորգվացի բանասաց կանայք և բանավոր բանաստեղծական արվեստի յերիշ շատ վարպետներ:

Առանց չափազանցութեան կարելի է խոսել գրական կապերի ու փոխհարստացման այնպիսի մի ձևի բացառիկ աճի մասին, ինչպիսին է ռուսերենից թարգմանելը ՍՍՌՄ արագ զարգացող ժողովուրդների լեզուներով և այդ լեզուներից էլ՝ ռուսերեն: Թարգմանական գործը, որին գործուն կերպով մասնակցում են երկրի բոլոր հիմնական գրական ուժերը, համապետական նշանակութիւն է ստացել հազթանակած սոցիալիզմի երկրի կուտուրական շինարարութեան մեջ, գեղարվեստական բարձր կատարելութեան է հասել ու պատվավոր տեղ գրավել ժամանակակից բազմազգ գրական պրոցեսում:

Մաքսիմ Գորկին ոչ միայն որոշեց ՍՍՌՄ գրողների երկերի փոխադարձ թարգմանությունների սլառամա-գրական նշանակությունը, թարգմանությունների դերը հզրայրական ժողովուրդների միասնության ու փոխըմբռնման գործում, այլև հանխորոշեց թարգմանական արվեստի կարևոր տեղը միասնական սոցիալիստական կուլտուրա ստեղծելու հեռանկարում: Ազրբեջանական կուլտուրահասարակ մի թերթի խմբագրին գրած 1934 թ. նոյեմբեր 19 թվակիր նամակում Գորկին ասում էր.

«Իդեալական կլիներ; եթե Միության մեջ մըտնող յուրաքանչյուր ժողովրդի յուրաքանչյուր երկր թարգմանվեր Միության մյուս բոլոր ժողովուրդների լեզուներով: Մենք բոլորս դռանից կսովորեինք հասկանալ միմյանց առանձնահատկությունները, իսկ այդ հասկանալը անշուշտ խիստ կարագացներ այն միասնական սոցիալիստական կուլտուրայի ստեղծման պրոցեսը, որը առանց ջնջելու բոլոր ազգերի անհատական դժերը, կստեղծեր միասնական, փառաշուք, ահեղ ու համայն աշխարհը վերանորոգող սոցիալիստական կուլտուրան»¹:

Գորկու այս ավանդը հաջողությամբ իրագործվում է այժմ: Գրողների Համամիութենական երկրորդ համագումարում Ա. Սուրկովը այսպիսի պերճախոս թվեր բերեց. 1934 թվականին ոտւս գրա-

¹ «Պրավդա», 1934, դեկտեմբերի 17:

կանությունից 481 գործ թարգմանվել է եղբայրական ժողովուրդների լեզուներով 3,529 հազար օրինակ ընդհանուր տիրաժով, իսկ 1953-ին արդեն 1022 գործ 16,007 հազար օրինակ ընդհանուր տիրաժով: Այդ նույն ժամանակամիջոցում եղբայրական ժողովուրդների գրականութունից ուսներեն թարգմանված երկերի քանակը 150-ից (տիրաժ 1,045 հազար օրինակ) հասավ 419-ի (տիրաժ 21,427 հազար օրինակ): Ամբողջ երկրում շարունակ ավելանում է ազգային լեզուներով հրատարակվող և մի լեզվից մյուսը թարգմանվող գրքերի քանակը: 1928-ից մինչև 1954 թվականը, բացի ուսներենից, լույս է տեսել 278 հազար անուն գիրք՝ համարյա երեք միլիարդ ընդհանուր տիրաժով: 1953-ին թարգմանական գրականութունը կազմում էր մեր երկրի ամբողջ գեղարվեստական գրքերի արտադրանքի համարյա 45 տոկոսը:

Թարգմանական գործի թափով ՍՍՌՄ-ն այժմ առաջին տեղն է գրավում ամբողջ աշխարհում:

Եթե նախառևոյլուցիոն ժամանակաշրջանում Ռուսաստանի ժողովուրդների կյանքը փոխադարձաբար սլատկերելուն նրանց գրողները ձեռնամուխ էին լինում միայն դրա առիթը լինելիս, ապա սովետական դարաշրջանի գրական բազմազգ պրոցեսի համար բնորոշ է այդ թեմատիկայի բազմակողմանի ու սիստեմատիկ մշակումը որպես ՍՍՌՄ

ժողովուրդների անխախտ բարեկամության փայ-
լուն արասհայտություններից մեկը¹:

Ի հաստատումն դրա բերենք մի քանի բնո-
րոշ փաստ: Մ. Գորկու, Վ. Մայակովսկու, Ա. Սե-
րաֆիմովիչի, Ա. Տոլստոյի, Ա. Ֆադեևի, Դ. Ֆուր-
մանովի, Վ. Իվանովի, Պ. Պավլենկոյի, Ն. Տիխո-
նովի, Վ. Լուպովսկոյի, Պ. Սկոսիրևի, Պ. Լուկինից-
կու, Տ. Սեմուշկինի, Յու. Լիբեդինսկու, Լ. Պասին-
կովի, Ա. Բեկի, Ս. Զլոբինի, Ա. Անտոնովսկայայի,
Ա. Բեդիմենսկու և շատ ուրիշների երկերում ցույց
են աշխած մի շարք եղբայրական ժողովուրդների
հերոսներ: Ժողովուրդների բարեկամության դադա-
փարը մարմնացվել է Պավլո Տիչինայի «Միասնա-
կան ընտանիքի զգացմունք» և «Պողպատ ու քրնք-
շանք» բանաստեղծությունների ժողովածուներում:
Ուկրաինացիներ Մ. Բաժանը («Բանաստեղ-
ծություններ վրաստանի մասին»), «Ուղբեկստա-
նյան բանաստեղծություններ») և Ա. Դեանյակը
(«Թուրգայի բազեն») ստեղծել են վրաստանի,
Ուղբեկստանի ու Ղազախստանի մարդկանց կեր-

¹ Տե՛ս Կ. Զեկինսկի, ՍՍՌՄ ժողովուրդների
գրականությունները ուսումնասիրելու պրոբլեմները.
«Եղբայրական միասնություն» ժողովածուն, հրատ. «Սո-
վետսկի պիսատել», Մ., 1954, էջ 67—131 (սուսերեն):
Այս ժողովածուի մյուս հեղինակների հոդվածներում ևս
լուսարանվում են ՍՍՌՄ ժողովուրդների գրական կապերի
հետ առնչվող մի շարք հարցեր: Տե՛ս նաև Կ. Զեկինսկի
«ՍՍՌՄ ժողովուրդների գրականություն» 1957, Մ., (սու-
սերեն):

պարներու Բելլոսուս է: Սամուելյոնսկը գրել է «Գա-
լիք» գիրքը Վրաստանում Սովետական իշխանու-
թյուն հաստատուելու մասին, իսկ վրաց արձակա-
պիր Կ. Լորդկիպանիձեն իր նովելների մեջ պատ-
կերել է բելլոսուս ժողովրդի կյանքը: Ի. Նոնեշվիլին
լույս է բնծայել «Ղազարխաստանի հողի վրա» բա-
նաստեղծությունների ժողովածուն: Հայ բանա-
ստեղծուհի Սիլվա Կասպուտիկյանը երգել է Մոսկ-
վան ու Ալմա-Աթան: Չուվաշ բանաստեղծ Պ. Խու-
զանգաչը մի պոեմ է գրել Բաքվի քսանվեց լեզեն-
պար կոմիտարների և բանաստեղծությունների մի
ցիկլ Ուկրաինայի, Լատվիայի ու Թաթարիայի
մասին:

Ռեալիստական բազմաթիվ խոշոր երկերի
լույս տեսնելը, բոլոր եղբայրական ժողովուրդների
պատմական ու ներկա կյանքի մասին ուռաբերեն և
այլ լեզուներով մշտապես բազմաթիվ բանաստեղ-
ծությունների հրապարակումը ցույց է տալիս, թե
սրբան են ընդլայնվել նրանց գրական կապերը:

Սովետական դարաշրջանում սկիզբ առան ու
ամրապնդվեցին մեր երկրի բոլոր եղբայրական ժո-
ղովուրդների ստեղծագործական հարաբերություն-
ների բազմաթիվ նոր ձևեր, ինչպես միասնական
գրական կազմակերպության՝ ՍՍՌՄ Գրողների
Միության աշխատանքին մասնակցելը, սոցիալիս-
տական բազմազգ արվեստի հրատապ հարցերի
համամիութենական գիտկուսիաներն ու կոլեկտիվ
բննարկումները, անձնական, ստեղծագործական

բարեկամութեան լայն զարգացումը, սիստեմատիկ աչցելությունները ռեսպուբլիկաներ, ազգային գրականությունների մոսկովյան տասնօրյակները, համամիութենական ու ռեսպուբլիկական հոբելյանական հանդեսները ի պատիվ եղբայրական գրականությունների կլասիկների, գրողների համատեղ ուսումնասիրությունը Մոսկվայի ու Լենինգրադի բարձրագույն ուսումնական հաստատություններում և մասնավորապես ՍՍՌՄ Գրողների Միութեանը կից Մ. Գորկու անվան Գրականութեան ինստիտուտում, ստեղծագործական համատեղ աշխատանքը առանձին երկերի վրա, ազգային լեզուներ սովորելը, ՍՍՌՄ Ժողովուրդների գրողների դրամատուրգիական գործերի բեմադրութեանները եղբայրական ռեսպուբլիկաների թատրոններում, սովետական բազմազգ գրականութեան գեղարվեստական լավագույն երկերի էկրանացումը, ազգային գրականութեանների անթուղտիաների հրատարակումը, «Դրուժբա նարոդով» («Ժողովուրդների բարեկամութեան») ամսագրի լույս տեսնելը, սովետական ռեսպուբլիկաների գրական կյանքի լուսաբանումը կենտրոնական ու տեղական պարբերական մամուլում և այլն:

Սովետական ժամանակաշրջանի բազմազգ գրական պրոցեսում Միութեան Ժողովուրդների գրողների փոխազդեցութեանը աչքի է ընկնում իր բազմապիսի բնույթով: Նախ և առաջ այդ ներքին սիստեմատիկ փոխազդեցութեանն արտահայտվում

է և զբայրական գրականությունների գեղարվեստական փորձը ներդաշնակորեն և, գլխավորը, ստեղծագործաբար ընկալելու մեջ: Դրական նշանակութիւն ունի նաև տարբեր լեզուներով գրված երկերի փոխադարձ ու բարյացակամ քննադատութիւնը: Հաճախ տարբեր գրականությունների ներկայացուցիչները միասին աշխատում են առանձին երկեր գրելու, անթուղոգիաներ ու ժողովածուներ կազմելու վրա:

Տարբեր ազգութիւնների սովետական գրողների բարեկամութիւնը աճում է այն խորթ ու թշնամական երևույթների դեմ մղվող գաղափարախոսական համապեղ պայքարում, որոնց բախվել է սովետական գրականութիւնը իր պատմական ուղում, գաղափարա-էսթետիկական սկզբունքների համար մղվող պայքարում:

4. ԵՂՔԱՅՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԳՐԱԿԱՆՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐՍՏԱՑՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՍՍՈՄ Ժողովուրդների գրական կապերի ուսումնասիրման ամենից ավելի բարդ և միմյուռ հիմա սակավ մշակված պրոբլեմներից մեկը նրանց փոխհարստացման պրոբլեմն է: Եթե արդեն բավականաչափ զննումներ են արված, օրինակ, եզրայրական ժողովուրդների գրողների վրա ուսուցրականության դործած ազդեցության մասին, ապա ուսուցիչ և ազգային շատ գրականությունների փոխհարստացման պրոցեսի ու հեռանքների հետազոտությունը փաստորեն նոր է սկսվում: Այս բնագավառում դեռ խոշոր խնդիրներ են լուծվելու, դեռ հետաքրքրական պատմագրական հայտնագործություններ են արվելու:

ՍՍՈՄ բազմից ժողովուրդների յուրովի գունեղ ու գեղարվեստական գրականություններն այնքան

ևն աճել, իրենց նվաճումներով աշխարհն ևն հարըս-
 տացել, որ սովետական բազմազգ գրականության
 բոլոր կարևորագույն երևույթների առավելագույն
 արդյունավետ ուսումնասիրությունը: հնարավոր
 կգտնա միայն լայն փոխազդեցության և փոխօգ-
 նության պլանով դիտելիս: Միանգամայն ժամա-
 նակին ու իրավացի է ուկրաինացի գրականագետ
 Ի. Կիսելցովի կշտամբանքը «Սովետական ուս
 գրականության պատմության ուրվագծեր»-ի հեղի-
 նակային կողեկտիվին, որը ճիշտ է նշել ուս գրող-
 ների ստեղծագործական ազդեցությունը ազգային
 գրականությունների ներկայացուցիչների վրա, սա-
 կայն ոչ մի բառ չի ասել հակադարձ ազդեցության
 մասին: Բացի դրանից, Ի. Կիսելցովը հիմնավորված
 էներպով, մի շարք փաստերով հաստատում է, թե
 ինչպես փոխհարստացման արդյունքների անտե-
 սումը ազդատապնում է ժամանակակից գրական
 պրոցեսի և՛ ընդհանուր պատկերացումը, և՛ սովե-
 տական բազմազգ գրականության պատմության ու
 տեսության գիտական հետազոտությունը:

«Նորարարական որոնումների կնիքն է կրում
 եզրայրական ռեսպուբլիկաների շատ ու շատ
 գրողների աշխատանքը, որոնք առաջ են մղում
 գրականության այս կամ այն սեռը: Կարելի է
 թույլ տալ, որ մեկը ինչ-որ ընդհանրացնող բան
 ասի սովետական կոմեդիայի մասին՝ առանց վկա-
 յակոչելու Ա. Կոռնեյչուկի կամ Կ. Կրապիվաչի
 մեծ ժողովրդականություն վայելող պիեսները: Նա,

ով լրջորեն պիտի դբադվի ումանտիկական արձա-
կի կամ շափածոյի հարցերով, անխուսափելիորեն
դիմելու է Օլես Գոնչարի և Սամեդ Վուրդունի
ստեղծագործությանը: Անկարելի է քննության առ-
նել սովետական պատմավեպը առանց Ն. Ռիբա-
կի և Մ. Ատեզովի երկերը վերլուծելու: Օրինակի
համար, ժամանակակից դրամատիկական պոեմի
հետազոտողները իրենց եզրակացութունները կա-
ռուցելու են նախ և առաջ ուկրաինական ու վրա-
ցական դրամատուրգիայի նմուշների վրա, որտեղ
այդ ժանրը վաղեմի տրագիցիաներ ունի և այժմ էլ
աներկայացված է հետաքրքիր ստեղծագործութուն-
ներով: Որոշ էտապներում այս կամ այն դրակա-
նության մեջ առանձին ժանրեր առաջ են անցնում
ու հասնում առանձնապես բարձր զարգացման:
Օրինակ՝ Ուկրաինայում այժմ խիստ եռանդուն կեր-
պով մշակվում է էպիկական պոեզիան, այն, ինչ
կոչվում է էպիկական մեծ ձև: Միայն վերջին ժա-
մանակներս այդտեղ ավելի քան տասը շափածո
վեպ ու վիպակ է տպված. շափաղանց հատկանշա-
կան մի երևույթ, որ դեռ չի նշել ու վերլուծել ո՛չ թե
համամիութենական, այլ նույնիսկ ուկրաինական
ըննադատությունը»¹:

Ըստ էության դրականությունների փոխհա-
մըստացումն սկսվում է ու կիրառվում նրանց պոր-

¹ Ի. Կիսելյով, Ընդհանրացնել ազգային դրա-
կանությունների ստեղծագործական փորձը, «Դրուժբա
նարոդով», № 11, էջ 162:

դասցման մեջ հենց որ նրանք իրար են շփվում, հենց որ տարբեր սաղգությունների գրողների միջև անձնական կամ հեռակա բարեկամական հարաբերություններ են հաստատվում: Բավական է նըշել հենց միայն այն հանգամանքը, որ գրողները, ծանոթանալով տարալեզու ստեղծագործություններին, հարստանում են դրանից, նրանց առջև բացվում են մինչև այդ անհայտ գեղարվեստական կուլտուրայի և որ երևույթներ: Այս ծանոթությունը շատ ավելի մեծ չափով տեղի է ունենում սովետական շրջանում: Մեր դարաշրջանում մի ժողովրդի ստեղծածը անարգել դառնում է մյուս բոլոր ժողովուրդների սեփականությունը, տեղի է ունենում այն, ինչ պետք է տեղի ունենա միասնական, եզրայրական ընտանիքում:

Ռուս գրականության սլատմության օրինակից շատ լավ երևում է, թե ինչպես է նա հարստացել այն բանի շնորհիվ, որ ռուս ժողովուրդը բազմակողմանիորեն շփվել է Ռուսաստանի բոլոր ժողովուրդների հետ, որ նրանց գրողներն էլ անմիջական կապեր են ունեցել իրար հետ:

Անկարելի է պատկերացնել ռուս դասական գրականությունը առանց հնուց ռուս ժողովրդի շուրջը համախմբված մյուս ժողովուրդների կյանքը պատկերող դարմանալիորեն բազմազան թեմատիկայի: Ուկրաինացիների, բելոռուսների, վրացիների, մոլդավացիների, կարելցիների, լիտվացիների, կովկասյան լեռնաբնակների, յսկուտների, դա-

վախների, բաշխիրների, սպբեկների և սպիշ շատ
սաղգությունների պատկանող կերպարներ ևն կեր-
տել իրենց ստեղծագործութեան մեջ Պուշկինը, Գո-
գոլը, Լերմոնտովը, Տուրգենևը, Նեկրասովը, դե-
կաբրիստ բանաստեղծների խումբը Ռիլեևի գլխա-
վորութեամբ, Դալը, Լ. Տուստոյը, Չեխովը, Լեսկովը,
և ուրիշներ: Եթե հիշենք թեկուզ այն, որ սարբեր
ժողովուրդների կյանքն է հիմք դարձել ստեղծելու
ուսական կլասիկայի այնպիսի գլուխ-գործոց-
ներ, ինչպես Պուշկինի «Կովկասյան գերին»,
«Բախշիսարայի շատրվանը», «Պուլտավան» և լիրի-
կական բանաստեղծությունների մի ամբողջ ցիկլ,
Լերմոնտովի «Դևը», «Մծիբին», «Հաջի Աբրեկը»,
«Իամայիլ բեյը», «Մեր ժամանակի հերոսը», Ռի-
լեևի «Վոյնարովսկին», Լև Տուստոյի «Կովկասյան
գերին» և «Հաջի Մուրադը», Կորոլենկոյի «Կույր
երաժիշտը» և «Մակարի երազը», — սպա արդեն շու-
շափելիորեն սկներև կատնա սուս գրողների հըս-
կայական ներգրումը հայրենի դրականութեան մեջ:

Հայրենի ֆուկլորի հարստութեանն օգտագոր-
ծող ոռւս գրողները բարձր էին գնահատում նաև
մյուս ժողովուրդների բանավոր բանաստեղծական
արվեստը ու հաճախ դիմում նրա մեծահարուստ
նյութերին: Ֆուկլորային բաղմազդ կերպարներ,
թեմաներ ու մոտիվներ վարպետորեն վերափոխ-
ված ձևով հարստացրել են Պուշկինի, Լերմոնտովի,
դեկաբրիստ բանաստեղծների, Գոգոլի, Կորոլեն-
կոյի և ուրիշների ստեղծագործությունները:

Նույնքան բեղմնավոր է եղել նաև այն, որ սուս գրականությունը ընկալել է եղբայրական գրականությունների գեղարվեստական պատկերման սուսանձին հնարանքները:

Վ. Բելլինսկին Պուշկինի մասին գրած իր ակնարկաշարում խորաթափանց ճշգրտությամբ և երախտագիտությամբ է բնորոշել այն հանգամանքը, թե որքան անդնահատելի բան է ավել սուս գրականությանն ու նրա մեծ կորիֆեյներին ամբողջ բաղձազգ Ռուսաստանի կյանքի տաղձով ստեղծագործական աշխատանք կատարելը: Համարյա բառորդ գար էր արդեն անցել այն օրվանից, ինչ լույս էր տեսել «ոչ թե պոեզիայի վարպետի, այլ դեռ աշակերտի» գրած «Կովկասյան գերին» (Պուշկինի), երբ Բելլինսկին, նշելով այդ սոմանտիկական սրեմի նշանակությունը և հուզող ներգործությունը, բացազանչում էր. «Իսկ ի՞նչ ազդեցություն պետք է գործեին սուս հասարակության վրա Կովկասի այդ կենդանի, վառվռուն, փառահեղորեն շքեղ պատկերները, երբ առաջին անգամ լույս տեսան: Այդ օրվանից Պուշկինի բարեբաստիկ ձեռքով Կովկասը ուսաների համար դարձավ ոչ միայն լաճն ու անեզր ազատության, այլև անսպառ պոեզիայի ավետյաց երկիր, եռուն կյանքի ու համարձակ երազանքների երկիր: Պուշկինի մուսան կարծես սրբազնագործեց Ռուսաստանի վաղուց արդեն գոյություն ունեցող ազգակցությունն իր որդիների թանկարժեք արյունով ու իր հերոսների քաջագոր-

ծություններով գնված այդ երկրի հետ: Եվ Կովկասը՝ Պուշկինի պոեզիայի այդ օրրանը, հետո դարձավ նաև Լերմոնտովի պոեզիայի օրրանը...»¹:

Ազգային մեծ գրողների ստեղծագործական գործունեության օրինակներից առանձնապես շոշափելի ու տեսանելի է դառնում այն հսկայական դերը, որ կատարել են նրանք ուս դրականութունը հարստացնելու գործում: Իրենց համար, իրենց տաղանդի զարգացման համար ուս կլասիկ գրականության դանձարանից այնքան շատ բան ստացած ազգային այդ մեծ գրողները նույնպես վառ էջեր գրեցին իրենց համար հարազատ Ռուսաստանի կուլտուրայի ու գրականության պատմության մեջ:

Այսպես, Ուկրաինայի մեծագույն բանաստեղծ-ուսուցիչիոներ Տ. Շևչենկոն որպես հարազատ կղբայր մտավ ամբողջ ուս ժողովրդի սիրեցյալ գրողների շրջանը. «...Ուկրաինան զարթնեց հանձին Շևչենկոյի,— գրել է Ն. Օգարյովը 1861 թվականին,— և—լավագույն ապացույց, թե ինչպես հանգամանքների ուժը մղում է դեպի մարդերի ինքնատիպությունը և միության անբաժանելիությունը — Մալոռուսիայում ժողովրդական դարձած Շևչենկոն, որպես հարազատ, հիացմունքով ընդունվեց ուս գրականության մեջ և հարա-

¹ В. Белинский, Полн. собр. соч., т. VII, 1955, стр. 373.

զատ դարձալ մեզ համար. այնքա՞ն ընդհանրու-
թյուն կար մեր տառասուղանքների մեջ և այնքա՞ն
յուրաքանչյուրի ինքնատիպությունը գառնում է
ընդհանուր ասլատութեան պայման»¹:

Տարաս Շեչենկոն ուսումնառչալորը գրականու-
թյան շարքերը մտալ ոչ թե ասկ իբրև հարազատ
մարդ թե՛ նրա կերտողների և թե՛ ընթերցողների
համար, այլև ուսումնառչութիոն-դեմոկրատական
քննադատութեան խորաթափանց մեկնաբանու-
թյամբ կանգնեց նրանց առջև որպես իսկական ժո-
ղովրդայնութեան խորամիտ կիրառման, բա-
նաստեղծի ու ժողովրդի, ուսումնառչութիոն գործի ու հե-
րոսական խոսքի ուսանելի օրինակ:

Համարյա Սպարևի հետ միաժամանակ, հան-
դես դալով Շեչենկոյի ստեղծագործութեան նույն-
պիսի բարձր գնահատութեամբ, Ն. Գորբոլցովը
մատնանշում էր նրան որպես օրինակ ամբողջ ուսում-
նառչութեան համար. «Նա կատարելապես ժողո-
վրդական բանաստեղծ է, այնպիսի բանաստեղծ,
որի նմանը չենք կարող ցույց տալ մեզ մոտ: Անգամ
Կոլչուկը չի կարող համեմատուիլ նրա հետ, որով-
հետև իր պատկերացումներով և նույնիսկ իր ձրգ-
տումներով երբեմն հեռանում է ժողովրդից: Շե-
չենկոյի մոտ ընդհակառակը. նրա բոլոր խոհերն ու
համակրանքը միանգամայն համապատասխան են

¹ Н. Огарев, Стихотворения и поэмы, т. I
1937, стр. 348—349. (Հնդգծումը մերն է):

ժողովրդի կյանքի իմաստին ու կառուցվածքին: Նա դուրս է եկել ժողովրդից, սպրեկ ժողովրդի հետ և ոչ միայն մտածողությամբ, այլև կյանքի հանդամանքներով ամուր ու արենակցարար կապված էր նրան»¹:

Տարած Շեչենկոն, որ այնքան իդեալապես մարմնավորում էր դեղարվեւտական ստեղծագործության ժողովրդայնության սղին, թե՛ դրանով, թե՛ իր սևույցիտն-դեմոկրատական պոեզիայի ամբողջ կերտվածքով և իր սրտազեղ լիրիկայի երգային կառուցվածքով հարստացրեց սուս դրականության շատ դործիչների՝ Ն. Նեկրասովի, Մ. Միրիայևովի, Ա. Պլեչչեևի, Վ. Կորոլենկոյի ստեղծագործությունը: Շեչենկոյի հիանալի տրագիցիաները հոգատարությամբ ընկալեց նաև Մ. Գորկին, ստեղծագործարար օգտագործեցին է. Բագրիցկին, Մ. Սվետլովը, Մ. Գոլոցին, Ն. Ուշակովը և ուրիշներ:

Հայ ժողովրդի մեծ դավախ Միքայել Նալբանդյանը ոչ միայն ձևավորվեց սրպես լուսավորիչ գրող, մատերիալիստ մտածող վր ուռւ բարեկամների՝ վաթսուենական թվականների սևույցիտն-դեմոկրատների ազդեցությամբ, այլև հանդես եկավ սրպես նրանց ամենամոտիկ զինակիցը բազմազգ Ռուսաստանի սևույցիտն ազատագրական

¹ Н. Добролюбов, Поэтич. собр. соч., т. II, 1935, стр. 562--563.

շարժումը ղեկավարելու գործում: Փիլիսոփայու-
թյան և էսթետիկայի վերաբերյալ իր աշխատու-
թյուններով Միրայել Նալբանդյանը հարստացրեց
համաուստական առաջավոր գիտությունը նոր գա-
ղափարներով, մատերիալիստական նոր դրույթնե-
րով, զննումներով ու եզրակացություններով:

Սակայն ՍՍՄԺ ժողովուրդների զրահանու-
թյունների փոխհարստացման համար անհամե-
մատ ավելի նպաստավոր պայմաններ ու հնարա-
վորություններ են ստեղծված այժմ՝ սովետական
ժամանակաշրջանում: Սովետական բազմազգ ու
միասնական զրահանության տարալեզու ներկայա-
ցուցիչները համախմբված են զրահան ընդհանուր
կազմակերպությունների մեջ, կանգնած են իրենց
բոլորի համար ընդհանուր քաղաքական-ստեղծա-
գործական սլաոֆորմի վրա՝ անձնվիրաբար ծա-
ուայել սովետական ժողովրդին: Նրանք բոլորն էլ,
ոչահպանելով անշուշտ իրենց սպառչին զրահա-
նության տարբերիչ արագիցիաները, ղինված են
սոցիալիստական ռեալիզմի միասնական մեթոդով:

Չափազանց հետաքրքիր է դիտել հարստաց-
ման այդ սրտցեօը Մ. Գորկու օրինակով, որ իր
ստեղծագործական անձնավորության մեջ իդեալա-
կանորեն մարմնավորել է զրահան միջազգային
փոխազդեցության նոր ուղիներ ու ձևեր՝ նախ բան-
վոր դասակարգի ռեուլյուցիոն շարժման հզոր վե-
րելքի և ապա մեր երկրում սոցիալիզմի կառուց-
ման իրագրության մեջ:

Հանրահայտ է, թեև ոչ սպառիչ կերպով ուսումնասիրված, Մաքսիմ Գորկու սուղություն ավուղ ու կազմակերպող փայլուն դերը ՍՍՌՄ ժողովուրդների գրականության զարգացման, սոցիալիստական ռեալիզմի մեթոդը սկզբնավորվելու և ամբողջ համաշխարհային առաջադիմական գրականության զարգացման գործում: Իսկ ինչ վերաբերում է այն բանին, թե ինչպես ամենամեծ ուս գրողն ինքն էլ է հարստացել հայրենի բազմազգ երկրի, ինչպես նաև ամբողջ աշխարհի հասարակական-գրական շարժման հետ տնեցած բազմապիսի ու երկարատև կապերի պրոցեսում, ապա այս թեմայի մասին դեռևս ոչ մի գրականագիտական մանրամասն հետազոտություն չի հրատարակված: Մինչդեռ սոցիալիստական ռեալիզմի հիմնադրի այդ հարստացման ուսումնասիրությունը խիստ նշանակալի, ուսանելի կլիներ և օրինակ կդառնար բոլոր գրողների համար:

Ամենից առաջ չափազանց հետաքրքրական է այն, որ Մաքսիմ Գորկին, հանրագիտական գիտելիքների տեր այդ հանճարեղ արվեստագետը, իր ամբողջ կյանքում հետաքրքրվում էր եղբայրական ժողովուրդների պատմությամբ, գրականությամբ, արվեստով, նրանցից շատերի հետ նա շփվում էր տնմիջականորեն: Նա կարողանում էր ամեն մի ժողովրդի գեղարվեստական փորձի մեջ գտնել ամենաարժեքավորն ու ուրույնը:

Նշանակալից է, որ բազմազգ երկրում հանդես եկող և իր առաջին ստեղծագործությունը Թիֆլիսի «Կավկաս» թերթում հրատարակող երիտասարդ հեղինակ Մ. Գորկու գրական դործունեության սկիզբը կապված էր Ռուսաստանի ժողովուրդների ֆոլկլորային հարստություններին դիմելու հետ: Ե՛վ նրա առաջին պատմվածքը՝ «Մակար Չուգրան», և՛ սեռային-սոցիալական երկերի ցիկլը, ներառյալ նշանավոր «Բազեի երգը» վկայում են, թե որքա՛ն շատ բան է քաղել նա բանավոր բազմազգ ստեղծագործության անսպառ աղբյուրներից:

«Այս կեսում Գորկին պարմանալի կերպով մտանում է Պուշկինին, — գրում է Ն. Պիկասանովը: — նրիտասարդ Պուշկինի թափառումները Բեսարաբիայում, Ղրիմում, Կովկասում, Ուկրաինայում առատ նյութ ընձեռեցին նրան հարավային և արևելյան ազգությունների կենցաղի ու ֆոլկլորային մոտիվների բանաստեղծական վերաստեղծման համար... Յոթանասուն տարի անց Գորկին իր կամավոր թափառումների ընթացքում այցելեց նույն երկրներն ու մարզերը, որտեղ եղել էր և Պուշկինը, շիման մեջ մտավ նույն ժողովուրդների հետ, և դասարտացուլեց նրա ստեղծագործություններում այնպիսի ազգագրական ուրվաճակարներով ու ֆոլկլորային միջադրումներով, որոնք հիշեցնում են արևելյան ֆոլկլորիզմն ու էթնոգրաֆիզմը Պուշկինի ստեղծագործության մեջ:

...Մեզ համար էական է բացահայտել ազգային ֆուլկլորի խոր ներդրումը Գորկու ստեղծագործության մեջ՝ գրական ուղու ամենասկզբնական կտապներից:

Գա հարատույրեց Գորկուն և բազմաթիվ սքանչելի մոտիվներով արտացոլվեց նրա պոնեյիայում¹:

Թե այս տեսակետից որքան բազմապիսի ու նշանակալից էր մեծ գրողի հարատույնը՝ կարող ենք պատկերացնել, եթե հիշենք, որ նրա հետաքրքրությունների սլոբաի մեջ էր մտնում նվիրանական, բելուսական, մոլդավական, թաթարական, շուվաշական, մորդավական, զապախական, բաշկիրական, հայկական և այլ ժողովուրդների ժողովրդական բանահյուսությունն իմանալը: Արդարև, սուսական և ազգային ֆուլկլորը դարձավ և բնդմիշտ մնաց Գորկու «մշտնջենական ուղեկիցը»²:

Ժողովրդական բազմազգ բանահյուսությունը Գորկու ունեցած մոտեցման ստեղծագործական բնույթը արտահայտվում էր նախ և առաջ նրանով, որ թեմաները, կերպարներն ու սյուժեները նոր ձևով էր իմաստավորում ու մեկնաբանում նա, օրգանապես մտցնում էր գեղարվեստական պատումի իր ինքնուրույն սիստեմի մեջ, որով գրանք նոր

¹ Н. К. Пиксанов, Горький и национальная литература, М., 1946, стр. 17 и 22.

² Նույն տեղում, էջ 19:

Նպատակամիտում էին ստանում: Մաքսիմ Գորկու երկերում ֆուլկլորային կերպարները, թեմաները, մոտիվներն ու սյուժեները ռևոլյուցիոն նշանակու-
թյուն և սոցիալական ներդրածման արտակարգ ուժ էին ձեռք բերում:

Մեր բազմազգ երկրի շատ ժողովուրդների հետ Մ. Գորկու ունեցած սերտ կապերը հարստաց-
րին նրա ստեղծագործությունը նոր թեմաներով: Խոսքի սքանչելի վարպետը բազմաթիվ երկեր գրեց
հյւրայական ժողովուրդների մասին: Այդ երկերը
նշանակալի դեր կատարեցին միջազգային բարե-
կամությունն ամրապնդելու գործում և ճոխացրին
սոցիալիստական ռեալիզմի արվեստը: Այն թեմա-
ները, կերպարները, մոտիվները, որ քաղված կամ
կապված էին Ուկրաինայի, Մոլդավիայի, Կովկա-
սի, Ղազախստանի, Բաշկիրիայի, Մորդվայի հետ,
մի առանձնակի բազմապիսություն են հաղորդում
Գորկու ժառանգությանը¹:

¹ Դժվար չէ համոզվել դրանում նրա այն երկերի հա-
սարակ ու բնավ ոչ լրիվ թվարկումով, որոնց մեջ արտա-
ցովել են մեր երկրի ժողովուրդները. «Մակար Չուգրա»,
«Պառավ Իդերդիլ», «Նանն ու նրա որդին», «Յուզդլյար»,
«Կիրգիզի պատմածը», «Շիաների տունը», «Կուլյերի կը-
ղը», «Գոլավայի տոնավաճառը», «Մ. Մ. Կոցյուբինսկի»,
«Ջարդ», «Կայեն ու Արտեմ», «Արդիականության մա-
սին», «Ինքնուս դրոդների մասին», «Վալկայի գրակա-
նությունը», «Կովկասյան դեպքերի մասին», «Եզրակա-
ցություն», «Գեղեցիկություն», «Մարդու ծնունդը», «Սառ-

Տարբեր ժողովուրդների ներկայացուցիչների կերպարները, նրանց կյանքի պատկերները, ազգային դանադան շրջանների բնության նկարագրությունները, փ պաշտպանություն ճնշված ժողովուրդների գրած հողվածներն ու ելույթները մեծ գրողի դեղարվեստական ստեղծագործության անբակտելի մասն են: Այդ աշխատանքի պրոցեսում հարստանալով՝ նա ստեղծեց ազգային տարբեր բնավորությունների, ազգային տարբեր կուլտուրաների ու կացութաձևի, ազգային տարբեր տրադիցիաների դասական նմուշներ:

Մաքսիմ Գորկուն որպես գրողի հարստացում էր նաև նրա աշխատանքը եղբայրական գրականությունների երկերը թարգմանելու, խմբագրելու ու հրատարակելու ասպարեզում, որի նպատակն էր մասսայականացնել լավագույն ստեղծագործությունները: Մաքսիմ Գորկին հաւանում է մեր առջև նաև որպես եղբայրական ժողովուրդների գրողների երկերի լրջախոհ ընթերցող, խստապահանջ գիտակ և որպես մի հոգստար քննադատ, որ ուսս գրականության զարգացումը լայն պլանով կապում էր ուկրաինական, բելոուսական, թաթարական, հայ, լատվիական ու այլ ազգային գրականությունների հետ:

ցահալ», «Մորգվուհին», «Իմ ուղեկիցը», «Երկու հոգի», ազգային հեռավոր կերպարներ «Հատակում» պիեսում, ինքնակենսագրական եռհատորում, «Մայր», «Երեքը» վիպակներում և այլն:

Լինելով տարբեր ժողովուրդների ստեղծած գեղարվեստական արժեքների նրբաճաշակ գնահատող, Մ. Գորկին օգտագործում էր նրանց ուսույցիսն երկերը իր պրոպագանդիստական գործունեության մեջ: Տվյալ գեպքում առանձնապես հատկանշական է Տ. Շևչենկոյի ստեղծագործության օգտագործումը ուկրաինական գյուղացիների հետ ունեցած պրոպագանդիստական գրույցներում:

Մեր երկրի ժողովուրդների առաջավոր հասարակական-գրական գործիչների հետ մեծ գրողի ունեցած բազմապիսի կապերը (ուղևորություններ, նամակագրություն, անձնական հանդիպումներ, մտերմական բարեկամություն, ձեռագրերին ու հրատարակություններին ծանոթանալ, քննադատական կարծիքներ և այլն) հաճախ նրա համար նախաուսույցիսն Ռուսաստանի, այնուհետ էլ ՄՍՌ Միության ժողովուրդների կյանքի մասին ունեցած պատկերացումները լրացնելու անսպասադբյուր էին: Այդ ձևով ստացված նյութերը չէին մնում որպես անշարժ ինտելեկտուալ կապիտալ, այլ ժամանակին ու մտածված կերպով օգտագործվում էին՝ գնելու բազմաթիվ ակտուալ հարցեր, որոնք կապված էին ժողովուրդների բարեկամության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարները զարգացնելու ուղղությամբ Կոմունիստական պարտիայի մզած պաշարի հետ: Նյբաշրական ժողովուրդների կյանքը և կուլտուրան իտրապես ճանաչող Մաքսիմ Գորկու գերը այս

տեսակետից վերին աստիճանի նշանակալի էր և շարունակում է մնալ:

Սակայն բանը չի սահմանափակվում նրանով, որ անհրաժեշտ ու կոնկրետ դիտելիքներով այնքան հարստացած Գորկին հանդես էր գալիս որպես ազգային հարցի լենինյան ուսմոճաքի հավատարիմ հետևորդ: Հենց այդտեղ են նաև Գորկու հումանիզմի ինքնատիպության ակունքները, հումանիզմ, որի անխախտ նշանաբանն էր՝ սիրել աշխատանքի մարդկանց՝ անկախ նրանց ազգային պատկանելության: Այդտեղ են գտնվում նաև հայրենասեր հեղինակի այն ազնիվ ու անսասան ինտերնացիոնալիստական համոզումների հիմնական, նախադրյալները, որոնք մղում էին նրան խորապես հետաքրքրվելու ամբողջ առաջադեմ մարդկության ճակատագրով, սրտանց համակրելու համայն աշխարհի ժողովուրդների ազատագրական շարժմանը և որոնք այնպիսի անդիմադրելի ուժ էին տալիս ֆաշիստական խավարասպաշտության, ամեն տիպի նացիոնալիզմի, կոսմոպոլիտիզմի, ռասայական խտրականության դեմ մղած նրա անխոնջ պայքարին: Այո, արդարև, ինչպես դիպուկ բնորոշել է Ստեփան Շահումյանը, Ա. Մ. Գորկին մտել է համաշխարհային ուսուցիչ-ուղատուական շարժման պատմության մեջ որպես խիզախ «դրոշակակիր ինտերնացիոնալիստական մաքուր զգացմունքների ու ձգտումների»: Մաքսիմ Գորկու և՛ հումանիզմը, և՛ ուսուցիչ-ուղատուական

ցիտնալիզմը, զերծ լինելով որևէ վերացական մտահայեցողությունից, սնվել էին հայրենի բազմազգ երկրի բարեբեր հողից, ոգշնչվել պատմականորեն աշնտեղ զարգացած միջազգային բարեկամության կենարար շնչով:

Քննադատական գրականության մեջ արդարացի է նշված Մ. Գորկու կյանքի և ստեղծագործության մասին. «Մեկուլյուցիոն ինտերնացիոնալիզմի դադափարները գրողի առջև բացեցին աշխարհի ժողովուրդների կյանքը, հարստացրին նրա ստեղծագործությամբ նոր կերպարներով, գույներով, մեղեդիներով և դարձան հրաշալի պոեզիայի արյուր «Մայր» վիպակում, «Խոտալական հեքիաթներ»-ում, սկնարկներում և այն կոչերում, որոնցով Գորկին գիմում էր աշխարհի ժողովուրդներին»¹:

Եվ օրինաչափ է, որ իր երկրի ժողովրդական բազմազգ դանգվածների իմաստությամբ, իր ինտերնացիոնալիստ ժողովրդի պատմական փորձով հարստացած այդ ուս մեծ գրողը Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեոլյուցիայի հաղթանակից հետո հանդես եկավ որպես սովետական բազմազգ գրականության ամենահեղինակավոր ու հանրաճանաչ կազմակերպիչը, ոգեշնչողն ու ղեկավարը:

² М. Юнович, Горький в борьбе за равенство и дружбу народов, М., 1954, стр. 4.

ՍՍՌՄ ժողովուրդների կուլտուրաների ու գրա-
կանությունների հետ կենդանի փոխազդեցու-
թյունից հարստացած Գորկու արդարև հիանա-
լի փորձը ինքնին ուսանելի լինելով՝ այդ բնագա-
վառում հանրաճանաչ նորմա դարձաւ սովետական
բազմազգ գրականութեան բոլոր գործիչների հա-
մար: Նրանք Գորկուց սովորեցին ու սովորում են
կառարելապես օգտագործել սոցիալիստական
ուեալիզմի մեթոդը, սովորեցին ու սովորում են
նաև լիովին օգտագործել փոխհարստացման հի-
րավի անսահման հնարավորությունները, որ ըն-
ձեռնում է սովետական դարաշրջանի գրական
բազմազգ պրոցեսը:

Իր ստեղծագործական ուղու սկզբին, փնչալես
նաև հետագա ամբողջ գրական գործունեութեան
ընթացքում Բելուսուսիայի ժողովրդական բանա-
ստեղծ Յանկա Կուլալան սովորում էր ուկրաինա-
կան մեծ կորզար Տարաս Շևչենկոյի ուսուցու-
ցիոն-դեմոկրատական պոեզիայի փորձից, նրա
սքանչելի տրագիցիաների տաղանդավոր հեռուորդ-
ների փորձից¹: Սակայն Յանկա Կուլալայից էլ
ուկրաինացի բանաստեղծներն էին ուսանում. այն
ամենի համար, ինչ նրանք ստեղծագործաբար ըն-
կալել էին Յանկա Կուլալայից, իրենց երախտա-
զլիտությունն արտահայտեցին նրա երեսնամյա

¹ Տե՛ս, օրինակ, М. Ларченко. Янка Купала и
Тарас Шевченко, „Полымя“, 1953, № 6, стр. 121—129
(բելոուսերեն):

հարեւյանի առթիւ ուղարկած սրտաբուէի շնորհա-
վորականի մեջ.

«Յանկա Կուպալան նույնքան սրտամոտ,
նույնքան հարազատ է Սովետական Ուկրաինայի և
կղբայրական մյուս սեպուրլիկաների համար, ինչ-
պէս Սովետական Բելոռուսիայի համար: Մենք
սիրում ենք նրա անզուգական երգերը, շատ բան
ենք սովորում մեր բարեկամ, ավագ վարպետ,
առաջին կարգի «հոգու ճարտարապետ» Յանկա
Կուպալայից»¹:

Ա. Կունեկչուկի ազգայնորեն ինքնատիպ և
նորարարական դրամատուրգիան, որ այնքան ար-
տահայտիչ կերպով արտացոլում է սովետական
մարդկանց մտքերը, զգացումներն ու ապրումները
և այնքան ոգեշնչված ձևով մարմնավորում նրանց
սոցիալիստական իդեալները, արժանի տեղ դրա-
վեց սովետական բազմազգ թատերական արվես-
տում, հարստացրեց նոր ու գունեղ կերպարնե-
րով, ուկրաինական իրականության դեղարվեստա-
կան պատկերներով: Ականավոր ուկրաինացի դրա-
մատուրգը վաղուց դարձել է սոցիալիստական
ոեալիզմի դրամատուրգիայի համամիութենական
մասշտաբով ճանաչված վարպետը և բարերար
ազդեցութիւն է գործում ամբողջ սովետական
դրամատուրգիայի վրա:

¹ „Полюмя революции“, 1935, № 12, стр. 11.

Սովետական դրամատուրգները Ա. Կոռնեյչուկից սովորեցին սրությամբ ընկալել մեր կյանքի կոնֆլիկտները, մի բան, որ թույլ է տալիս ընտրել ակտուալ թեմա և վերարտադրել այն դրամատուրգիական գրավիչ մտահղացմամբ: Նրանց հարըստացրել ու հարստացնում է Կոռնեյչուկի՝ սոցիալիստական շինարարության լիարյոճ, դրական հերոսներ կերտելու, նրանց հոգևոր բազմակողմանի աշխարհը, նրանց բնավորությունների ձևավորումը ու զարգացումը վառ ցուցադրելու վարպետությունը: Ուսանելի են ուկրաինացի դրամատուրգի ոճի այնպիսի ընդհանրացումները, ինչպես երգիծական տիպեր ստեղծելը, դրամատիզմի և հումորի նուրբ զուգակցումը, կոմեդիական դրությունների օգտագործումը, դրամատուրգիական պատմելաձևի առանձին տարրերի բեմականության հիանալի ըմբռնումը, գործող անձանց լեզվի գունեղ անհատականացումը:

Հայտնի բանաստեղծ Մ. Իսակովսկին, որ իր ստեղծագործության մեջ այնքան գեղեցիկ կերպով մշակել է սովետական հայրենասիրության, սիրեցյալ հայրենիքի ժողովուրդների բարեկամության թեման («Երգ Հայրենիքի» և այլն), մըշտապես չափածո գործեր է թարգմանում բելոռուսական, ուկրաինական և այլ դրականություններից: Յանկա Կուսպալայի, Մ. Բոգդանովիչի, Յակուբ Կոլասի, Արկադի Կուլեշովի, Տարաս Շևչենկոյի, Ի. Ֆրանկոյի, Լեսյա Ուկրաինկայի եր-

կերից կատարած նրա թարգմանությունները համամիութենական ընթերցողին հասցրին դրանց արույն հրապույրը, սքանչելի բույրը և բանաստեղծական յուրօրինակ երանգը: «Թե ինչպիսի հաջողությամբ է Իսակովսկին լուծում թարգմանիչ-բանաստեղծի առջև հառնող դժվարագույն խնդիրները, երևում է այն լայն ժողովրդականությունից, որ ձեռք են բերել մեզանում նրա թարգմանած բելոռուսական «Ողջ-առողջ եղեք» (որ պրել է բելոռուս բանաստեղծ Ադամ Ռուսակը), «Երկու բազե», «Է՛», պառավել եմ մանկի՛կս» երգերը, բելոռուս բանաստեղծ Արկադի Կուլեշովի «Բրիգադի դրոշը» և «Ծնծղա» պոեմները: Իսակովսկու շնորհիվ այս բանաստեղծություններն ու երգերը մտել են սովետական ռուս պոեզիայի մեջ՝ առանց իրենց արժանիքներից որևէ մեկը կորցնելու¹:

Թարգմանական այդ սիստեմատիկ աշխատանքի պրոցեսում Մ. Իսակովսկին սովետական ժամրոջ բազմազգ գրականությունը հարստացնելով՝ ինքն էլ անձամբ հարստացավ որպես ռուսական շափածոյի ինքնատիպ վարպետ: Բելոռուսական կամ ուկրաինական պոեզիայի կատարյալ թարգմանություններ տալու համար նա ուսումնասիրեց եզրայրական ժողովուրդների կուլտուրան.

¹ В. Александров, Михаил Некосовский. Критико-биографический очерк, М., 1950, стр. 66—67.

մտալ բանաստեղծների կերտած աղբային կերպարների հրաշալի աշխարհը: Իսկ եթե հաշվի առնենք այն, որ մա թարգմանել է մոտ քսան հազար շափատող, ապա կարելի է պատկերացնել, թե որքան շատ բան է տվել դա նրան կատարելագործելու և հարստացնելու համար իր բանաստեղծական լեզուն, գեղարվեստական-պատկերման հնարանքները, տաղաչափության բարդ տեխնոլոգիան: Այդ աշխատանքի մեջ անկասկած կատարելագործվել է նաև Իսակովսկու երգայնության սաղանդը, որովհետև ուկրաինական ու բելոռուսական բանաստեղծական կուլտուրայի մեջ նա գտել է ճշմարտացի ու խորապես հուզական պոեզիայի գերույ երգայնության, մելոդիկության ու երաժշտականության սքանչելի նմուշներ: Բանաստեղծական այդ հարուստ աշխարհի հետ ունեցած ստեղծագործական սերտ շփման ընթացքում զարգացավ ու ընդլայնվեց ուսու բանաստեղծի պատկերային-զուգորդական մտածողությունը, ճոխացավ կյանքի, մարդկային հոգու նվիրական շարժումների խոսքային գեղարվեստական պատկերման նրաներկապնակը:

Թարգմանություններ տնելու ընթացքում Իսակովսկին ուկրաինական և բելոռուսական պոեզիայում ուսանելի կերպարներ էր գտնում թե՛ իր, թե՛ օտովել ևս երիտասարդ բանաստեղծների համար: Ահա թե ինչու իր «Բանաստեղծական մտահղացման ու գաղափարականության մասին» հե-

տաքրքիր հոգւածում նա բանաստեղծական միտքն արտահայտելու զանազան ձևեր ցույց տալու համար օրինակ է բերում Արկադի Կուլեշովի «Կոմերիտական տոմս» բանաստեղծությունը: Բեռուռս բանաստեղծը ոչ թե պարզապէս պատմել է Հայրենասկան Մեծ պատերազմի տարիներին կոմերիտականների հերոսական վարքի բազմաթիւ վաստերից մեկը, այլ կարողացել է այնքան պատկերավոր ու սրտառուչ կերպով ցույց աւել սովետական երիտասարդ սերնդի հայրենասիրությունն ու հավատարմությունը կոմունիզմի իդեալներին, որ նրա բանաստեղծական պատումը առանձնահատուկ նշանակութուն է ստացել: Այսպէս է Իսակովսկին մեկնաբանում դա.

«Կարգալով Կուլեշովի բանաստեղծությունը՝ մենք խորապէս զգում ու հասկանում ենք, թե ինչպիսի՞ հոգեկան ուժեր են թաքնւած մեր սովետական երիտասարդության մեջ, որքա՞ն հավատարիմ է նա իր հայրենիքին, իր Կոմունիստական պարտիային, որքա՞ն անվեհեր ու անասան է նա նույնիսկ ամենաժանր ընկերներին: Այդպիսի երիտասարդությանը չի կարելի ընկձել, չի կարելի ծունկի բերել: Եվ նրա այն ներկայացուցիչները, որոնք ընկան թշնամու դեմ մզված պայքարում, ընդմիշտ կմնան որպէս հայրենիքին ու ժողովրդին ծառայելու օրինակ:

Հենց այդ էլ ուզեցել է ասել Կուլեշովը իր բանաստեղծությամբ, հենց այս բանաստեղծական

միտքն է ուղեցել արտահայտել նա: Եվ արտահայտել է ամբողջ լրիվությամբ, որը հնարավոր է խհարկէ մի փոքրիկ բանաստեղծության մեջ»¹:

Այսպիսով Մ. Իսակովսկին ոչ միայն ցույց է տվել, թե ինչպէս և ինչու սովետական բազմազգ գրականութեան լավագույն ստեղծագործությունները գեղարվեստական կերպարներին նշանակություն են ստանում բանաստեղծություններ թարգմանող բոլոր անձանց համար, այլև մի փոքր բացահայտել է բանաստեղծների փորձը խորամիտ կերպով յուրացնելու ծածուկ, խիստ բարդ պրոցեսը, ինչ լեզվով էլ գրեն նրանք:

Պատմական կապերի մոտիկությունը երևան է դալիս նաև այն հեղինակներին ստեղծագործության մեջ, որոնք աշխատում են երկու կամ ավելի լեզուներով և մասնակցում են մի քանի գրականություն ստեղծելուն. օրինակ՝ Մաքսիմ Գաֆուրին հանդես է գալիս միաժամանակ որպէս և՛ բաշկիրական, և՛ թաթարական գրականությունների կլասիկ, Սադրեդին Այնին միաժամանակ ճանաչված է թե՛ տաջիկական, թե՛ ուզբեկական սովետական գրականությունների հիմնադիր: Միխայիլ Սադովյանուն ռումինական և մոլդավական գրականությունների կլասիկն է: XVIII դարի նշանավոր հայ լիբրիկ բանաստեղծ, հումանիստ Սայաթ-Նովան գրել

¹ М. Исаковский, О поэтическом мастерстве М., 1952, стр. 52—53.

է իր գործերը հայերեն, ազրբեջաներեն ու վրացերեն, և նրա ստեղծագործությունը համապատասխան տեղ է գրավում այդ երեք ազգութիւններէ զրականութեան մեջ, որոնք փոխադարձաբար հարստացրել են իրար անցյալում և այժմ:

Սովետական յուրաքանչյուր գրողի համար, ինչ լեզվով էլ նա գրի իր երկերը, փոխհարստացումը դարձել է կենսական անհրաժեշտութիւն, հոգեկան պահանջ: Ահա թե ինչու Իլյա էրենբուրգը, արտահայտելով ՍՍՌՄ գրական բազմազգ հասարակայնութեան այդ տրամագրութիւնները, մեծ հուզմունքով, հայրենասիրական մեծ պաթոսով գրում էր Հայրենական Մեծ պատերազմի տարիներին մեր երկրի կուսուրական կյանքի, սովետական բազմազգ զրականութեան այդ բնորոշ առանձնահատկութեան մասին.

«Մեր տերութիւնը՝ Ռուսաստանը, Սովետական Միութիւնը, ազգային և բազմազանութեան մտուշ է: Եթե ուղբեկներն ու զազախները, թաթարներն ու հայերը, վրացիներն ու բաշկիրները հերոսաբար մարտնչում են ռուսների հետ ձեռք-ձեռքի սուլած՝ յայտ գրա պատճառն այն է, որ մեր հայրենիքը կատարել է այն հրաշքը, որ երազում էին բոլոր ժամանակների փիլիսոփաներն ու սրբապետները. հղբայրութեան դաղափարը մտել է յուրաքանչյուր քաղաքացու մտի ու արջան մեջ: Վրաց նկարիչների գունանկարչութիւնը, Հայաստանի մեղեդիները, ուկրաինացիների թատերական

արվեստը, ուղբեկների ու թաջիկների պարերը
ընդարձակ ու բազմազեմ հողի վրա աճած ազդա-
ջին արվեստի ծաղիկներն են: Սովետական մի ժո-
ղովրդի դադանիքը ընդլայնում է մյուսի հողին...
Իրահայեցանի ու Ռիլսիու բանաստեղծությունները
հարստացրին ուսս պոեզիան, ինչպես որ ուսս
պոեզիան հարստացրել է սովետական բոլոր ժո-
ղովուրդների գիտակցությունը»¹:

¹ Ի լ յ ա Է ը ն ը ու ը ղ, Արվեստի պարտակա-
նությունը, «Լիտերատուրա և խելուստովո», 1943, հուլի-
սի 3:

5. ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱԶԳԵՐԻ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՓՈՐՁԸ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ
ԳՊՐՈՅ ԵՆ

Սովետական գրողների համամիութենական համագումարները, վարչության պլենումները, նախազահույթյան տարբեր նիստերը և ՍՍՌՄ Գրողների Միության մասսայական դանազան միջոցառումները, որոնց գործոն կերպով մասնակցում են բոլոր եզրայրական յուզացիս գրականությունների ներկայացուցիչները, նպաստում են նրանց կապերի զարգանալուն:

Համագումարներում, խորհրդակցություններում ու դիսկուսիաներում տարբեր ռեսպուբլիկաներից եկած գրողները ավելի մոտիկից են ծանոթանում իրար, իրար հետ հաստատում ու զարգացնում անձնական բարեկամական կապեր, փորձի փոխանակություն են կատարում ու միասին լու-

ծում համամիութենական գրական շարժման հրատապ հարցեր:

Սովետական գրողների Համամիութենական կոաջին համագումարը 1934 թվականին առաջին անգամ ցուցադրեց տարբեր ազգությունների սլավոնական մեր բոլոր գրողների միասնությունը: Մաքսիմ Գորկին համագումարը բանալիս արտասանած իր ներածական խոսքում դոհունակությամբ նշեց, որ «մեր բոլոր ռեսպուբլիկաների այլացել ու տարակցու գրականությունը հանդես է դալիս որպես մի ամբողջություն, բոլոր երկրների ռուլյուցիոն պրոլետարիատի և ամբողջ աշխարհի մեզ բարեկամ գրողների առջև»¹: Սոցիալիստական սեպտիմի հիմնադիրը համագումարում կարդացած ծրագրային ղեկուցման մեջ ասում է, որ անցյալում բնկճված և ծւկված բոլոր ժողովուրդները այժմ ամեն տեսակ հնարավորություն ունեն ապատորեն առաջ քաշելու տաղանդներ:

«...Զսկաք է մոռանալ, որ Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության ամբողջ տարածության վրա արագ դարգանում է աշխատավոր ժողովրդի յոջ մասսայի վերածնման պրոցեսը «դեպի ազնիվ, մարդկային կյանք», դեպի նոր պատմության ազատ ստեղծումը, դեպի սոցիալիստական կուլտուրայի կերտումը: Մենք արդեն տեսնում

¹ А. М. Горький, О литературе, Литературно критические статьи, М., 1953, стр. 690.

ենք, որ ինչքան առաջ ենք ընթանո՞ւմ, այնքան սովիլի հզորապես է այդ պրոցեսը երևան բերում՝ 170 միլիոնանոց մասսայի մեջ թարնված ընդունակություններն ու տաղանդները»¹։

Մաքսիմ Գորկու՝ այսպիսի իմաստությամբ բացահայտված ու բացատրված սովետական գրականության բազմազգությունը հաստատվեց նաև ողբալին առանձին գրականությունների մասին արված հատուկ զեկուցումների և նրանց ներկայացուցիչների ելույթների մեջ։ Համագումարի ամբողջ աշխատանքը հիրավի տոգորված էր տարալեզու գրողների փորձի փոխանակությամբ, նրանց բարեկամական համագործակցությամբ՝ ստեղծագործական հետագա կապերը զարգացնելու կոնկրետ ձևեր որոշելիս։

Սովետական գրողների Համամիութենական Երկրորդ համագումարը, որ տեղի ունեցավ Մոսկվայում, 1954 թ. գեկտեմբերի 15—26-ը, ինչպես և Առաջին համագումարը, որ տեղի էր ունեցել 1934-ին Մ. Գորկու ղեկավարությամբ, հիրավի նոր, նշանակալի էտապ հանդիսացավ սովետական ժողովուրդների՝ գրողների ստեղծագործական կապերի զարգացման գործում և խոշորագույն իրադարձություն հանդիսացավ մեր երկրի կուլտուրական կյանքում։ Համագումարը նորից ցու-

¹ А. М. Горький, О литературе. М., 1953, стр. 713—714.

յադրեց գեղարվեստական նոր երկեր ստեղծելու, կամունիզմի կասարյալ հայթանախի համար մեր ժողովրդի մղած պայքարին օգնելու վեհ նպատակով սղևորված սովետական գրականության բազմազգ կադրերի աճած գաղափարա-ստեղծագործական միասնությունը:

ՄՄԿՊ Կենտրոնական Կոմիտեն Գրողների Երկրորդ համագումարին ուղղած սղջույնի մեջ բարձրը գնահատեց եղբայրական բոլոր ժողովուրդների գրականությունների խոշոր հաջողությունները, որ ձևոք էին բերվել մշտական սերտ համագործակցության հիման վրա:

«Սովետական ռեսպուբլիկաների տնտեսական, բազաբական և կուլտուրական բուն վերելքի արդյունքը եղավ ՄՄՌՄ ժողովուրդների գրականությունների ծաղկումը, — ասված է այդ ծրագրային փաստաթղթում: — Ազգային գրականությունների զարգացումն ու փոխադարձ հարստացումը տեղի է ունենում բոլոր եղբայրական ռեսպուբլիկաների սերտ համագործակցությամբ»¹:

Վերին աստիճանի հատկանշական է սովետական բազմազգ գրականության հաջող զարգացման պրոցեսի այս բնորոշումը մեր պարտիայի կողմից, որը միշտ ու հոգաստարություն մղում է մեր գրողներին գեղի նրանց կապերի ու փոխհարստացման անավելագույն զարգացումը: Վերևում

¹ «Պրավդա», 1954, գեկահմբերի 16:

բերված բնորոշումը իմաստուն կերպով ընդհանրացնում է սովետական գրականության քառասնամյա փորձը, շեշտում նրա գործիչների կապերի շափաղանց կարևոր նշանակությունը և արոշում գրողների համագումարի աշխատանքի ուղղությունը:

Եվ իսկապես. Գրողների Երկրորդ համագումարի ամենաբնորոշ գիծը եղավ եղբայրական գրականությանների աճող փոխազդեցությունը: Այդ մասին համոզիչ կերպով խոսեց Ա. Սուրկովը «Սովետական գրականության վիճակի ու խնդիրների մասին» զեկուցման մեջ՝ ընդգծելով այդ պրոցեսի պատմա-գրական առանձնակի կարևորությունը. «Համագումարների միջև ընկած քսան տարիների ընթացքում զգալի շափով ամրացել են եղբայրական առանձին գրականությունների անմիջական ստեղծագործական կապերը: Մի սեսպուրլիկայի գրողները մեկնում էին ու մեկնում են մի ուրիշ սեսպուրլիկա և ծանոթանում եղբայրական ժողովուրդների կյանքին: Պատերազմից հետո այս հիանալի տրադիցիան շարունակվեց ու զարգացավ եղբայրական շատ գրականություններում, ծառայեց ու ծառայում է գեուես մինչև վերջին տարիները եղբայրական շատ գրականությունների համար բնորոշ ազգային ինքնամիտփության վերջնական վերացման գործին»¹:

¹ «Լիտերատուրնայա գազետա», 1954, դեկտեմբերի 10:

Բնորոշ է, որ եթե Գրողների Առաջին Համագումարում եզրայրական գրականությունների կապերի, փոխազդեցությունների ու փոխհարստացումների պրոբլեմատիկան զեռես լայն քննարկման շէր ենթարկվում, ապա այժմ դա դրվում ու լուծվում էր թե՛ Երկրորդ Համագումարի հիմնական զեկուցումներում, թե՛ պատգամավորներից շատերի ելույթներում: Եվ դա բնական է, որովհետև անցած քսան տարվա ընթացքում այդ փոխազդեցության պրոցեսը վիթխարի շափերով աճեց ու հանդես եկավ իր ամբողջ բազմակողմանիությամբ ու գործոնությամբ:

Եզրայրական ազգային փոխազդող գրականությունների ճակատը զգալի շափով մեծացավ վերջին տարիներին: Սովետական գրականությանը միաձուլվեցին ու Գրողների Երկրորդ Համագումարում ներկայացվեցին Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, Մոլդավիայի Բեսարաբիական մասի, Բուկովինայի, Անդրկարպատյան Ուկրաինայի, ՍՍՌ-ի հետ վերամիավորված Ուկրաինայի ու Բելոսուսիայի արևմտյան մարզերի ստեղծագործական նոր ուժերը:

Եվ Առաջին Համագումարից մինչև Երկրորդն ընկած քսան տարվա ընթացքում է՛լ ավելի ստվարացավ սովետական բոլոր գրողների համար ընդհանուր բազմամիլիոն ընթերցողների լսարանը թե՛ մեր երկրում, թե՛ նրա սահմաններից դուրս: Այս հանգամանքը, որ կապված է բուն իսկ

կյանքին, եղբայրական բոլոր ռեսպոնզիվիկաներում կուլտուրական ռեուլյուցիայի կատարած հսկայական հաջողութուններին, հանդես է գալիս անշուշտ որպես կազմակերպող գործոն ազգային գրողների կապերն է՛լ ավելի սերտորեն զարգացնելու ասպարեզում:

Գրողների Երկրորդ համագումարը մասնակիցների կազմով, հիմնական ղեկուցումների բովանդակությամբ, սովետական բազմազգ գրականության զարգացման ահտուալ հարցերը քննարկելու բնույթով հանդիսացավ սոցիալիստական ռեալիզմի տարակերպ լարպետների խիստ բազմազան և հաջող հետևանքներ ունեցող կապերի հիանալի արտահայտությունը: Նպաստակների միասնությամբ համախմբված քառասունհինգ ազգությունների իրավահավասար ներկայացուցիչները համագումարում հազորդեցին իրենց հարուստ փորձը, խստապահանջությամբ դնահատեցին գրչակից ընկերների հաջողութունները և միասին որոշեցին, թե ինչպես ավելի լավ ու շուտ բավարարեն կոմունիստական հասարակութուն կերտող ժողովրդի հոգևոր աճող պահանջները:

Սովետական բազմազգ գրականության գործիչների այդ փոխըմբռնումը, եթե դիտելու լինենք նրա առաջնահերթ ու մեծ խնդիրների լույսի տակ, թույլ կտա եզրակացնել, որ մոտիկ տարիներին եղբայրական բոլոր գրականությունների փոխհարստացման ու փոխազդեցության պրոցեսը կօգնի

յուրաքանչյուրին հասնելու զարգացման ավելի բարձր ու նոր աստիճանի:

Համագումարում յուրաքանչյուր գրականութ-
յան հաջողությունները դիտվում էին ամբողջ սո-
վետական գրականության փորձի լույսի տակ:
Արձակը, պոեզիան, գրամատուրգիան, քննադա-
տությունը կուլեկտիվ կերպով վերլուծելու, սոցիա-
լիստական սեպարատի էսթետիկայի ակտուալ
սլոթբլեմները լուծելու, ինչպես նաև մեր բազմազգ
գրականության ընդհանուր խնդիրները քննարկելու
ընթացքում բերվում էին շատ ազդությունների
գրողների երկերը: 1954 թ. գեկտեմբերի 22-ի «Լի-
տերատուրնայա դազետա» թերթի «Բարեկամու-
թյուն ու միասնություն» առաջնորդող հոդվածը,
որ ընդհանրացնում էր համագումարի աշխատան-
քի փորձը, նշում էր. «Այժմ մեր ամբողջ ազգային
հարուստ գրականության միասնությունն ու ընդ-
հանրությունը այնքան ակներև է, իսկ ազգային
ստանձինն գրականությունների հասունությունն ու
փոխադարձ նշանակությունն այնքան մեծ, որ դե-
կուցողն ու հարակից գեկուցողները շեին կարող
սովորաքանակ նյութ շրջել մեր ազգային գրա-
կանություններից: Այս փաստի քաղաքական ու
կուլտուրական նշանակությունը ստավել ևս մեծ է,
որովհետև իբրև հարակից գեկուցողներ հանդես են
եկել ուկրաինացի գրամատուրգ Ա. Կոռնեյչուկը,
ուկրաինացի բանաստեղծ Մ. Ռիլսկին, ադրբե-

ջանցի բանաստեղծ Ս. Վուրդունը և դադախ գրող
ու գիտնական Մուխթար Աուեզովը»:

Բարեկամության ու համերաշխության զգաց-
մունքով էին տողորված իրենց գրականություննե-
րի լայն կապերի և դրանց հետագա պարգայման
ուղիների մասին պատմող գրողների ելույթները:
Կիրգիզ բանաստեղծ Կ. Մալիքովը խոսելով տաջի-
կական, ուկրաինական, վրաց ու լիավական հե-
ղինակների երկերից իր մայրենի լեզվով կատար-
ված թարգմանությունների մասին, վստահեցրեց
համագումարին, որ ավելի մեծ շափերով է պար-
դանալու այդ ուղղությամբ կատարվող աշխա-
տանքը: Ա. Տալվիրը շուվաշ գրողների և ամբողջ
շուվաշ ժողովրդի անունից շնորհակալություն
հայտնեց ուկրաինական գրողներին, որոնք հու-
շարձան են կանգնեցրել Չեռնիգովյան մարզում
թաղված, շուվաշական սովետական պոեզիայի
հիմնադիր Սեսայել Միշիին: Նաիրի Զարյանը հա-
վաստում էր, որ թե՛ հայ և թե՛ ՍՍՌՄ մյուս ժո-
ղովուրդների գրողները վարժվել են սովետական
ամբողջ գրականության մասին խոսել՝ նրա հիմ-
նական պրոցեսների կոնկրետ իմացությամբ և
միտանական ընտանիքի հպարտ զգացմունքով:

Գ. Լեոնիձեն հիշեց Գավիթ Գուրամիշվիլուն,
որ ապրում էր XVIII դարում, ուստական զինվոր
էր, ուկրաինական երկրագործ և վրաց մեծ բանա-
ստեղծ. նա դարերի ընթացքում ստեղծված և սովե-
տական ժամանակաշրջանում մեծ շափերով աճած

միջազգային բարեկամության տրադիցիաների կենդանի մարմնացումն էր: Խոսքի վարպետներին թեւավորող և ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների կողմից սիրով ընկալվող այդ բարեկամության որակապես նոր ուրույնության մասին է խոսում Սուլեյման Ստալսկու իմաստուն ասույթը, որ բերեց իր ճանուցում Ռ. Համգաթովը. «Ես ո՛չ չեզզի բաճառատեղծ եմ, ո՛չ էլ կովկասյան, այլ սովետական բանաստեղծ»:

Գրողների համագումարում հանդես եկողներին շատերը միահամուռ կերպով հավաստում ու համոզիչ կերպով ասպացուցում էին, որ միայն փոխհարստացման, փոխազդեցության ու բարեկամական աջակցության իրադրության մեջ ՍՍՌՄ ժողովուրդների գրականությունները կարող էին հաջողությամբ դարձանալ սոցիալիստական ուսուցիչի, կոմունիստական պարտիականության, բարձր գաղափարականության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի գրողի ներքո: Այդպիսի պայմաններում միայն մեր երկրի չլուրաքանչյուր ժողովրդի տաղանդավոր գրողները կարողացան համամիութենական ճանաչում ձեռք բերել, ազատորեն չլուրացնել ուսուցիչ գրականության փորձը և սպա իրենց նվաճումներով հարստացնել եղբայրական գրականությունները:

«Սովետական իշխանության մեծագույն նվաճումներից մեկը կուլտուրական շինարարության ասպարեզում ՍՍՌՄ ժողովուրդներին կուլտուրա-

չի տրժեքներով փոխադարձաբար հարստացնելն է, — համագումարի ամբիոնից ասաց ի. Ռեմեկ-դասը (Էստոնիա):— Սովետական իշխանությունը ջնջեց մեծ ու փոքր ժողովուրդների տարբերու-թյունը կուլտուրայի բնագավառում, և այն ամենը, ինչ տրժեքավոր է ու ստաջադիմական, դարձավ Սովետական Միության ժողովուրդների ամբողջ բնատանիքի սեփականություն: Այդ փոխհարստաց-ման պրոցեսում էստոնական գրականությունն ան-ցավ իր ազգային սահմանները, և էստոն գրողների լավագույն գրքերը այժմ հայտնի են ՍՍՄԽ աշխա-տավորների հոծ գանդվածներին»¹:

Սովետական գրողների համար, ո՞ր ռեսպուբ-լիկայում էլ որ նրանք լինեն, մեծ երջանկություն է, որ նրանք աշխատում են իրենց անկեղծ բա-րեկամների ստեղծագործական մեծ կոլեկտիվի հետ անքակտելի կապ պահպանելու ոգեշնչող դի-տակցությամբ: Գրողների համագումարի այդ ընդ-հանուր տրամադրությունը շատ լավ արտահայտեց իր ճառում Օ. Գոնչարը.

«Այժմ ավելի, քան երբևիցե, մենք մեծ հնա-րավորություններ ունենք աճելու, կատարելագործ-վելու, ստեղծագործական փորձով փոխադարձա-բար հարստանալու համար: Մեզ՝ ուկրաինական գրողներիս, երբեք չի լքում այն զգացողությունը,

¹ «Լիտերատուրնայա գաղետա», 1954, դեկտեմբե-րի 24:

որ մենք աշխատում ենք բարեկամների շրջանում, սակեղծագործական ազնիվ մրցակցության միջուկը բացում: Ռուս գրականության երկերի հետ միասին օրգանապես մեր փորձի գանձարանն են մտել մյուս ժողովուրդների գեղարվեստական նվաճումները: Մեր գրողները աշագիր հետևում են այն պրոցեսներին, որոնք աեղի են սնենում, օրինակ, բերտուսական արձակում, որն այնքան մտա է մեզ թե՛ լեզվով, թե՛ թեմատիկայով և թե՛ ժողովրդի բանաստեղծական հզոր սակեղծագործությունից եկող իր պոետականությամբ: Իսկ ինչպիսի՞ ուրախությամբ մենք վերջերս բացահայտեցինք մեզ համար, օրինակ, լատվիական արձակը՝ ամենասովորականից մեկը հզորալիան գրականությունների բնատանիքում: Կարծում ենք, որ ուկրաինական գրականության երկերն էլ անհետ շեն անցնում հզորալիան սեսպուբլիկաների գրողների համար»¹:

Գրողների համագումարում իր ամբողջ պատմական մեծությամբ հասնեց և ըստ արժանվույն գնահատվեց սուսական թարգմանական գրականության ազնիվ միասին, որպես սեալիստական արվեստի բարձր գպրոց բոլոր հզորալիան գրականությունների համար, որպես տարրեր ազգությունների գրողներին համախմբելու հզոր ուժ:

¹ «Լիտերատուրնալա գոգետա», 1954, գեկտեմբերի 21:

երախտաագիտութեամբ էր այս մասին խոսում Սամեղ Վուրդունը սովետական պոեզիայի վերաբերյալ իր հարակից զեկուցման մեջ: Ուրիշ շատ ելուցթներում նույնպիսի հոգեբուխ երախտաագիտութեամբ ընդգծվում էր, որ ուսանց հզոր լեզուն անգնահատելի ծառայութեան է մատուցել ՍՍՌՄ ժողովուրդների ստեղծած կուլտուրական ու զեղարվեստական արժեքները լայնորեն փոխանակելու, համամիութենական ու համաշխարհային ճանաչում ձեռք բերելու գործում:

Գրողների համագումարում հատուկ ուշադրութեան դարձվեց ՍՍՌՄ ժողովուրդների գրականութեանները թարգմանելուն, որպես բարեկամական կապի ամենակարևոր ու ամենազարգացած ձևերից մեկին: Այս հարցի մասին համագումարը լսեց ու քննարկեց Պ. Անտոնովսկու, Մ. Աուեզովի և Մ. Ռիլսկու հատուկ հարակից զեկուցումը: Քննադատարար վերլուծելով առաջադիմական գրականութեան հակաշահական փորձը, նրանք գնահատում էին այդ աշխատանքը որպես «գրողների ամենափոքր բարեկամութեան ակտ»: Նրանց պատկերազար բնորոշմամբ «ազգային գրողի համար ուստերեն թարգմանվելը աշխարհ տանող գարսբա է»:

Գրողների նրկրորդ համագումարն անցավ պրոլետարական ինտերնացիոնալիզմի, սովետական բազմազգ գրականութեան միջազգային հեղինակութեան տևման նշանաբանի ներքո: Համագումարի աշխատանքին ակտիվորեն մասնակցեցին

մեծ Չինաստանի, Ժողովրդական դեմոկրատիայի երկրների և կապիտալիստական աշխարհի առաջադեմ գրողները: Եղբայրակիչ խոսքում Ա. Սուրկովը հասուկ ուշադրություն դարձրեց «այն վերին ստաիճանի ուրախալի փաստին, որ Սովետական Միության գրական հարաբերությունների միջև հաստատված համագործակցության և փոխազդեցության մեծ օրենքը այժմ արդեն սկսել է դորժել նաև Ժողովրդական դեմոկրատիայի երկրների բարեկամ գրողների և ամբողջ աշխարհի առաջադեմ գրողների հետ ունեցած մեր հարաբերությունների մեջ»¹:

Եղբայրական բոլոր գրականությունների ծաղկման հեռանքով նրանց առջև բացվեցին նոր հեռանկարներ, ծաղեցին նոր ու մեծ խնդիրներ: Այդ խնդիրները հաջող լուծելու գործում առաջվա պես մեծ դեր են կատարում ՍՍՄԽ Ժողովուրդների գրականությունների միջև եղած մշտական կապերն ու փոխհարստացումը:

¹ «Լիտերատուրնայա գոպետ», 1954, դեկտեմբերի 27:

6. ՍՍՈՒՄ ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՐ

«Կոմունիստական պարտիայի մանիֆեստ»-ում
Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը գրել են, որ «Համաշխարհային
շուկայի շահագործման միջոցով բուրժուա-
զիան բուրժ երկրների արտադրությունն ու սպա-
ռումը դարձրել է կոսմոպոլիտական», որ «ի մեծ
ցավ ուսուցիչներին՝ նա արդյունաբերության
ստրի տակից խլեց ազգային հողը», ուստի և «հին
պահանջների փոխարեն, որոնք բավարարվում էին
հայրենի արտադրանքերով, ծնունդ են առնում նո-
րերը, որոնց բավարարման համար պահանջվում
են ամենահեռավոր երկրների և ամենատարբեր
կլիմաների արտադրանքներ»¹:

Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, «Կոմունիստական
պարտիայի մանիֆեստը», Երևան, 1948, էջ 58:

Աշխարհի երկրների ու ժողովուրդների կապե-
 րը, որ զարգացրեց կապիտալիզմը հասարակա-
 կան-արտադրական հարաբերությունների բնագա-
 վանում, կանխորոշեցին լայն կապերի զարգացու-
 մը նաև կուլտուրայի, գիտության, գրականու-
 թյան ու արվեստի ապարեզում: Մարքսիզմի կա-
 սիկները ոչ միայն նշում էին այս հանգամանքը,
 այլև բացում, օրինակի համար, համաշխարհային
 գեղարվեստական կուլտուրայի հեռանկարը. «Հին
 տեղական և ազգային կղզիացածության և սեփա-
 կան արտադրության արդյունքների հաշվին գո-
 յություն պահելուն փոխարինելու է գալիս ազ-
 գերի փոխադարձ բազմակողմանի կապն ու բազ-
 մակողմանի կախումը: Այս բանը հախտարապես
 մերաբերում է ինչպես նյութական, այնպես էլ հո-
 րևոր արտադրությանը: Առանձին ազգերի հոգևոր
 գործունեության արդասիքը դառնում է ընդհանուր
 սեփականություն: Ազգային միակողմանիությունն
 ու սահմանափակությունն ավելի ու ավելի անհնար
 են դառնում, և բազմաթիվ ազգային և տեղական
 գրականություններից գոյանում է համաշխարհա-
 յին մի գրականություն»¹:

Այդ պրոցեսը անհամեմատ ավելի լրիվ ու
 ինտենսիվ կերպով տեղի է ունենում այժմ սոցիա-
 լիստական լագերում, որը համախմբում է ՍՍՌՄ
 և ժողովրդական գեմոկրատիայի երկրների մոտ

¹ Կ. Մարքս և Ֆ. էնգելս. «Կոմունիստական
 պարտիայի մանիֆեստը», Երևան, 1948, էջ 57:

ինը հարչտը միլիոն աշխատավորների: Նրանց քա-
ղաքական ու անտեսական բարեկամական համա-
գործակցության գարգացումը կանխորոշում է նաև
հոգևոր բազմակողմանի փոխհարստացումը: Ազա-
տագրվելով բուրժուազիայի ափրապետությունից և
տաբերեր ժողովուրդների ազգային գերիշխանու-
թյունն ու նրանց ինքնուրույն կուլտուրան ոչնչաց-
նելու կոսմոպոլիտական տենդենցներից՝ այդ եր-
կրրները ստեղծագործական վիթխարի աշխատանք
ժավալեցին իրենց կուլտուրան ու գրականությունը
բարձրացնելու համար:

Սովետական գրականության բազմազգ բնույ-
թը, որպես նրա ամենարնորոշ հատկանիշ, սկզբ-
բունքորեն նոր երևույթ է համաշխարհային գրա-
կան շարժման պատմության մեջ: Սոցիալիստա-
կան բովանդակությամբ միասնական և ազգային
ձևերով բազմազան սովետական գրականությունը
ինքնին սոցիալիստական իրավահավասար ազգե-
րի ու ժողովուրդների գրողների գաղափարապես
միակուս համախմբումն է: Նախորդ սերունդներից
ժանանգած գեղարվեստական ստեղծագործության
տրադիցիաներով խիստ բազմապիսի ազգային
շատ գրականությունների աչսպիսի միասնությու-
նը հաստատավեց սոցիալիզմի հաղթանակի համար
մղված պայքարում ժողովուրդների կենսական
շահերի ընդհանրության, գրողների գաղափար-
ական ձգտումների, մարքս-լենինյան էսթետի-
կական հայացքների ընդհանրության, սոցիալիս-

տականն ունակիզմի մեթոդի, կոմունիստական պարտիականութեանն ու ժողովրդայնութեան սկզբունքները ընդհանրութեան հիման վրա:

Տարբեր ազգութեանները խոսքի տալանդաւոր վարպետները՝ գրական միասնական պրոցեսում աշխատի սննախընթաց ձևով համախմբելու մեջ արտասահմանյան երկրների առաջադիմական գրական հասարակայնութեանը (և իհարկէ ոչ միայն գրական հասարակայնութեանը) տեսնում է ՍՍՌՄ ժողովուրդների մեծ բարեկամութեան հզոր ուժը: Արտասահմանի առաջադիմական գրողների համար սովետական բազմազգ գրականութեան կենսական հիմքը բացահայտում է նրանով, որ համաժողովրդական հոգատարութեան պայմաններում, սոցիալիստական հասարակութեան պայմաններում գրականութեանը կարող է անընդհատ զարգանալ և միաժամանակ հանդես գալ որպէս ակտիվ գործող ազգակ բոլոր կըրայրական ժողովուրդների կյանքում: Ինչպէս 1952 թվականին նկատեց բրազիլիական հայտնի գրող ժորժի Ամադուն, «սովետական ժողովուրդը հոգատարութեամբ ու սիրով է շրջապատում իր գրողներին ու արվեստի աշխատողներին, սովետական գրականութեանն էլ իր հերթին ակտիվորէն ազգում է Սովետական Միութեան ժողովուրդների կյանքի վրա»¹:

¹ Տե՛ս «Սովետական գրականութեանն արտասահմանում» հոդվածը, «Նովի միր» ամսագրի 1954 թ. № 12-ում, էջ 233:

Մեծ նշանակութիւն ունի սովետական գրողների անձնական շփումը արտասահմանյան գրական գործիչների հետ: Ապացուցելու համար կարելի է վկայակոչել ուղբելի գրական ու հասարակական հայտնի գործիչ Շարաֆ Ռաշիդովի Հնդկաստանում կատարած շրջագայութեան տպավորութիւնները: Ահա թե ինչ է պատմում նա.

«Սովետական առնականացած ու ամբապընդված բազմազգ գրականութիւնը վստահ անցավ մեր Հայրենիքի սահմանը և այնտեղ՝ արտասահմանում ձեռք բերեց նոր, հավատարիմ ու անկեղծ ընթերցողներ և բարեկամներ: Ես անձամբ համոզվեցի դրան Հնդկաստանում կատարած իմ վերջին ուղևորութեան օրերին՝ տեսնելով, թե ինչպէս սուս դասական գրականութեան երկերի հետ միասին հրատարակված են նաև սովետական ժամանակակից գրողներին՝ Մ. Շոլոխովի, Ի. Էրենբուրգի, Կ. Սիմոնովի, Վ. Վասիլևսկայայի, Ա. Ենիի, Մեհթի Հուսէյինի, Գ. Գուլիայի գրքերը: Ես իմ «Հաղթողներ» վիպակը կատարյալ բան չեմ համարում, բայց ինձ համար հաճելի էր իմանալ, որ դա էլ թարգմանվում է Հնդկաստանում: Հնդիկները մեր գրքերի միջոցով ուզում են ավելի մոտիկից ծանոթանալ սովետական մարդկանց, նրանց կյանքին ու կենցաղին, և դա չի կարող չուրախացնել մեզ:

...Ես շատ հանդիպումներ ունեցա հնդիկ գրողների հետ, բայց ամենաձնապէս անմոռաց

կմնա երկու շանդիպում՝ Գեղիում՝ Հնդկաստանի
բոլոր ծայրերից եկած գրողների հետ:

...Սկսվում է ամմիջական, բարեկամական
զրույց: Ես խոսում եմ ուսա գրականության, ազ-
գային գրողների ստեղծագործական հաջողություն-
ների, մեր գրականությունների բարեկամության
մասին: Գրողները լսում են ազահուլթյամբ, ուշա-
դիր, ջանալով ոչ մի խոսք չասել: Իսկ հետո հարց-
նում են.

— Իսկ ի՞նչ լեզվով եք գուք գրում. ուստերե՞ն:

— Ոչ, ուզրեկերեն:

— Ուրեմն ձեր գրքերը կարդում են միայն
ձեր սեսպուրլիկայո՞ւմ:

— Ոչ. մեզ մոտ լայնորեն տարածված է ազ-
գային որևէ լեզվից թարգմանել ուստերեն և մեր
բոլոր սեսպուրլիկաների լեզուներով:

Ես խոսում եմ այն համաժողովրդական մաս-
տաշահանության մասին, որ վայելում են այնպիսի
գրողներ, ինչպես Սամեղ Վուրդունը, Արգուլլա Կա-
խարը, Բերդի Քերրարահը, Ալեքսանդր Կոռնեյչու-
կը, Միրզո Թուրսունդաղեն, թվում եմ նաև, թե
բանի լեզվով են թարգմանված Մուխթար Աուեզո-
վի, Մեհթի Հուսեյնի, Գոնչարի, Այրեկի գրքերը: Եվ
մի գրողի կրճաից պոսթկում է.

— Բախտավորությո՞ւմ է դա:

Հնդկաստանը նույնպես բազմաշեղու երկիր է,
սակայն հնդիկ գրողները՝ բազմադարյան գրական
հարստություն ժառանգած այդ տաղանդավոր վար-

պեաները, երկար ժամանակ սուրում էին իրարից
անջատ. այդ անջատվածությունը ծանր ժառան-
գություն է անցյալի, հետևանք գաղութարարների
բաղաբախանության, որոնք բաժանում էին, սր-
պեսպի իշխեն:

... Հնդիկ գրողների հետ ունեցած իմ գրույց-
ները մի անգամ ևս ցույց տվին, թե որքա՞ն ջերմ է
հնդիկների սերը սովետական ժողովրդի նկատ-
մամբ, որքա՞ն շատ են նրանք հետաքրքրվում
մեր երկրով:

Այժմ վերհիշելով այդ եղբայրական սիրո զըր-
անորումները և այն, թե փնչպիսի՞ հավանություն
տվող ուշադրությամբ էին լսում հնդիկ գրողները
իմ պատմածները մեր կյանքի, իրենց բարեկամու-
թյամբ երջանիկ սովետական գրողների ստեղծա-
գործության մասին՝ ևս հպարտություն ևմ զգում
մեր միասնական, բազմազգ գրականության հա-
մար, մեր մեծ, հզոր, իր ուժերին և իր ապագային
վստահ սովետական միաձույլ ժողովրդի համար:

Հոկտեմբերի նվաճումներից մեծագույնը՝ սո-
վետական ժողովուրդների բարեկամությունը, այժմ
օգնում է մեզ նորանոր բարձունքներ նվաճելու
կոմունիզմի մատուցներում¹:

Ուսանելի է նաև սովետական բազմազգ գրա-
կանության փորձը սրտկատարական ինտերնացիո-

¹ Շ ա ր ա ֆ Ռ ա շ ի ր ո վ, Միասնական ու բոզ-
մազգ, «Լիտերատսոբընայա գաղետա», 1956, հունվարի 1:

նալիզմի՝ միջազգային կապերը զարգացնելու
այդ կենարար հիմունքի գաղափարների գեղար-
վեստական մարմնավորման գործում:

Ինչպես ընդգծված է ՍՄԿՊ Կենտրոնական
Կոմիտեի Գրողների Համամիութենական Երկրորդ
Համագումարին ուղղած ողջունչի մեջ, «սովետա-
կան դրականությունը նվաճել է արտասահմանյան
բազմամիլիոն ընթերցողների ճանաչումը նրանով,
որ միշտ հանդես է գալիս ի պաշտպանութուն աշ-
խատավորների շահերի, ի հակադրութուն իմպե-
րիալիստական մարդատյաց գաղափարախոսու-
թյան՝ պաշտպանում է հումանիզմի, խաղաղու-
թյան և ժողովուրդների բարեկամության համար
պայքարելու գաղափարները, համակված է մարդ-
կության պայծառ ապագայի նկատմամբ ունեցած
լավատեսական հավատով»¹:

Առցիալիստական լայերի և ամբողջ առաջա-
դեմ մարդկության ավանգարդում հանդես եկող
ՍՍՌՄ ժողովուրդների ինտերնացիոնալ դիտակ-
յության աճը իր ճշմարտացի արտահայտութունն
է գտել եղբայրական ժողովուրդների դրականու-
թյան մեջ: Այսպես, պատերազմի և հետպատե-
րագմյան տարիներին, սովետական ժողովրդի
միջազգային կապերի ընդլայնման շնորհիվ, գրող-
ներն սկսեցին ավելի մեծ ուշադրութուն դարձնել
պրոլետարական ինտերնացիոնալիզմի թեմաների

¹ «Պրավդա», 1954, գեղեցեմբերի 16:

դեղարվեստական մշակմանը: Արտասահմանյան երկրների աշխատավորների հետ համերաշխ լինելու վեհ զգացմունքով, նրանց ուսուցիչին արագիցիաների և ազգային կուլտուրայի նկատմամբ անկեղծ հարգանքով և խմբերիալիստական անակցիայի հանդեպ անհաշտ ատելությամբ են սուղորված այդ թեման շոշափող շատ ու շատ ստեղծագործություններ՝ ադրբեջանցի գրող Մ. Իբրահիմովի «Կգա օրը» և հայ արձակագիր Գ. Սևունցի «Թեհրան» թեմատիկ հարադատություն ունեցող վեպերը, ուկրաինացի բանաստեղծ Մ. Բաժանի «Անգլիական տավարությունները», Պ. Տիչինայի բանաստեղծությունները Բուլղարիայի, Մ. Ռիլսկու բանաստեղծությունները Չեխոսլովակիայի մասին, Միրզո Թուրսունյազեի բանաստեղծությունները արտասահմանյան Արևելքի մասին, Վրաց պրամատուրգ Ի. Մոսաշվիլու «Զրասույզ քարեր» պիեսը, Ա. Վենցլովացի և Գ. Լեոնիձեի բանաստեղծությունները Հունգարիայի, Լեհաստանի ու Գերմանիայի մասին, Ս. Վուրդունի «Նեգրը խոսում է» շափածո պամֆլետը, Ս. Ռուստամի «Երկու ափ» բանաստեղծությունների ցիկլը, կիրգիզ բանաստեղծ Աալի Թոքոմբակի «Հանդիպում Չինաստանում» պոեմը, զուլգան բանաստեղծ Յասըր Շիփազի «Նամակ Շանսից» պոեմը, լատվիական գրող Ժ. Գրիվայի «Պիրենեյան լեռներից այն կողմ» դրբը, բելսուս բանաստեղծներ Մ. Տանկի «Աշխարհի օրագիրը» և Ա. Կուլեշովի «Հասարակ մար-

յիկ» գրքերը, լիտվացի բանաստեղծ Է. Մեժեկայ-
թիսի «Նոբայրական պոեմը», տաջիկ Միրսայիզ
Միրջաբարի «Անճնազանդ Փանջը» և ուրիշ շատ
երկեր:

Թե ինչպիսի դեղարվեստական վարպետու-
թյամբ է մշակվում պոլեոտարական ինտերնացիո-
նալիզմի և սովետական հայրենասիրության միաս-
նակամ թեման, այդ մասին կարելի է որոշակի
պատկերացում կազմել Միրզո Թուրսունզադեի
«Ասիայի ձայնը» հիանալի պոեմից (1957):

Հնդկաստանի մասին հոգեհույզ կրթով հա-
մակված բանաստեղծությունների ցիկլից հետո
(որոնք մտել են դպրոցական քրեստոմատիաների
մեջ), տաջիկ բանաստեղծը Հնդկաստանում, Պա-
կիստանում և Իրանում շրջազայելուց ստացած
անձնական տպավորությունների հիման վրա կեր-
տեց ասիական երկրների ներկա զարթոնքի և ազ-
դային վերածնության ընդհանրացած լիրո-
ւպիկական պատկերը: Հենվելով Չինաստանի,
Հնդկաստանի, Բիրմայի, Ինդոնեզիայի, Եգիպտոսի
հին ժողովուրդների անցյալի ու ներկայի տեսանկյնի
հակապատկերի վրա՝ սոցիալիստական ռեալիզմի
արվեստագետը բացահայտեց դասակարգի իմ-
պերիալիստների բազմազարյան արքայապետության
դեմ ուղղված ազգային-ազատագրական շարժման
վերելքի պատմական օրինաչափությունը: Տաջիկ
և Սովետական Արևելքի մյուս ժողովուրդների վե-
րածնության հիանալի արդյունքների քաջատեղյա-

կուլթյամբ հարստացած բանաստեղծը անխախտ
կերպով հավատում է արտասահմանյան Արևելքի
բազմամիլիոն զանգվածների ստեղծագործական
անմահ հանձարին, հուզմունքով լսում նրանց սրտի
բարբախումը, տեսնում նրանց հերոսական այսօրը
և արևաշող վաղը: Նա անկեղծորեն հրձվում է նորի
ծնունդը տեսնելով այնտեղ, ուր դարեր շարունակ
ստրկուլթյոժներ, լճացածությունը, աղքատությունն
ու հեռամնացությունն էին տիրապետում: Ինտեր-
նացիոնալիստ ու հումանիստ բանաստեղծը ամ-
բողջ հոգով այն մարդկանց հետ է, ովքեր վստահ
ու վճռական հարթում են լուսաշող ապագայի ու-
ղին:

Թե ինչպես է արտասահմանում խորապես ըն-
կալվում և զնահատվում սովետական գրականու-
թյան մեջ հաղթանակած ազատագրված ժողովուրդ-
ների բարեկամության թեման, կարելի է դասել
ականավոր Ֆրանսիացի գրող Լուի Արագոնի հու-
լաթաթավ կելույթից, որ ունեցավ նա 1949 թ. սեպ-
տեմբերի 21-ին, Մոսկվայի Միությունների տան
Այոճազարդ դահլիճում, տաջիկական գրականու-
թյան տասնօրյակի բացմանը նվիրված երեկույ-
թին¹: ՍՍՌՄ ժողովուրդների լայն դարգացած գրա-

¹ 1955 թվականին Փարիզում լույս է տեսել Լուի Արագոնի «Սովետական գրականությունները» գիրքը, որտեղ հեղինակը փաստական հարուստ նյութի հիման վրա ցույց է տալիս, թե ինչպես ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամության շնորհիվ պատմական կարճ ժամանակա-

կան կապերի մեջ, որ այնքան կոնկրետ մարմնավորվել էին տաջիկական գրականության մոսկովյան տասնօրյակում, Լուի Արագոնը տեսավ այն սոցիալական ու հոգևոր հարաբերությունների կենդանի նախատիպը, սրտնք կարող են և պետք է հաստատովին ամբողջ աշխարհի ժողովուրդների միջև, մասնավորապես Ֆրանսիական ժողովրդի ու պաղոթային երկրների ժողովուրդների միջև:

Ֆրանսիայի և ամբողջ աշխարհի խաղաղության կողմնակիցների անունից «Կոմունիստներ» էպոպեի հեղինակը սրտագին ողջունեց տաջիկական դեակամություն տասնօրյակի բացումը որպես «մեծ ապացույց այն լավագույն ու խաղաղ աշխարհի գոյություն, որի համար պայքարում ենք մենք», որպես «լավագույն կյանքի, լայնահորդ ու բարձր կուլտուրայի համար, նոր մարդու ծնունդի համար ժողովուրդների համագործակցության օրինակ»¹:

Լուի Արագոնը տաջիկական գրականության տասնօրյակի մասնակիցներին ու հյուրերին հաղորդեց իր նվիրական խոհերը: Նա վերհիշեց հիա-

միջոցում ծագիկցին նրանց ազգային լիարժեք գրականությունները և բնագծում, որ արտասահմանյան հասարակայնությանը տակափին ոչ բավականաչափ հայանի նրանց հարուստ փորձը համաշխարհային նշանակություն ունի:

¹ Լուի Արագոն. Վերակենդանացի կյանքը և տեսնել խաղաղություն, «Պրավդա», 1949, սեպտեմբերի 24:

լերչան արշունարբուս սեփմի դեմ Ֆրանսիացի բու-
յաշունչ հայրենասերների մղած հերոսական պայ-
քարի տարիները և պատմեց, թե ինչպես այն ժա-
մանակ նրանք ողբշնչվում էին ժողովուրդների եղ-
բայրութեան իդեալով, որ արդեն կենսագործված էր
Սովետական երկրում: Լուի Արագոնը հարարտ զգա-
լով իրեն այն դիտակցութեանից, որ ինքը պատ-
կանում է հազարամյա կուլտուրայի մեծ տրագի-
յիաներ և ուսուցիչին փառահեղ փորձ ունեցող
մի ժողովրդի, ասում էր.

«Մեր բոլոր երազանքների մեջ կար մեկը, որի
վրա ուղում եմ կանգ առնել: Թվում էր, թե օտար-
երկրյա օկուպացիայի ահալոր փորձին ենթարկ-
ված այն ժամանակվա Ֆրանսիայում ո՞վ կարող
էր հասկանալ հեռույալ մարքսիստական ճշմար-
տութեան ամբողջ խորութեանը՝ այն ժողովուրդը,
որ ճնշում է մի այլ ժողովրդի, չի կարող ազատ
լինել: Երբ մենք երազում էինք ապագայի մասին,
ամենքս էլ ուղում էինք, որ Ֆրանսիայի ազատա-
գրութեան ժամը հնչի, ինչպես Կարմիր հրապարակի
ժամացույցը, սրպես Ֆրանսիական գաղութարար-
ների կողմից հնազանդեցված բոլոր ժողովուրդ-
ների ազատագրութեան ժամ. ամենքս էլ կարծում
էինք, որ Ֆրանսիայի ազատագրումը իր ժողովրդի
կողմից կզատնա Ֆրանսիական գաղաթիների ժողո-
վուրդների ազատագրութեան ազգանշանը: Եվ
մենք երազում էինք, որ նրանց ու մեր միջև կըս-
տեղծվի այն ազատ ասոցիացիան, ինչպես, հետևե-

լով Հենինի ուսմունքին, բուշեիկներն էին կարողացել հնարավոր դարձնել առա մեծ ժողովրդի բարեկամությունը նվրոսլայի ու Ասիայի եզրայրական ժողովուրդների հետ: Մեր ազատությունը կլինի նաև մյուս ժողովուրդների ազատությունը և ինքնին անիմաստ է առանց նրանց ազատության»:

Անդրադառնալով պատերազմի տարիների ֆրանսիական իրականությանը, Լուի Արագոնը գրա մեջ գտնում էր որոշակիորեն տեսանելի առանձին նախադրյալներ՝ իրականացնելու Ֆրանսիայի ստաջավոր մարդկանց երազանքները:

Լուի Արագոնը, բնորոշելով խաղաղության կողմնակիցների ժամանակակից համաշխարհային շարժման վիթխարի թափը, նորից է գիմում տաջիկական գրականության մոսկովյան տասնօրյակին և պրոլետարական ինտերնացիոնալիզմի իդեալների հաղթանակի նկատմամբ առաջադեմ մարդկության ամենահազվ ձգտումների լույսի տակ բացահայտում այդ հասարակական-գրական իրարձության պատմական նշանակությունը.

«Եվ այն ուղիում, ուր կանգնած ենք մենք հիմա խաղաղության դրոշի ներքո՝ մեր առջև ունենալով Սովետական Ռուսաստանի սլայժառ օրինակը, տաջիկական գրականության այս տասնօրյակը Մոսկվայում խոր իմաստ ունի ինձ համար: Ես սոսկ գրող եմ, ինչպես և դուք: Սակայն վերջերս ես Մարտիկոջից աեղեկություն ստացա այլ

գրողների մասին, որոնք հարկադրված են տպրել
ընդհատակում, որովհետև նրանց երկիրը գտնվում
է ֆրանսիական գրոշով քողարկված օտարերկրյա
օկուպացիայի իշխանության ներքո: Մենք «Էկտր
ֆրանսեզ» թերթում տպեցինք այդ գրողներից մեկի
հոդվածը: Մարտիկոյում գրել չի կարելի, այնտեղ
սչինչ չեն տպագրում: Այժմտեղ քողարկվելով Ֆրան-
սիայի անունով՝ ոչնչացնում են մարտիկյան կուլ-
ուրայի մեծ արագիցիաները, որ դեռևս միջին
դարերում փայլում էր Ավերոնի (Իբն Ռաշիդ)
անունով...

Եվ մենք՝ այն գրողներս, որոնց ծանոթ է վեր-
ջին տարիներին ընդհատակը, մտածում ենք մեր
մարտիկացի եղբայրների մասին, որոնք ստիպված
են թաքնվել, որպեսզի գրեն, որպեսզի տպրեն, որ-
պեսզի իրենց ամբողջ ժողովրդին ասեն ճշմար-
տությունը ճիշտ այնպես, ինչպես դեռևս երեկ
անում էինք մենք: Նրանց մասին եմ ես մտածում
այստեղ՝ այս Սյունապարդ դահլիճում, որտեղ ուռս
և տաջիկ գրողները հավաքվել են մոսկովյան լսա-
րանի տաջի: Նրանց մասին եմ ես մտածում այս
երեկո և մտածում եմ այն ժամանակի մասին, երբ
մենք՝ Մարտիկոյի և Ֆրանսիայի գրողներս, հնա-
րավորություն կունենանք իրար հանդիպելու:

Ահա թե ինչու իր ճառի եզրափակման մեջ
էուի Արագոնը, որպես Վիլյոնի ու Դիգրոյի, Մո-
լիերի ու Հյուգոյի, Բալզակի ու Ռեմբոյի, Ստեն-
դալի ու Ապոլինների, Զոլայի ու Վալեսի, Բարբյուսի

ու Ռոմեն Ռուլանի (այս անունները թվարկեց ինքը՝
Լուի Արագոնը) երկրի լիիրավ ներկայացուցիչը,
սրաազին շնորհակալության հայտնեց Մոսկովայի
ու Սաալինարազի մարզկանց, աշխարհի մեկ վե-
ցերորդ մասին ֆրանսիական և բոլոր օտարերկրյա
առաջադեմ գրողներին արված այս կենդանի և ու-
սանելի օրինակի համար:

Լուի Արագոնի ճառը, որ համակված էր ամ-
բողջ աշխարհի ժողովուրդների հանուն իրենց սո-
ցիալական ու կուլտուրական համագործակցու-
թյան համախմբվելու ինտերնացիոնալ անհրա-
ժեշտության պաթոսով, արժեքավոր փաստա-
թուղթ է: Դա բացահայտում է ՍՍՌՄ ժողովուրդ-
ների ստեղծագործական բարեկամության համաշ-
խարհային պատմական նշանակությունը և այդ
բարեկամության գործոն, կազմակերպական գերը
ժամանակակից համաշխարհային գրական պրո-
ցեսում:

Տարեցատրի ավելի է տարածվում ու աշխարհի
պրողրեսիվ գրականություններում հաստատվում
սոցիալիստական սեպտիմի մեթոդը: Այդ մեթո-
դը զարգանում է տարբեր երկրների կոնկրետ
սցեսիոնական իրակացություն հիման վրա, զուգորդ-
վում է չտրաքանչյուր ժողովրդի նախորդ սերունդ-
ներից ժառանգած արագիցիաներին ու արտասահ-
մանյան ամեն մի երկրում ձևաք է բերում ուրույ-
նության բացահայտորեն տեսանելի դժեր:

• Ամբողջ աշխարհի առաջադիմական գրողներին համախմբելու տենդենցը արտահայտություն է դառնում նաև նրանց փոխհարաբերություններէ կազմակերպական կենտոնակ ձևերի մեջ՝ խաղաղության կողմնակիցների համաշխարհային շարժման մասնակցելը, միջազգային կոնգրեսներ ու կոնֆերանսներ գումարելը, գեղարվեստական երկերի թարգմանություններ հրատարակելը, տարրեր երկրներում շրջադաշելը, գրքերի միջազգային ցուցահանդեսներին մասնակցելը, հասարակական-գրական բնույթի միջազգային տարրեր միջոցառումներ համատեղ իրագործելը և այլն.

ՍՍՌՄ ժողովուրդների գրականությունների ստեղծագործական կապերը և նրանց միջազգային բարեկամական հարաբերությունները մարդկության գեղարվեստական զարգացման օրինաչափություններից մեկի ցայտուն գրստորումներից են:

Հավակնություն շունենալով տալ մեր երկրի բազմազգ գրական պրոցեսի բովանդակությունն ուսումնասիրելու բնագավառում արդյունավետ կերպով աշխատող սովետական գրականագետների մեծ ջոկատի գիտահետազոտական բազմապիսի գործունեության ծրագրի սպառիչ սահմանումը՝ մենք նպատակահարմար ենք համարում մեր ուժերի ներածի շափով նշել այդ ուղղությամբ լինելիք գիտական կոլեկտիվ աշխատանքի կոնկրետ խնդիրներից կարևորագույնները: Առանձին ուսպուրլիկաների գրականագետների փորձն ու

նախաձեռնութիւնը անշուշտ թույլ կտան ոչ միայն լրացնել առաջարկվող միջոցառումները, այլև միաժամանակ առաջ քաշել բազմաթիվ նոր պրոբլեմներ, որոնք կթելադրեն այս կամ այն ժողովրդի հասարակական-գրական կյանքի կոնկրետ պայմանները, հատկապես նրա գրական կապերի մասշտաբներն ու բնույթը:

Ամենից առաջ խիստ կարևոր է փաստամատիկ կերպով ընդհանրացնել ուսու և եզրայրական ժողովուրդների գրականութիւնների փոխադարձ կապերի արդեն բաւականին նշանակալի փորձը: Այս պիտական խնդրի արդիականութիւնը հատկապես ընդգծել է Ն. Ա. Խրուշչովը «Գրականութեան և արվեստի սերտ կապի համար ժողովրդի կյանքի հետ» ծրագրային հայտնի փաստաթղթում:

«Ռուսաստանյան ֆեդերացիան իրավամբ վայելում է Սովետական Միութեան բոլոր եզրայրական ժողովուրդների հարգանքը: Ռուսների հետ միասին ՍՍՌՄ բոլոր սոցիալիստական ազգերի մարդիկ սիրով ասում են՝ մայր Ռուսիա: Հայտնի է, որ դեռևս նախառևույցուցիտն ժամանակաշրջանում ուսու դեմոկրատական ինտելիգենցիայի ականավոր ներկայացուցիչները սերտորեն կապված էին Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ինտելիգենցիայի ներկայացուցիչների հետ, ակտիվորեն հանդես էին գալիս ազգային ճնշման դեմ, բարերար ազդեցութիւն էին գործում տարբեր ազ-

գերի ու ժողովուրդների կուլտուրայի զարգացման վրա»:

Տվյալ պրոբլեմատիկայի վերաբերյալ մենագրական մասնամասն աշխատություններ պատրաստելը թույլ կտա այդ գիտական աշխատության մեջ եղած առավելագույն արժեքավորն ու նշանակալին դարձնել ընդհանուրի սեփականութուն և նկատված սխալներն ու թերությունները արագ վերացնել:

Անհրաժեշտ է շարունակել այն սլառամագրական փաստական նյութի հայտնաբերումն ու հավաքումը, որը բնորոշում է գրական բազմազգ պրոցեսի մասնակիցների վաղեմի կապերը մեր երկրում թե՛ նախառևույցցիտն և թե՛ մանավանդ սովետական շրջանում: Արխիվների հետազոտումը, տարբեր լեզուներով հրատարակված պարբերական մամուլի ուսումնասիրությունը, տպագրված և ոչ տպագրված նամակագրական և մեմուարային ժառանգության վերլուծումը ամուլայման բավականաչափ արժեքավոր հայտնագործություններ կանեն, կօգնեն լրացնելու մեր պատկերացումները եղբայրական ժողովուրդների նկատմամբ՝ ուս պրոզների ունեցած վերաբերմունքի մասին, ուս գրականության հանրաճանաչ բարերար գերի մասին Ուկրաինայի, Բելոռուսիայի, Հայաստանի, Վրաստանի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, Ադրբեջանի, Ղազախստանի, Ռաթարիայի, Չուվաշիայի և այլ ժողովուրդների սեալիստ գրողների ստեղծագոր-

ծական ձևալորման գործում: Կրացահայտլեն նան նար կողմեր հենց ուս կլասիկների հարստացման պրոցեսում:

Ծայր աստիճանն անհրաժեշտ է հրատարակել բիրլիոգրաֆիական առաջին տեղեկատուն, որն ընդունակ լինի կողմնորոշել գրականագետներին և սովետական հասարակայնությանը մեզ հետաքրքրող միջազգային գրական կապերի վերաբերյալ հազարավոր տպագիր աղբյուրներում: Սովետական բիրլիոգրաֆիական գիտությունը ունի պատրաստված կադրեր կուլեկտիվ կերպով իրագործելու համար այդ ինքնատիպ աշխատանքը՝ ՍՍՌՄ ժողովուրդների լեզվով եղած համատարածախան նյութերն ընդգրկող բիրլիոգրաֆիական համահավաք հրատարակությունը քննադատական հակիրճ անստացիաներով հանդերձ: Այդպիսի գիրքը որոշ իմաստով կլինի ոչ միայն կատարվածի հանրագումարը, այլև կօգնի որոշելու երրայրական ժողովուրդների պատմա-գրական փոխհարաբերությունների ուսումնասիրման պլանաչափորեն կազմակերպված գիտական գործունեության ամենից ավելի ետ մնացող օգակները:

ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայում և նրա տեղական ֆիլիալներում, միությունական սեպուրլիկաների Գիտությունների ակադեմիաներում, ավտոնոմ սեպուրլիկաների լեզվի և գրականության խնամխոտումներում ինտենսիվ կերպով կուլեկտիվ աշխատանք է կատարվում ազգային գրականու-

Յլյունների պատմութիւնը գրելու ուղղութեամբ: Այս բնագավառում արդեն գրականագիտական: զգալի փորձ է կուտակված և Կոմունիստական պարտիայի ղեկավարութեամբ հաղթահարված են գերագանցորեն բուրժուա-հոսիոնալիստական կարգի շուրջ Յերութիւնները: Չափազանց կարևոր է արագացնել այդ պատմութիւնները գրելը՝ պատշաճ տեղ հասակացնելով դրանց մեջ մեր երկրի գեղարվեստական բազմազգ կուլտուրայի զարգացման գործում անցած դարի ուսու դասական և սովետական գրականութեան կատարած գերի կոնկրետ լուսարաններ և նրանց փոխհարստացմանը: Նույնը պետք է ասել նաև ազգային ականավոր գրողների էջանրին ու ստեղծագործութեանը վերաբերող մեծագրական հետազոտութիւնների մասին, որոնք վերջին տարիներին ավելի հաճախակի են լույս տեսնում:

Լիովին արգարացրել է իրեն և պետք է բուշոր գրականագիտական հիմնարկութիւնների գիտական գործունեութեան պլանի մեջ մտնի «Ռուսուկրասինական գրական կապերը», «Գոպուր և ադրբեջանական գրականութիւնը», «Մ. Գորկին և ՍՍՌԻՄ ժողովուրդների գրականութիւնը» տիպի կոլեկտիվ ժողովածուների պատրաստումը: Այդպիսի թեմատիկ ժողովածուների խելացիորեն մշակված ծրագրերը կարող են խիստ բազմազան լինել: Իսկ դրա պլանավոր նպատակն այն է, որ մեթոդոլոգիական ճիշտ գիրքերից ներկայացվի ու

րնորոշվի եղբայրական գրականությունների գրողների գաղափարական-ստեղծագործական փոխհարաբերությունների զարգացման պրոցեսը, ուստի գրականությանը՝ այս կամ այն ազգային գրականության հետ, առանձին ուստի կլասիկների ազդեցությունը վերջինիս կամ նրա առանձին խոսքի վարպետների զարգացման վրա, պարտադիր կերպով հաշվի առնելով անշուշտ յուրաքանչյուր գրականության ազգային ուրույնությունը և անհրաժեշտաբար երևան բերելով ստեղծագործական փոխհարստացման արդյունքները: Այդպիսի ժողովածուների ժամանակագրական շրջանակները պետք է ընդգրկեն ոչ միայն նախառևույցուցիտ շրջանի, այլև սովետական տարիների գրական երևույթները:

Սովետական գրականության զարգացման տվյալ էտապում արդեն չի կարելի սահմանափակվել յուրաքանչյուր եղբայրական ժողովրդի գրականության համար ուստի գրականության ունեցած նշանակության մասին դեկլարատիվ հայտարարություններ անելով: Գրականագետները կոչված են այժմ գիտական առավելագույն մանրամասնությամբ ուսումնասիրելու տվյալ գրականության կապերի ամբողջ պրոցեսի բովանդակությունը, նրա առանձին ներկայացուցիչների կապերը ուստի գրողների հետ: Այդ պրոցեսն ուսումնասիրելու ճանապարհին կպատահեն բավականին դժվարություններ, որոնք կարող են արագ հաղթահարվել,

Եթե արդյունավետ աշխատող հետազոտողների արժեքավոր փորձը ժամանակին համամիութենական սեփականություն դառնա:

Հասունացել է միասնական «Սովետական բազմազգ գրականության պատմություն» գրելու անհետաձգելի անհրաժեշտությունը: Այս խնդրի պրակտիկ իրագործման սկիզբը կարող է լինել «Սովետական բազմազգ գրականության պատմությունը կառուցելու սկզբունքները» թեմայի մշակումը, որ պլանավորված է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Ա. Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի համար:

Առաջարկվող պրոբլեմատիկան սպառիչ չէ, այլ պատկերացում է տալիս կատարվելիք գրականագիտական հետազոտությունների ուղղության ու մասշտաբների մասին:


Պատմա-գրական ու տեսական հետազոտությունների իրագործումը հնարավոր է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի, միութենական ուսուցիչականների Գիտությունների ակադեմիաների և կենտրոնական ու ծայրամասային այլ գիտահետազոտական կազմակերպությունների գործունեության պարասպորտ կոորդինացմամբ: Արանից էլ ծաղում է համամիութենական ու ուսուցիչական այլ կազմակերպվող ու պարբերաբար տեղի ունեցող դիտական սեսիաների, դիսկուսիաների, կոլեկտիվ կերպով թեմատիկ ժողովածուներ պատրաստելու և այլն պահանջը: Բնդհանուր ջանքերով

միանգամայն հնարալուր է փրագործել դիտահե-
տապտական գործունեութեան մեծ ծրագիրը մեր
Հայրենիքի ժողովուրդների գրական կապերն ու-
սումնասիրելու և բազմազգ գրական պրոցեսի թե՛
անցյալում, թե՛ սովետական շրջանում բազմակող-
մանիօրեն բնութագրելու ասպարեզում:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

էջ

1. Միջազգային գրական կապերը սրպես զեղարվեստական ստեղծարժու.թյունը պարզացնելու օրինաչափություններից մեկը	5
2. ՍՍՌՄ ժողովուրդների գրական կապերի հիմնական օրինաչափությունները	29
3. Բազմազգ գրական պրոցեսի բնորոշ առանձնահատկությունները նախաստեղյուցիան Ռուսաստանում և սովետական շրջանում	84
4. Եզրայրական ժողովուրդների գրականությունների փոխհարստացման ձևերն ու արդյունքները	100
5. Սովետական գրողների համամիութենական համագումարները սոցիալիստական ազգերի զեղարվեստական փորձը փոխանակելու զպրոց. են	127
6. ՍՍՌՄ ժողովուրդների գրական կապերի համաշխարհային նշանակությունը	141









ԳԻՆԸ 2 Ռ. 50 Կ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0033836

A

543